




ԶԱՄԱՐՈՒՆ





ԼԳ
ՏԱՐԻ




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Մ...ԻԿ




1976



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻԶԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԷԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Վեհափառ Հայրապետի հրավերով սույն թվականի մարտի 9-ին, երեք-շաբթի օրը, գիշերը, ժամը 24-ին, Երևան է ժամանում Երուսաղեմի հայոց **տ. Եղիշե սրբազան պատրիարքը՝** որպես Նորին Սրբության գահակալության 20-ամյակի առթիվ կազմված հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի նախագահ:

Նորին ամենապատվությանն ընկերակցում էին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը՝** որպես հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի անդամ, և Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ, Ժառանգավորաց վարժարանի վերատեսուչ **տ. Ծահե արքեպ. Աճեմյանը:**

Մոսկվայում, հանուն Հայոց Հայրապետի, տ. Եղիշե սրբազան պատրիարքին և տ. Սերովբե ու տ. Ծահե արքեպիսկոպոսներին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի դիվանապետ **տ. Արսեն եպս. Բերբերյանն** ու Մոսկվայի հայոց առժամյա հոգևոր հովիվ **տ. Անանիա վրդ. Արարաջյանը:**

Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերին, հանուն համայն Ռուսիայի Նորին Սրբություն **Տ. Պիմեն Պատրիարքի,** Մոսկվայում դիմավորում և բարի գալուստ են մաղթում նաև **տ. Սերաֆիմ** ու **տ. Պիտիրիմ արքեպիսկոպոսները:**

Երևանի օդանավակայանում տ. Եղիշե սրբազան պատրիարքին և տ. Սերովբե ու տ. Ծահե արքեպիսկոպոսներին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը,** և Գեղարդ վանքի տեսուչ **տ. Վահան եպս. Տերյանը,** տ. Մասիս վրդ. Գալստյանը և Մայր Աթոռի սարկավագները:

Սրբազան պատրիարք հորը օդանավակայանում ողջունում և բարի գա-

լուստ է մաղթում նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը**:

Մայր Աթոռի մեծապատիվ հյուրերն առաջնորդվում են Երևան, հայրապետական վիլլա:

Մարտի 10-ին, չորեքշաբթի օրը, ժամը 11-ին, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե և տ. Ծահե սրբազանների ընկերակցությամբ, ժամանում է Մայր Աթոռ ու, Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհաբանում ջերմ սիրով և ողջագործմամբ ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից:

Մարտի 11-ին, հինգշաբթի օրը, ժամը 13-ին, Վեհաբանում տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր նախագահությամբ գումարվում է հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի Ա. հիստը, որին ներկա են լինում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը՝ որպես անդամներ, տ. Ծահե արքեպ. Աճեմյանը՝ որպես խորհրդական, և կենտրոնական հոբելյանական հանձնաժողովին առընթեր գործադիր հանձնաժողովի անդամներ՝ Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հասիտյանն ու Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պ. Ծահբազյանը:

Մարտի 13-ին, շաբաթ օրը, ժամը 13-ին, գումարվում է Բ. հիստը: Ա և Բ. հիստերում հանգամանորեն քննության են առնվում Վեհափառ Հայրապետի գահակալությունը հանդիսավորությամբ ու միջեկեղեցական մակարդակով տոնելու վերաբերյալ կազմակերպչական հարցեր և ընդունվում համապատասխան որոշումներ:

Մարտի 12-ին, ուրբաթ օրը, ժամը 12-ին, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, ողեկությամբ տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Ծահե, տ. Արսեն սրբազանների, այցելում է Գառնիի վերականգնված տաճար և ապա ս. Գեղարդ վանք, ուր ջերմորեն ընդունվում է վանահայր տ. Վահան եպիսկոպոսի և վանական միաբանության կողմից:

Ժամը 15-ին ս. Գեղարդ վանքի տեսչարանում, ի պատիվ բարձրապատիվ հյուրերի, տ. Վահան եպիսկոպոսը ճաշկերույթ է կազմակերպում, որն անցնում է ջերմ մթնոլորտում:

Մարտի 14-ին, կիրակի օրը, բարձրատիճան հյուրերը Մայր տաճարում ներկա են լինում ս. պատարագի:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը և ջերմորեն ողջունում ներկայությունը Երուսաղեմի ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի, տ. Սերովբե և տ. Ծահե արքեպիսկոպոսների՝ արտահայտելով Իր սրտի գոհունակությունը և Մայր Աթոռի միաբանության ուրախությունը նրանց ժամանման առթիվ:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԿ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ (ԵՂԻՎԱՐԴ) ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, տ. Եղիշե սրբազան պատրիարքի Մայր Աթոռ այցելության առիթով, մարտի 14-ին Վեհաբանում կազմակերպվեց հանդիսություն՝ նվիրված նրա գրական գործունեությանը:

Սփյուռքահայ գրականության և մեր արդի եկեղեցական մատենագրության մեջ Եղիվարդն այն սակավաթիվ դեմքերից է, որի ստեղծագործությունն իր վրա է կրում դասականության դրոշմը: Իր արձակ և չափածո գործերով

նա շարունակել ու զարգացրել է մեր կրոնական գրականության և հոգևոր բանաստեղծության ավանդությունները՝ նոր բովանդակություն և նոր, ինքնատիպ արտահայտություն հաղորդելով դրանց:

Եղիվարդի ստեղծագործության առանցքն են կազմում սուրբ գրական և մեր ժողովրդի կյանքի զանազան իրադարձություններին նվիրված պատմական-ազգային, հայրենասիրական թեմաները:

Եղիվարդն իր ներաշխարհով, ապրումներով ու հույզերով որքան ներշնչված հոգևորական է, նույնքան և անկեղծ, զգայուն սրտի տեր, ջերմ հայրենասեր, ինչպիսիք եղել են մեր դասական հին գրողները:

Եղիվարդն այսօր իր բազմամյա գրական գեղարվեստական բեղուն վաստակով իր տիրական դեմքն ու դիրքն ունեցող անձնավորություն է՝ որպես բարձրաճաշակ բանաստեղծ, կորովի հրապարակագիր, հմուտ մանկավարժ և ազգային-եկեղեցական եռանդուն ու արդյունաշատ գործիչ:

Եղիվարդի գրական ստեղծագործությանը նվիրված սույն հանդիսությանը նախագահում էր **Վեհափառ Հայրապետը**: Ներկա էին **տ. Սերովքե, տ. Կոմիտաս, տ. Ծափե** արքեպիսկոպոսները, **տ. Վահան, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ** եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, «Էջմիածին» ամսագրի խմբագրական մարմինը և մայրավանքի պաշտոնեությունը:

Հրավիրյալների թվում են մայրաքաղաքի մտավորականության ներկայացուցիչներ, բանաստեղծներ, գրողներ, արվեստի և գիտության մարդիկ, գիտական, ուսումնական հաստատությունների ղեկավարներ, այդ թվում՝ Մատենադարանի, պետարխիվի, գրականության և արվեստի ինստիտուտների պրոֆեսորներ, մամուլի, ուղիղի, հեռուստատեսության թղթակիցներ, ավելի քան 300 հրավիրյալներ:

Հանդիսությանը ներկա էին նաև Լիբանանահայ օգնության հանձնաժողովի անդամներ՝ Բեյրութից, ծանոթ մտավորականներ և հասարակական գործիչներ պրոֆ. **Բարունակ Թովմաչյանն** ու **Հարություն Մերեճյանը**, որոնք ուխտավորաբար գտնվում էին Մայր Աթոռում:

Հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը**:

Հանդիսությունը բացվում է Վեհափառ Հայրապետի արտասանած Տերունական աղոթքով:

Այնուհետև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերովքե արքեպ. Մանուկյանը** հանդես է գալիս բացման հետևյալ ելույթով.

S. ՍԵՐՈՎՔԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍԺԸ

Վեհափառ Տեր,
Ամենապատիվ սրբազան եղբայր,
Հարգելի պարոն Գասպարյան,
Հոգևոր եղբայրակիցներ և
Հարգելի ներկաներ,

Ինձի համար քաղցր պարտականությունն էր ավելի շուրջ հիսուն տարիներու բարեկամության, եղբայրակցության և միևնույն իդեալին՝ Աստուծո և ազգին ծառայելու գեղուն զգացումներով է, որ կխոսիմ:

Ծակատագիրը մեզի մեր պատմական հայրենիքեն, չքնաղ վասպուրականեն, տակավին շատ մանուկ հասակի մեջ, Պաղտատի անապատները նետեց այնտեղ բախտակից ամբողջ սերունդի մը հետ, մեր ծնողներու գորգորանքեն զրկված, մատներով ավազներուն վրա Մեսրոպյան այբուբենը սորվեցանք և կիզիչ ավազներու վրա ծալապատիկ մտած մեր համեստ դաստիարակներու հմայիչ խոսքերու ազդեցության տակ մեր պատմության հերոսներեն ներշնչվեցանք և մեր անցյալի արժեքներուն ծանոթացանք, մեր մանուկ հոգիները սարսուռով լեցուցին 1915-ի Մեծ եղեռնի անմարդկային արարքները, զորս մեր մարմնույն և հոգվույն վրա կզգայինք արդեն, և այս բոլորը անջնջելի մնաց մեր միտքին և ամբողջ էության մեջ:

Տարիներ ետք բարեսիրտ հայեր և բարերար ձեռքեր Հայկական բարեգործական ընդհանուր միության անունին տակ գործող՝ հայրական հոգածությանը անապատներեն մեզ Երուսաղեմ փոխադրեցին և մենք երկուքս տասնյակ մը ուրիշ ընկերակիցներու հետ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի հոգևոր ճեմարանը՝ Ժառանգավորաց վարժարանը ընդունվեցանք՝ շարունակելու համար անապատի ավազներուն վրա սկսած մեր ծանոթությունները և հաղորդվելու մեր ազգային մշակույթին և անոր անպարտելի ոգիին:

Եվ Երուսաղեմի հայոց վանքի դարավոր կամարներուն տակ, ուր միշտ կզգացվի ներշնչող ներկայությունը մեր աստվածարյալ հայրապետներու անսասան հավատքին և անմեռ հույսին սրբազան վայրերու խորհրդավոր մթնոլորտին մեջ, ուր միշտ կլսվին Քրիստոսի ձայնին արձագանքները և ուր կկարծես քալել անոր ոտքերու հետքերուն վրայեն, և ուր միշտ կհնչե կարծես անոր աստվածային սիրտ պատգամը, այդտեղ անեցանք, և այնտեղ դարբնվեցավ մեր միտքն ու հոգին մեր ժամանակներու մեծ դաստիարակ և բանաստեղծ, մեծ պատրիարք Դուրյանի և իր հոգեծին և արժանավոր հաջորդ Թորգոմ պատրիարք Գուշակյանի ներշնչող շունչին ներքև:

Մեր ամբողջ ուսանողության շրջանին պետք է հիշել, որ Եղիվարդը Դուրյան պատրիարքի և բոլոր ուսուցիչներու ուշադրությունը գրաված էր իր բացառիկ ուշիմությամբ ու մանավանդ գրելու շնորհներով:

Եղիվարդ կամ Եղիշե վարդապետ այդ մթնոլորտի մեջ և այդ ոգիով մեծցավ, մինչ իր մյուս ընկերները մեր եկեղեցվո ծառայության կոչումով ցրվեցան աշխարհի չորս անկյունները՝ գոհացում տալու համար մեր ժողովուրդի եկեղեցական և ազգային կարիքներուն, ինքը միշտ Երուսաղեմ մնաց, եղավ ուսուցիչ, վարժարանի տնօրեն, լուսարարապետ, հասավ մինչև վանքի պաշտոններուն բարձրագույնին, բայց միշտ մնաց բանաստեղծ՝ իր բոլոր պաշտոններուն մեջ դնելով միշտ բանաստեղծի իր շունչն ու ոգին, ու այսօր ալ Երուսաղեմի պատրիարքական Աթոռին վրա կմնա տակավին գերազանցապես բանաստեղծ պատրիարքը:

Այսօր, այս հանդիսավոր պահուն, ես պիտի չանդրադառնամ իր եկեղեցական կյանքին, որ այլապես բեղուն և հատկանշական է մանավանդ Երուսաղեմի պես միջազգային սրբավայրերու և զանազան ժողովուրդներու հետաքրքրության առարկա քաղաքի մը մեջ: Միայն կարծե շեշտել, թե այդ պաշտոններուն մեջն իսկ հզոր հեղինակություն մըն է, նախանձախնդիր՝ մեր եկեղեցվո և ժողովուրդի բարոյական և հոգևոր արժեքներուն, թերևս օր մը համազգային տարողությամբ և շուքով նշվի ոչ միայն իր գրական և բանաստեղծական գործունեության, այլ որպես մեր շրջանի ամենատեղեկ եկեղեցականի և ամբողջ եկեղեցական և ազգային ծառայություններուն, որուն սիրովը տոշորեցավ, որուն սիրովը ասպրեցավ ու ներշնչվեցավ, գործեց և սքանչելի

քերթվածներ հյուսեց անոր փառքին, հաղթանակներուն և անոր ճակատագրին համար:

Այսօր այս գրական հավաքույթը նվիրված է միմիայն իր քերթողական արվեստին, բայց միայն կուգեմ շեշտել, որ Եղիվարդ՝ Եղիշե արքեպ. Տերտերյան, արժանավոր պատրիարքը հայ Երուսաղեմի առաքելական Աթոռին, մեր եկեղեցական և հասարակական կյանքին մեջ հզոր անձնավորություն մըն է՝ ուժեղ անհատականությամբ, որ իր կյանքի գինովն իսկ պատրաստ է պաշտպանելու մեր ազգային և եկեղեցական բոլոր սրբությունները:

Հակառակ նույնիսկ, եթե կներեք ինձի այս բացատրությունը, իր ընթացիկ արտահայտություններուն և երևույթին, ոսկի սիրտ մը և մանուկի հոգի մը ունի, պարզ, վճիտ, խորապես մարդկային և քրիստոնեական, անհիշաչար է ու ներող և լայնախոհ բոլոր մարդոց նկատմամբ, նույնիսկ իր անձնական հակառակորդներուն, որոնք շուտով, շատ շուտով կմոռնա, բայց անողորմ է անոնց նկատմամբ, որոնք որևէ ձևով կփորձեն վիրավորել մեր ժողովուրդին ազգային զգացումները և արժեքները, վտանգել մեր եկեղեցին և անոր սրբություններն ու աղարտել անոր վարդապետությունը: Իր մանուկի ոգին այն ատեն առնուծ մը կդառնա ու կջախջախե անոր հակառակորդները:

Ահա այսպիսի անձնավորություն մըն է, որուն գրական և բանաստեղծական քառասուն տարիներու վաստակն է, որ կներկայացվի այսօր, իր սերն ու նախանձախնդրությունը մեր ազգին և եկեղեցիին նկատմամբ՝ գրական ու բանաստեղծական արվեստով արտահայտված: Իր բոլոր գործերը, ըլլան անոնք արձակ և մանավանդ բանաստեղծություն, ներշնչված են ազգայն-կրոնական ոգիեն, սուրբ գրական դեմքեր, ազգային հերոսներ՝ մեղրամոմե Մագթադիներեն սկսյալ մինչև լայնաշունչ և հզոր դյուցազներգությունը Կարմիր Զորավարին: Եթե սիյուրքի մեջ Եղիվարդ ծանոթ է իր բանաստեղծական բոլոր արժանիքներով և ստեղծագործություններով, դժբախտաբար մայր հայրենիքին մեջ նվազ ծանոթ են իր գրականությունը և բանաստեղծական գործերը առհասարակ: Այս խոսքերը հարգանքի և գնահատանքի տուրքե մը ավելի մաղթանք մըն են իրեն, որ շարունակե կրոնական-ազգային և հայրենասիրական իր բեղուն գործը, հիանալի անակնկալներու շարքով մը և նոր ստեղծագործություններով:

Բացված կհայտարարենք գրական այս երեկույթը՝ մասնագետներու ձգելով Եղիվարդի բանաստեղծության ներկայացումն ու վերլուծումը:

Օրվա հանդիսության գլխավոր զեկուցողն էր սիրված բանաստեղծուհի **Մարո Մարգարյանը**, որը հանդես եկավ «Բանաստեղծ Եղիվարդը» թեմայի շուրջ, հետևյալ գեղեցիկ ու բովանդակալից զեկուցումով:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Նորից մի պայծառ զորավոր գրիչ

Սկսած վաճառքի հրեղեն ծննդից, համակրված ոսկեմայր Անահիտի ծովացող բարությամբ, գեղեցիկ Արայի անբեկանելի հավատարմությամբ, ճառագայթել են հայոց արվեստի լուսեղեն ակունքները:

Ծարվել են մեր բանաստեղծության ոսկե տողերը, մեր վաղ դպրության մարգարիտները:

Դեռևս հնագույն դարերի խորքից կայծակել են մեր առասպելներն ու

հին վեպերի բեկորները: Եվ մեր առաջին գրիչները հավաքել են հատիկ-հատիկ, գումարել են իրենց հրաշքներն ու տվել սերունդներին:

Ու մեր փոքր ու մեծ սրբավայրերի լուռ, խորախորհուրդ գմբեթների տակ, մեր խստատես տաճարների քիվ ու կամարների հովանու ներքո գծագրվել են մեր մագաղաթները, մեր մանրանկարչության սքանչելիքները: Նվագներ են դարձել մեր հոգու միմունքները: Ապստամների կարծր կողերին քանդակվել են մեր ճամփա չգտած սերերն ու երազանքները:

Չքնաղ գույներ ու ձևեր են ստացել մեր հուզումներն ու տագնապները և դարերի ամայության մեջ շարվել են մեր պատմության կրակաթերթ հատորները՝ որպես անկրկնելի հարստություն ողջ մարդկության համար:

Եվ այս ամենը մեր հոգևոր հայրերի գերմարդկային նվիրումով, ապագայի հանդեպ ունեցած հավատով ու կամքով, ոգու ամրությամբ ու սրտի լույսով, բոլոր չափերից, սահմաններից վեր անձնվիրությամբ:

Խոր ակնածանքով տեսնում ենք ասես ցուրտ մեծարանների մոմերի տակ նստած հայտնի և անհայտ մեր հանճարների՝ խոնարհ ու գունատ դեմքերը հակած մագաղաթներին: Նկարում են ու նաղաշում սրբատառ գրեր, մանրաձաղիկներ, քիվեր ու տաճար, լեգենդներ հզոր, դեմքեր ու դեպքեր, խորհուրդներ կյանքի ու խորունկ սերեր, երազներ շքեղ... Եվ այսպես անվերջ դարեր ու դարեր երգեր են ձոնել, արձաններ ձուլել, իմաստություններ թափանցող մտքի, աղոթք ու տրտունջ, բխումներ խորունկ, գիտությունների ակունք արմատներ, հոգիների մեջ լուսապատկերը մեծ զալիքների:

Պահելու համար ինքնության ոգին, գծերն հայրական, պատկերը ցեղի և կյանքն ամուր, միշտ անհավասար կռիվների մեջ մեր ժողովրդի:

Եվ գերմարդկային ուժով անկոտրում ու անմեկնելի, նրանք վառեցին փարոսներն անմար մեր արվեստների, գիր ու դպրության:

Եվ այսպես ոգու ջահերը պահած գլուխներից վեր, անցել են նրանք՝ մեծ հայրերը մեր խոր-խոր դարերի խավարի միջով, աներով կործան, արհավիրքներով և հասցրել են մեր խոսքը բարի կատարելության, մեր երգը ոգու ներդաշնակության, մեր անունները՝ հանուր մարդկության ստեղծած անհաս լույս կատարներին:

Մաշտոց, Խորենացի, Եզնիկ, Եղիշե, Նարեկացի, Ծնորհալի, Քուչակ, Թորոս Ռոսլին, Ֆրիկ, Սայաթ-Նովա, Մխիթար սրբա, Ղևոնդ Ալիշան, Խրիմյան Հայրիկ, Կոմիտաս...

Եվ այսպես գալով ոսկեմշուշ հեռուներից, անցած միջնադարի խավարների միջով, ջահերի նման վեր պահած հզոր անունները մեր, որոնք ոգեղեն վահաններ դարձան բոլոր պիղծ ու նենգ ոտխների դեմ, որոնք պահել են հավատը խորունկ, միտքը մշակել, խոսվել հոգին անհուն սերերով մեծ ու լուսեղեն, կայծակումներով շքեղ ու բարի և ստեղծել են համամարդկային գլուխ-գործոցներ՝ որպես ինքնության ու ոգու ուժի մեծ, անցնչելի վկայագիրներ:

Եվ մենք որքան ենք պարտական հիմա լույսի ու լավի մեծ հաղթանակին:

Անցել-գնացել, փոշի են դարձել բոլոր տեսակի կործանողները պիղծ ու չարանենգ: Սև բծերի նման մնացել են նրանց սև անունները մագաղաթների ոսկե էջերին և մեր արվեստի սքանչելիքները, մեր երազները կյանք առած արդեն:

Եվ մինչև այսօր սրբությանը գործող իմաստությունը մեր գրիչների: Եվ մինչև հիմա երբեք չընդհատվող մեր ոսկե շղթան:

Եվ այդ լուսավոր, շեն անունների մեծագույն մասը կապված է եղել պատմական անխոնջ ազգապահպան այս մեծ կենտրոնի, այս խոր հնավանդ սրբավայրի հետ, որի անթափանց կոտ պատերի մեջ ապաստանել են ու ոգեպնդվել մեր մշակույթի պատմության ընտրանիները:

*
* *

Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիշե Տերտեւյանը՝ բանաստեղծ Եղիվարդը, իր կոչումով, իր ճակատագրով, իր ամբողջ կյանքով ու աշխատանքով անմիջական շառավիղն է իր նախորդների, նրանց մեծ գործի շարունակողը, այնքան բարդ իրադրության մեջ, այնքան դժվարահամ սփյուռքահայ աշխարհում:

Նրա ողջ կյանքի մեծ մտահոգությունը, ջլատված ուժերով, փշուր-փշուր, աշխարհով մեկ ցրված, անհույս-անհեռանկար սփյուռքահայ իրադրությունն է, օտարակույ օվկիանոսներում սուզվող հայածին տաղանդների կորչելու ցավը, անդարձ կորուստների կսկիծը, հնարավորը փրկելու, անհնարինն իրականացնելու, մշտական հոգսը, որ այրվել է շարունակ նրա հայրենասեր հոգում, նրա հնարամիտ, օգնող ու հասնող գործարար կյանքում,—այս ամենը տասնյակ տարիների ընթացքում խորունկ դավանանք, կամք ու ուժ է դարձել և տաք սնունդ տվել նրա գրական զորավոր տաղանդին:

Մի տեղ անհուն սերն ու կարոտն է մարդուն բանաստեղծ դարձնում, մի տեղ՝ խորունկ ցավի կսկիծը, մի տեղ՝ կուլելու-հաղթելու անքեկանելի կամքը, մի այլ տեղ՝ անգտնելի կորուստները գտնելու, անհատուցանելի հատուցանելու, ամբողջ կյանքը համակած մշտական ծարավը:

Եվ այսպես իր բարդ ճակատագրով, մարմանը ու հախտուն այրումների մեջ, իր բարդ ու դժվարին կյանքով ստեղծել է Եղիվարդը մի սրտահորդ ու հարուստ գրականություն, ստեղծել է հայրենաշունչ ու հայրենապինդ գործերի մի գունագեղ շարան, դեռևս ընթերցողին ոչ լրիվ ծանոթ մի թանկ հարստություն:

5—6 տարեկանից անցած եղեռնի արհավիրքներով, զրկված ծնողներից, բոլոր թանկ հարազատներից, ծանր կորուստների մշտական կսկիծը մատղաշ սրտի մեջ, նետվել է նա որբանոցից որբանոց: Մեծացել, ամրացել է օտար ավերի անկայուն մթնոլորտում: Դիմացել է հարափոփոխ եղանակներին: Ծրջապատն ամբողջ՝ չկանգնելու, տոկալու, դիմանալու պայքար:

Հասկանալի է, թե որքան վիշտ ու ցավ է հոսել նրա տոկուն զարկերակներով, որքան դառնություն է կուտակվել նրա ամուր հոգում:

Եվ իր նախահայրերի նման նա իր զորեղ գրիչն է հանել մարտի դաշտ, սիրո, նվիրումի իր տաղանդն է դրել՝ օգնելու իր վտարանդի ժողովրդին, լինել-չլինելու նրա ծանր ու տևական պայքարի մեջ, ի խնդիր աշխարհի ամենագոր ճշմարտության, ամենամեծ զգացումի, ի խնդիր մարդկային բոլոր սերերի ու գեղեցկության:

Հորդել է կյանքը ծանրակոհակ ալիքներով, և հայոց զարմանալի ճակատագիրը բոլոր դառնությունների ու դժվարությունների հետ միասին տվել է նրան մեծ ժառանգություն՝ հոգեկան ուժերի խորունկ ակունքներ, ազգային մշակույթի սիրադալար սնունդ, բախտավոր հանդիպումներ, ընտիր ուսուցիչներ ու բարեկամներ:

Վաղ երիտասարդությունից նրա կյանքի ուղեկիցներն են դարձել մեր մշակույթի նշանավոր դեմքերից բանաստեղծ-պատրիարք Եղիշե Դուրյանը, գրագետ-պատրիարք Թորգոմ Գուշակյանը:

Նրա գրական-գեղարվեստական ըմբռնումների, ճաշակի հասունացման, բյուրեղացման հարցերում մեծ դեր են կատարել հայտնի մտավորականներ՝ մանկավարժ-արվեստաբան Ծաֆան Պերպերյանը, վիպասան-գրականագետ Հակոբ Օշականը, որոնց հետ բանաստեղծը կապված է եղել բացառիկ բարեկամությամբ, անձնական մտերմությամբ:

Աշխարհով մեկ սփռված իր վտարանդի ժողովրդի մշտական ցավերն ու խորունկ խնդիրները տվել են նրան ընկալող տաք սիրտ: Դառն ու դժվար կյանքը տվել է նրան արթուն, թափանցող միտք ու տոկունություն: Մեծ կորուստների ծանր կսկիծը տվել է նրան անզիջող ոգի: Մեր ամբողջ պատմությունը տվել է նրան իմաստուն դասեր ու փորձառություն: Եվ այս ամենով ամրացած բանաստեղծ-գործիչն իր ամենօրյա հոգսերի հետ միասին գործի է դրել իր գորավոր գրիչը՝ ստեղծելով բավականին հարուստ մի գրականություն, որի հիմնական մոտիվը մարդու հավատն է ու ոգու մեծությունը:

40-ական թվականներից սկսած նա հրատարակել է հաջորդաբար «Մագդաղինեն մեղրամոմե», «Խորտակման գիշերներ», «Անցորդը», «Լեռան վրայեն երանիներ», «Սուրբ Մեսրոպ», «Օտարականը», «Հեթանոսաց առաքյալը», «Ընտիր էջեր»՝ վերջինս հարստացած նոր պոեմներով և նոր խոհական բանաստեղծություններով:

1975 թվականին Եղիվարդը հրատարակեց «Կարմիր Զորավար» ծավալուն պոեմը՝ նվիրված, իր խոսքով ասած, Հայոց պատմության «հերոսներու մեծ հերոսին»՝ Վարդան Մամիկոնյանին:

Այս ամենի հետ միասին հրատարակել է բազմաթիվ գրական, բարոյագիտական, հրապարակախոսական հոդվածներ «Սիոն», «Էջմիածին» ամսագրերի մեջ և սփյուռքահայ մամուլի էջերում:

*

* *

Իր ստեղծագործությունների մեծ մասի նյութը նա ընտրում է Հայոց պատմության հնագույն էջերից և սուրբ Գրքի գլխավոր դրվագներից՝ տալով իր հերոսներին և գործող անձանց մոտ ժամանակների մարդկանց կյանքն ու ոգին՝ մեջտեղ դնելով իրեն հուզող այսօրվա հարցերն ու խնդիրները: Սա գրական ընդունված ձևերից է, սակայն հեղինակն օգտագործում է այն իր զբաղմունքին ու իր կյանքին բնորոշ գծերով:

Եղիվարդի ներկայացրած դեմքերից շատերը՝ Մագդաղինեն մեղրամոմե, Մամարուհին, Սալոմեն և, առանձնապես, Օտարականը՝ «Աստծու Որդու» կերպարը, տասնյակ դարերի ընթացքում մշակվել են ժողովուրդների մեծագույն հանճարների կողմից, անցել են վերածնության հրաշագործ ժամանակներով, դարձել են անմահ կտավների, մեծ քանդակների և բազմազան երկերի նյութ:

Եվ, հավանաբար, յուրաքանչյուր հեղինակ իր հոգու ցավերն ու ցուլանքներն է աշխատել դնել այդ երկարակյաց կերպարների մեջ:

«Ամեն դար կփորձե իր ձևով ապրեցնել այդ խորհուրդը, գրելով զայն երկրի լույսով, բայց իր արյունով», գրել է Եղիվարդն իր նախաբանի մեջ:

Աստվածաշնչական այս թեմաները բանաստեղծը մշակել է մեսրոպյան

հարուստ ու հստակ լեզվով, կենդանի պատկերներով, տաք-տաք, թրթռուն ու լեցուն կյանքով իր՝ մեսրոպյան ընթերցողի համար: Իր մտքի պայծառությունը, իր ունի թարմ ու հյութեղ պարզությունը, իր պատկերավոր լեզվի բնական ու բուխ հնարանքները թարմություն են տվել գործերին, որոնց մեջ կուտակված են մարդկային բոլոր ժամանակների մտորումներն ու փիլիսոփայությունը՝ ով իմանա իրենց ակունքներում մշակված ի՛նչ հանճարների ձեռքով:

Եվ մեր բանաստեղծը ներկայացնում է այնպես, որ մեզանից շատ հեռու, այդ կերպարներն ընկալվում են ու հասկանալի դառնում այսօրվա ընթերցողին:

Վերցնելով հեռավոր անցյալի թեմաները, բանաստեղծն իր հստակ ու վառ արվեստով տալիս է նրանց այսօրվա գույն ու երանգ, ժամանակի շրջառություն՝ միանգամայն պահելով անցած օրերի սրբազան վեհությունը, դրանով իսկ ցույց տալով իր նախընտրած թեմաների խորը մարդկայնությունը:

«Մագդաղինեն մեղրամոմե»

Հետաքրքիր է, որ մեծահարգ բանաստեղծն իր գրական կյանքն սկսել է իր ստեղծագործության գլուխ-գործոցով՝ «Մագդաղինեն մեղրամոմե» գեղեցիկ պոեմով: Անկախ անուններից ու նախաակունքներից, սա մի սիրավեպ է՝ գրված տաք սրտով, վարպետ ձեռքով, անջնջելի պատկերներով, հոգեբանական նրբություններով՝ համակող ու հաղորդական: Մեղմ ու խորունկ հուզումներով ստեղծվել է կյանքով լեցուն, անհունորեն նվիրված կնոջ մի սիրելի կերպար:

Դժվար է պատկերացնել ավելի կենդանի, թրթռուն ու սիրաշաղախ մի արարած, որքան այս գրքի աստվածաշնչական հերոսուհին:

Եվ բոլոր գործերում գեղեցիկ է նկարագրված մարդկայնորեն մեծ Աստծո Որդին, որի կերպարն ստեղծելու համար, նախնական դարերից սկսած, աշխատել են շատ հանճարներ:

Ուժեղ գրչով է գծագրվում միշտ գազազած ու բիրտ ամբոխը, չարացած, զոհեր պահանջող չարագործների զանգվածը, որն այստեղ ցանկանում է քարկոծել անպաշտպան կնոջը.

«Հալածական անպաշտպան
Ոհմալի դեմ փրփրած
Ան եղնիկի մ' էր նման:

...

Ամբոխին դեմ արյունոտ,
Որ քարերով կսպառնար...:
Հիսուս անոնց նայեցավ,
Ու ժպտեցավ տրտմորեն...:
Տոգույն դեմքն իր գեղեցիկ,
Մագաղաթի մ' էջերեն
Կարծես թե վեր առնված,
Դիտեց զանոնք ընդերկար,
Անդրաշխարհե մը անհուն.
— Ձեզմե անմեղն, էն առաջ

Նետե թող քարն այս կնոջ»

...

Սարսուռ մ' անցավ ամբոխեն

...

Քարերն հատ հատ ինկան վար»:

Եվ սկսվում է մի անսահման խորունկ սեր, հոգեկան աշխարհի մի փլուզում ու վերածնունդ, մի կատարյալ հեղաշրջում, ոչ թե հրաշքների զորությամբ, այլ մեծ ու խորունկ սիրո լուսարձակումով, մարդկային վեհության ճառագայթումով, հոգու խորքերի, ամենաթանկի արթնացումով.

«Կինը անձայն կարտաավեր...

...

Կուզեր անոր ոտքերուն
Առջևն իյնալ ու հրծծել,
Դեռ ոչ ոքի չառերած
Բառը, անդունդ իր սերեն,
Ջոր մեկ անգամ կըսե մարդ:
Բայց տկար էր իր հոգին
Նման անթև թիթեռի»:

Այս ամեն նրբության ու խորության հասնելու համար բանաստեղծին մեծապես օգնում են լեզվական նորք ու հստակ մտածողությունը, պարզ պատկերներն ու ճիշտ ընտրված լակոնիկ խոսքը:

Ահա զեխ ու շվայտ կյանքից զզված, սիրո աստվածային լույսով անցած ու հոգեպես արթնացող, վերածնվող կնոջ պատկերը.

«Մագդաղիենն կարթննար
Կարծես նավու մը վրա,
Որ զինք առած կբերեր
Աշխարհե մը հեռավոր...:

...

Ու կզգար թե քայլ առ քայլ
Կհեռանար ինքն իրմե:
Կօվասիսվեր՝ կյուսնար...»:

Ինչպես վերածնության խոշորագույն նկարիչներն Աստվածամայր նկարելիս նկատի էին ունենում կենդանի, պարզ, երբեմն գեղջուկ աղջիկների, այնպես էլ այս աստվածաշնչյան կերպարը կենդանի կին է, ջերմ, հուզաթաթալ, համակված ամենամարդկային սիրով: Հեղինակը նկարագրել է այնպես, որ զգում ես երիտասարդ կնոջ տաք շնչառությունը, սրտի զարկերն ու դեմքի շիկնանքը.

«Լայն են բացվեր դռներն անոր
Խեղճ հոգիին
Բաներու որ անուն չունին»:

Սա ներումի կախարդանքն է մեծ հոգու և մեծ սիրո արարիչ, լուսավոր ճանապարհը: Եվ ահա սիրո վերջին խոսքերը.

«—Դարձար ինձի,
Դուն՝ գեղանի Աստվածորդի.
Ա՛հ, գիտեի թե դամբանեն
Թե դժոխքեն ու երկնքեն
Սերը կարող է ետ բերել
Իր տենչալին:
Եկո՛ւր ինձի...»:

«Սամարուհին»

Կատարյալ արվեստով, գեղեցիկ, զուսպ ու լակոնիկ է ներկայացված «Սամարուհին», անչափ շատ ասված քիչ տողերի մեջ: Մի փոքրիկ նորավեպ, մի տիեզերք սեր, փակ, չարտահայտված զգացումի մի անհունություն մի քանի էջի մեջ:

Բարձր սերը հավանաբար այն միակ մթնոլորտն է, որով մարդ կարող է արտահայտել հոգու աշխարհի բոլոր նրբություններն ու վեհությունները: Եվ հենց այդ պատճառով է, որ հանճարեղ գործերը, սկսած Ավետարանից մինչև Ի դարի մեծությունները, իրենց խորունկ ու վեհ մտքերն արտահայտում են մեծ սերերի լույսի մեջ.

«Հոգնած ու ծարավ,
Ջրհորին առջև,
Հիսուս կանգ առավ:

...

Իր դեմքին վրա՝ խոնջենք ու փոշի,
Եվ աչքերուն մեջ՝ տակավ հեռացող
Ու անհորիզոն խորունկ երկինքներ:
Կնայի կնոջ,
Եվ կխնդրե ջուր:
Ջայնը Հիսուսին, լճին մեջ ինկող
Աստղի մը նման,
Փշուր առ փշուր կիջնե անկե ներս,
Ծնելով հազար ալիքներ լույսի,
Եվ շրջանակներ՝
Մթին անորոշ զգացումներու:
Կսահի, հուշիկ, դուլն անոր ձեռքեն»:

Բիրտ ու վայրագ միջավայրում կինն ամենուրեք սպասում է կատարյալին, մեծ ու մաքուր սիրո: Բայց կյանքը նրան շարունակ մխրճում է տիղմի մեջ:

Կանանց կերպարները բոլորը վեհ են, գեղեցիկ և ենթակա սիրո աստվածային լույսին, որին հանդիպելով, նրանց մեջ արթնանում է ամենաբարձր ու գեղեցիկ զգացումները, ամենախորունկ, անզիջող սերը.

«—Դուն քանի՞ անգամ,
Մարդոց սիրտն ի վար,
Դույլ արձակեցիր, ով Սամարուհի,
Եվ ամեն անգամ ջուրի փոխարեն,

Գտար ափ մը տիղմ»:

...

Կիկը չի գիտեր թե լույսն այդ ձայնին,
Ինչու մութերուն մեջ իր կտուգի....:

...

Իր նայվածքին մեջ կվարձատրվին,
Անդարձ, խորտակված տարիներն բոլոր՝
Սամարումիին.

Որուն սրտին մեջ, կիրանա հանկարծ,
Երկինքներու չափ խոր ու անանուն
Կայլակը ոսկի, կայլակը կրակ,
Երազն անավարտ, բայց միշտ անհագուրդ
Եվ միշտ վրիպած,
Զգացումներեն ամենեն մեծին:
— Մարգարե մը դուն կթվիս ինձի,
Ո՛վ օտարական,
Եվ քու խոսքերուդ հայելիին մեջ,
Կմեռնին դարեր, կապրի սպազան»:

Այս պատմվում է իմաստալից գրույցը սիրո, մարդու բնության գեղեցկությունների, աստվածահորդ սիրո արարիչ ուժի մասին:

«Իրմով կիսուսին աստղերն աստղերու, երկինքը՝ երկրին: Իր շողերուն մեջ կբանան թերթեր ծաղիկն ու հոգին, նայվածքը մանկան, աչերը կնոջ, սիրտը մայրերուն,—ամեն, ամեն ինչ»:

Եվ փշրվում է կնոջ մեջ ամբողջ անցյալը, կործանվում է ու նորից ստեղծվում աշխարհը:

«Հեռացող աղվոր այդ Գալիլիացին, իր ոսկի դուլով առած էր իրմե, ինչ որ ինքն ուներ»:

Եվ երբ մի անցորդ նույն ջրհորի մոտ գուժեց Սամարումուն երիտասարդ Գալիլիացու խաչված մեռնելու մասին՝

«Կանեփը դուլին, մեկեն, դարձավ քար,
Եվ մնաց կախված՝ ջուրերուն վերև»:

Օրինակները բերում ենք փոքր-ինչ խտացված և մի փոքր լայն ու ազատ, քանի որ հեղինակի գրքերին մեր ընթերցողը գրեթե ծանոթ չէ:

«Սալոմեն»

Այս ծավալուն պոեմից մեր հոգին է խուժում անսովոր դաժանություններով ու գեղեցկություններով ալեկոծված մի աշխարհ, ուր խրախճանք է ու մահ, ուր օդը համակված է ահեղագոչ տազնապներով:

Առհասարակ բոլոր գործերում շատ ուժեղ, տպավորիչ է գծվում ժամանակն ու միջավայրը:

Մի կողմից անիծակալ փշերով անապատի «քարակոշկոն» մարգարեն իր ահռելի անեծքներով, որը ձեռքը տանում էր երկնքից կայծակներ վար բերելու, «Նզովք իսկ էր մարմին հագած, հորիզոնները հարվածող»:

Մյուս կողմից ձյունների պես հալչող Սալոմեն՝ փրփուրի գեղեցկությամբ

հոտող մաքուր ջուր, որ փակչում է իր ափերից, իր նակատագրից և չգիտե՝
 ուր է գնում, և չգիտե՝ ինչ է որոնում.

«Գետափին մոտ՝ շուշան մ՝ ինչպես՝
 Սվազներու սիրտեն բխող...»:

Բայց ահա հոշոտվող հոգով լսում է մարգարեին.

«— Վա՛յ աղջկան,
 Մարմինն որուն, գինն է արյան
 Իր հայրիկին...»:

Սև ու սուր գծերով նկարվում են գոհարները, ծիածանների մեջ ծփա-
 ցող հայրը, մայրը, ողջ շրջապատը, «ուր մահ է, բարքերի անկում», որոնց
 պատճառով Սալոմեն պատժված է ամենադաժան կերպով.

«Ծունեն ուտեն պիտի անուր
 Մարմինը գարշ,
 Որ ամուսինն իր առաջին
 Ծղթայապիրկ դրկեց Հոովմ,
 Ու պատկեցավ ուրիշին ծոց
 ...
 Որ սեփական աղջիկն ահա
 Կհարդարե
 Սիրահարին իր մահիճին»:

Մյուս կողմից աչքին երևում է շղթայապիրկ մարդուն տանող ամբոխը.

«Սառ կտրեցավ արյունն իր մեջ.
 Փրթան, ըսես, ծունկերն իր խեղճ»:

Եվ բոլոր նուրբ պատկերների հետ՝ կոշտ ու դաժան խոսքեր.

«— Մողեզն անգամ գարշանք կզգա
 Պոռնիկ մորմեղ.
 Դո՛ւրս ելիր, դո՛ւրս»,

բանտի պատերի մեջ մոնչում է մարգարեն: Սալոմեն արդեն դրսում էր:
 Բանտի դուռը փակված էր, և նա արդեն ոչինչ չէր լսում, չէր զգում: Հոգու
 խորքում միայն ատելության ու զգվանքի կրակն էր ծավալվում, միայն ջուր-
 թերն էին արյունոտվում ատամների կրճտումից, մարմինն էր ցնցվում և
 խեղդվում էր վրեժի ծարավից:

Այնուհետև երևում են գոհարների մեջ հեղեղված մայրը՝ Հերովդիադան,
 թագավորը, պալատի խրախճանքն ու Սալոմեի խենթացած պարը, մարգա-
 րեի կտրած գլուխը սկուտեղի վրա, բաց աչքերով, կատաղած վայրագ ամ-
 բոխը և գեղեցիկ Վարդապետի դատաստանը: Ցնցող պատկերներ ու ճա-
 կատագրեր:

Այսպես, մի փոքր պոեմի մեջ ժամանակի որքան խտացում, դեպքերի

ու դեմքերի որպիսի բազմազանություն, մեծ երևույթների բնդհանրացումներ, ուսմունքներ, փիլիսոփայություն, պատմություն և մարդիկ, մարդիկ՝ ասավոր ճակատագիրներով, աղետներով խորունկ խորքերով, ներքին ներքություններով, սիրո թրթիռներով, կենդանի, պատկերավոր ու հաղորդակամ: Եվ ամբողջի ֆոնի վրա ձյունաշուշան Սալոմե՝ իր ներսի կրակներով, իր ահռելի վրիժառությամբ:

«Նեղոսի Լուտասը»

Մի իսկական ճերմակ ծաղիկ է այս ամենի մեջ:

Գեոառի գեղեցկությունը բերել են վանք: Մայրապետը տրտում հայում է նրան ու Նեղոսի Լուտաս անունն է տալիս: Բայց Լուտասը չի դիմանում վանքի ամայի պատերին: Կյանքի հորդացող ուժը դուրս է գետնում նրան: Աղջիկը խենթանում է սիրո, մտերմության կարոտից: Ու շեկ ավազներից փախչում է Լուտասը, փախչում է դեպի կյանք, դեպի մարդիկ:

«Տարիներ հետո»

Այս երկար բանաստեղծության մեջ մահացող կնոջ վերջին մտորումներն են անցած կյանքի, մարդու և բնության մասին՝ տրված մի զարմանալի թեթև դատությամբ: Եվ մի շարք այլ նմուշներից տեսնում ենք, որ մեր Աստծո ծառա բանաստեղծն անդրադարձել է կնոջը վերաբերող բոլոր հարցերին, իհարկե սուրբ Գրքի սահմաններում միայն: Բայց, ի պատիվ բանաստեղծի, առանց կատակի և խորին շնորհակալությամբ, պիտի խոստովանենք, որ կանանց կերպարներով տվել է նա սիրո, գեղեցկի գործության, բարձր նվիրվածության սքանչելի օրինակներ:

*
* * *

Ծարունակում ենք թերթել «Ընտիր էջեր»-ը և բանաստեղծի տաղանդը գտնում ենք մի նոր ուժ ու փայլ ստացած, իր նոր շարքում, որը խորագրովւած է «Անոնք որ չեն մեռնիր»։ «Ես Եհովան եմ այս գիշեր», «Ես Հուդան եմ այս գիշեր», «Ես Սողոմոնն եմ այս գիշեր» և մի շարք այլ բանաստեղծություններ: Այստեղ ուշագրավ են «Տեսիլներ տրտում օրերեն» և «Անցորդը» բաժինները, որոնք իր՝ հեղինակի ներքին աշխարհը շատ ավելի բացող, ներկայացնող խոհական, քնարական գործեր են՝ արժանի հատուկ ուսումնասիրության:

Վերոհիշյալ շարքերից ինձ համար առանձնապես նշանակալից են «Ես Արտավազդն եմ այս գիշեր» բանաստեղծությունը և «Սուրբ Մեսրոպ» հրաշալի պոեմը:

Մի առանձին պրկված հոգով, ջիղով ու ամբությամբ է մշակված լեգենդը Մասյաց լանջերի խորքում շղթայված հայոց Արտավազդի, որի շղթաները կոտմ են, ամրացնում հազարավոր դարբիններ՝ «հազար ամե մինչ հազար ամ»։ Իսկ ժողովուրդը սպասում է նրա գալուստին, սպասում է, որ կտրի նա անեծքի շղթաները և գա փրկելու գերված, ավերված իր երկիրն ու ժողովուրդը:

Եվ կուո ու կուի պատկերներով գծագրում է երբեմնի շենշող հայրենիքը, նրա բոլոր կործանումներն ու նրա արյուն ավերների ցնցող տեսարանները,

ժողովրդի հավատը, երազանքն ու սպասելիքը: Եվ լավագույնն այս գործերի հիմքում եղած մաքուր հավատն է և անբեկանելի լավատեսությունը.

«Մենք կսպասենք քու մեծ կոչին
Կործանելու աշխարհն այս պիղծ
Եվ կանգնելու արդարությունը քու փառքիդ...

...

Կտրեն շղթադ,
Նետվեն վրան աստվածագեղ
Քու նժույգին,
Թափն արձակեն՝ խոյանքներուդ լեռնանվեր
Ազատության ու քաջության...

...

Մեզ արքաներ ըրեն կրկին՝
Վրան անույշ հայրենիքին:
Քեզ կսպասեն մեռելները մեր դարերուն
Եվ ողջերը մեռելներուն»:

Հասկանալի է, թե խոսքը որ հայրենիքի մասին է: Սակայն հեղինակը շատ ժամանակակից մտածող է, և իր այսօրվա խորհուրդն է տալիս աշխարհով մեկ սփռված իր վտարանդի ժողովրդին.

— Դարն է անցեր աստվածներուն,
Ասպետներուն.
Փառք, հայրենիք աղաղակող իմ ժողովուրդ,
Որ հեքիաթեն կպահանջես
Երիվարներ ու արքաներ.
Կհավատաս մեռելներուն...

...

Այս քանի դար ըսեր եմ ես.—
Ամեն հայու հոգիին մեջ
Արտավազդ մը պետք է կանգնի:
Կխորտակեմ հեքիաթն իմ մեծ
Որ կհանձնե ազատությունը մեր ցեղին
Մեկ հերոսին.
Դարն է հիմա հազարներու...

...

Բազուկ բազկի, և սիրտ ի սիրտ
Մենք կշինենք հեքիաթը նոր»:

«Սուրբ Մեսրոպ»

Ամենախորունկ ոգեշաղախ գործերից մեկն է, որը համակ աղոթք է, գործվանք է ու երախտիքի լույս, կանչ է ու կարոտ մեծ զգացումի:

Մեր գոյության ամենամեծ իրադարձության ոգեղեն շարադրանքն է, մեր դպրության հիմնադիր հոր կյանքի ու աշխատանքի լուսեղեն պատկերը:

Սա մեր գիր ու գրչի հիմնադրման օրհնանքն է ու վերակոչումը:



Սփյուռք աշխարհում մորից է օտարանում մայրենի լեզուն, ու նվազում է ոգին հայրենի, և բանաստեղծը մորից օգնության է կանչում մեծ լուսարարին:

Հոգեբույս հիացմունքով, երախտիքով ու սրբից սուրբ պատկերումով ներկայացնում է բանաստեղծը հայոց տառերի գյուտը: Երիտասարդ, իմաստուն ու հոգեխոով վարդապետի ուսանելը օտար ավերում, վերադարձը, երկրի ժողովրդի կյանքին խորքից ծանոթանալն ու մեծ հանճարի հոգու խոռովքը սեփական գիր ստեղծելու համար՝

«Տնույն լույսին տակ մոմերուն
Ժամանակին,
Ան կթերթեր ցավն ու խոռվքն
Մեր աշխարհին,
Որ իրեն հետ կուլար կաթ-կաթ
Մագաղաթի էջերն ի վար...»:

Որպիսի երախտիքով ու լույսերում ծովացած սիրով է նկարագրում բանաստեղծը սրբազան ջանքերը, խոռվքներն ու հուզումները և տառերի ստեղծումը, նրա դերն ու նշանակությունը Հայոց աշխարհի համար:

Բայց օտարության մեջ ձուլվող-կորչող սերունդների ցավը հանգիստ չի տալիս բանաստեղծին և հոգևոր հովվին, որի ժողովրդի մի մասն աղետներով դուրս է գետնից հայրենի օջախներից և օտար ավերում խամրում է ու կորչում՝ կորցնելով հայրենի բոլոր սրբությունները:

«Հույն ու պարսիկ և ասորին
Մեր օրերուն,
Նորեն կիշխեն մեր միտքերուն,
Լեզուն զոր դուն տվիր մեզի
Լույս բանալին,
Կմնա կախ դարպասին դեմ
Մեր անցյալին,
Կամ տրորված, խորշակահար
Դուրս են գետներ մեր հարկերեն
Եվ անտերունչ որբուկի պես
Կուլա մորեն»:

Բանաստեղծի կյանքը հոսում է հենց այդ ոգեմաշ միջավայրում: Նա իր ողջ ուժերն ու կարողություններն է դնում՝ ամբարտակելու կլանող սև հեղեղը.

«Ժողովուրդն այս բաժան, բաժան
Փոքրած ինքզինք,
Պարպված իսպառ իր հայրերու
Ծունչեն կախարդ
Խրոխտանքեն պողպատահունչ...»:

Այսպես իր երգն էլ երբեմն մեղմախոս է, երբեմն պողպատահունչ, բայց իրականությունը թևաթափ է անում հայրենի ցավերով միացող հոգին: Եվ նա օգնության է կանչում մեծ Լուսավորչին.

«Դարձուր նորեն դեմքդ աղվական
Այս գրոհին վրա թշվառ,
Ծեղքված հազար կտորներու
Մութ անթափանց,
Արմատախիլ ու գաղթական,
...
Սրբե փոշին հայելիին
Հայ հանճարին»:

Յուրաքանչյուր տողը վշտերով ու լույսերով ալեկոծվող հեղինակի ոգին է, սիրո, երախտիքի անհուն զգացումը մեր դարության հոգևոր հոր ու հանճարի հանդեպ:

«Կարմիր Զորավար»

1975 թվականին մեր գրականությունը հարստացավ մի նոր նշանակալից գործով: Երդուաղեմում լույս տեսավ Եղիվարդի «Կարմիր Զորավար» ծավալուն պոեմը՝ ձոնված հայ ժողովրդի պատմության ամենանվիրական դրվագներից մեկին, հարյուրամյակներ շարունակ մեր ժողովրդի ինքնության ու հավատի խորհրդանիշ եղած Վարդան Մամիկոնյանին և նրա վարած Ավարայրի ճակատամարտին:

Հազար ձևերով ներբողված, բազում երկերի ու երգերի նյութ դարձած, դարերի խորքից լուսարձակվելով եկող այս կերպարը Եղիվարդը ներկայացրել է այնպիսի գործովալից ջերմությամբ, նյութի իմացությամբ ու սեփական խորքի այնպիսի հավատով, որ հեռավոր դարերի ստասպելական հերոսը դառնում է կենդանի, հաղորդական ու մտերիմ:

Թվում է, թե գործը ջերմ ու հուզիչ է դարձել նաև այն պարզ պատճառով, որ իր՝ հեղինակի և նրա սերնդի կյանքն էլ, անցած եղեռնի արհալիրքներով, եղել է նույն այդ ճակատամարտի շարունակությունը:

Եվ երբ բանաստեղծը նկարագրում է այն ժամանակվա ամայացած հայրենիքը, երակների մեջ կայծկլտում են հավանաբար իր ավեր ու թափուր մնացած ծննդավայրի անմոռանալի պատկերները, իր ամայացած Վասպուրական աշխարհը.

«Բայց աշխարհն հայ
Արքայագուրկ և անազատ...

...

Երկիր Հայոց

Արյունոտ թուր, գլորվող թագ

Ծալված դրոշ ազատության,

Դեռ անվճար կարմիր մուրհակ...»:

Պատմական անցողարժեք հայտնի է աշխարհին: Եվ ահա «Կարմիր Զորավար»-ի գլխավոր հարցերի հարցը: Հավատը փոխելու մերժում ուղարկելուց հետո հայ նախարարները կանչվում են Պարսից արքունիք, ուր նրանց ընդունում են սառը հեգնանքով, մահվան կնիքներով: Նախարարներն ավելի լավ բան չէին սպասում, բայց շփոթված են ու շվարած: Վարդանն իր խոսքը պիտի ասի: Կանգնած են միմյանց հանդեպ Հազկերտն ու Հայոց սպարապետը

«Պահ մը իրար զարնվեցան
Նետերն իրենց մայվածքներուն.
Եվ իրարու փոխանցեցին
Զայրույթն ու հուրն իրենց սրտի:

...

— Ով կդավե իր Աստծուն,
Կրնա դավել մույնքան դյուրին
Իր արքային»,

պատասխանում է Հայոց զորավարը: Ահեղ վտանգ է կախված երկրի վրա: Նախարարների մեջ տարաձայնություն է: Վասակի դիրքը հայտնի է: Ունի իր համախոհները:

Եվ Մամիկոնյան զորավարը որոշում է անձնուրաց մահով հավերժացնել ժողովրդի ինքնության կամքը, բարոյապես տապալել ոսոխին և ձախողել նրա նեղ գծերը: Նախարարները հավատափոխության կեղծ խոստում են տալիս, վերադառնում են երկիր՝ պատրաստելու հակամարտը:

Վերադարձել են, բայց պառակտված են առանց այդ էլ անհամեմատելի քիչ ուժերը:

Վարդանը ձին հեծած շրջում է գյուղից գյուղ՝ ոտքի հանելու, կազմակերպելու ժողովրդին:

«Կշրջեր ան
Երիվարովն իր անմահ
Ու կնայեր սարերուն հոծ
Ծիրմաքարեր հին փառքերուն:

...

Զիտն վրա իր սպիտակ
Նման էր ան ճակատագրին
Մեր աշխարհին»:

Հուզախտով է Անգղ բերդի տեսարանը, ընդվզող ժողովրդի նկարագիրը, որը պատրաստվում է անհավասար կռիվի, որը որոշում է մահով հաղթել անհաղթելի թշնամուն:

«Ծիրիմներեն սուրբեր հազար
Եկեր շարվեր էին կարծես,
Նորեն կարգով, ողջերու քով
Բողոք մ' ինչպես հողեն բխող...»:

Ու պատրաստվում են երկրի բոլոր ծայրերում, դաշտում, տներում, դարբնոցներում: Հեղինակը բոլոր միջոցներն օգտագործում է մթնոլորտ ստեղծելու: Մի քանի տողով գծում է պատմական դեմքերին, հիշում թևավոր ասույթներ մեր պատմությունից, իշխաններից, նրանց մտահոգությունը, դատողությունները, Խորենացու Վասակի գրույցը և այլ պահեր՝ «Կյանքը սակայն ետ չի մայիր, ըսավ Վասակ», «Հին արժեքներ չեն հարմարի օրերու մոր...»:

Այս Վասակը հիշում է իր պատանդ զավակներին, իր անցած կյանքը. «Իր հոգիեն կքաղեին ծանր ու դանդաղ հազար դազադ»: Եվ հեղինակը

թվում է նրա հասցեին հիշված բոլոր չարագործությունները: Կարծում ենք, այստեղ բանաստեղծը շատ է տուրք տվել ավանդական պատումին, մինչդեռ այսօրվա իր սուր մտքով կարող էր մի քիչ ավելի անաչառ լինել՝ իր գավակներին արքունիքում թողած մարգարանի հանդեպ:

Բանաստեղծի մոտ ամենից տպավորիչը, սակայն, խոսքի տրամադրությունն է, ներքին այն ուժը, որով նա ձուլել է իր տողերը: Ամենագորավոր տողերից են, ցնցող պատկերներից՝ գլխավոր ճակատամարտի նկարագրությունը.

«Դաշտը կարծես
Փոքրացել էր իր լայնքին մեջ,
Լեռներն եկել իրարու քով:

...
Սուղոցն ահեղ փքիներուն,
Հրամաններ, սաստեր ու ճիչ,
Դողդյուններ վահաններու,
Հատաչանքներն ինկողներուն,
Խրխինջը խոլ ճծույզներու
Միախառնված,
Կշիներն նվագ մը նոր
Աներկրային...»:

Ապա հերոսամարտի ծանրագույն պահը, Կարմիր զորավարի մահը.

«Սաղավարտն էր թռել գլխեն,
Ու վահանն իր դարձել էր մաղ
Իսկ վերքերեն կծայրքեր բոց...»:

Եվ սարսափներում լուսծ դաշտը, մահատակների միմյանց փարած պատկերը, որոնց վրա Հայոց լեռներն են պսակ դարձել և հուշարձան՝

«Պարտության դեմ այս հաղթական»:

Ապա մտորումներ, խորհրդածություններ, հոգևոր պատվերներ ու պատգամ և այսօրվա Հայաստանի գովքը.

«Դարեր հետո
Երիվարովն իր հրեղեն
Կեցած նորեն
Հողին վրա իր պապերուն...
...
Հոն են շենքերն,
Նոր քաղաքներ ու նոր փառքեր...»:

Բանաստեղծն ինքն իր սեփական կյանքով կեցած ճակատագրի դժվար ոլորտի մեջ, բերած անձնական իր փորձն ու իմաստությունը, գործում է օտարության մեջ սփռված իր ժողովրդի բարօրության համար և իր ստեղծագործության համար էլ վերցնում է նրան հուզող ամենակենսորոնական

հարցերը: Եվ այս գործի մեջ հատկապես դրել է իր ամբողջ սերն ու կարողությունը: Եվ հաջողել է մեծապես: «Կարմիր Զորավար»-ը հեղինակի և մեր սիրյուրբաճազ գրականության նշանակալից նվաճումներից է:

Մայրենի լեզուն և խոսքի արվեստը

Մի բանաստեղծի հաջողության առաջին վկայականը նրա լեզուն է, լեզվական արվեստի իր հատուկ հյուսվածքը, լեզվական այն հնարանքներն ու գյուտերը, այն հատուկ հրանցույթը, որով գրողը շաղախում է իր հուզումներն ու մտքի խոյանքները և տալիս ընթերցողին:

Կատարյալ բանաստեղծն իր հերթին մշակում է մայրենի լեզուն, հարըստացնում նրա բանաստեղծական խոսքը:

Բերում է իրեն հատուկ վարվելակերպը լեզվի հետ, բացում նրա նոր հնարավորությունները, բերում իր գույներն ու ձևերը, և եթե հզոր անհատականություն է, նետում է իր կածաններն ու ծիածանները:

Բանաստեղծությունը մեծ սեր է, մեծ զգացում: Զգացումի ուժով է որոշվում բանաստեղծի ուժն առաջին հերթին:

Բանաստեղծությունը խորունկ խորհրդածություն է, միտք ու իմաստություն՝ արտահայտված հատուկ տրամադրությամբ, մեծ զգացումով ու պատկերով: Սրանցով էլ տարբերվում է բանաստեղծությունն այլ ձևերով ասված իմաստություններից: Խոսքի բարձրագույն արվեստն է բանաստեղծությունը: Եվ նա ունի իր ներքին շատ նուրբ օրենքները: Նա մեծ մասամբ արտահայտվում է խոսքի նկարած պատկերներով և հուզաշաղ հաղորդումներով:

Յուրաքանչյուր կատարյալ բանաստեղծ ունի իր խոսքի երաժշտությունը, իր ոիրքն ու չափը:

Ամենակարևորը, սակայն, այն է, որ այստեղ որոշումներն ու թվաբանական հաշիվները ոչինչ անել չեն կարող: Որոշողը մարդկային խառնվածքն է, մարդկային ոգին ու տաղանդը: Նախահայրերի, բնության և Աստծո տվածն է որոշողը: Մեր բանաստեղծի հանդեպ Աստված բավականին շուայլ է եղել:

Եվ իր հայրենանվեր, և՛ իր գրական գործերից հայտնի է, որ Եղիվարդն ամուր և անկեղծ խառնվածք է, և իր ստեղծագործությունը համակված է բարձր տրամադրությամբ, նուրբ զգացումներով, շեշտված անկեղծությամբ:

Տաք ու գունագեղ է նրա բանաստեղծության նկարչությունը: Նրա ամուր ու նրբաշաղ գրիչը հարուստ ու շուայլ է իր տիրոջ նման, հաճախ շատ նուրբ ու մեղմախոս, երբեմն կոշտ ու գորավոր: Նա իր բարի ու բուխ տողերի մեջ առատորեն շաղ է տալիս լեզվական իր հորինվածքները, գյուտերն ու փայլատակումները, շատ թեթև ու բնական, առանց ճիգերի և արհեստական նոտաների: Հայոց լեզուն մի զարմանալի ոսկեշաղախ է նրա ձեռքերի մեջ, և լեզվաշեն բանաստեղծը ձուլում է իր ուզած ձևերն ու ոճերը:

«Կիրարկած թևավոր լեզուն, որ սիրելի հակումն է այս տողերը գրողի, նպատակ ունի միայն ավելի հստակ հին օրերու վերակոչում մը...», գրում է հեղինակը: Ուրեմն շատ լավ գիտի իր արածի գինը, թեև սիրում է երբեմն անփույթ կատակով խոսել իր պոեզիայի մասին: Հավանաբար սա ևս ներքին ուժի գիտակցումն է:

Եվ, իսկապես, լեզուն ճոխ է, հաճախ վեճ ու բարձր, բայց ոչ երբեք վերամբարձ: Ընդհակառակն, պարզ է ու ջերմ, ընկալվող ու համակող: Իր

ազատ ու հարուստ լեզվաշաղախի մեջ նա զարմանալի դյուրությամբ է դասավորում իր ձուլած բառերը, որոնք միշտ ներդաշնակվում են ամբողջության հետ և մի առանձին հմայք տալիս գործին, քանի որ այս ամենն արվում է բնածին ճաշակով, իսկ նրա ստեղծած բոլոր բառերն ու հնարանքները բխում են հենց մայրենի լեզվի խորքում եղած հնարավորություններից: Եվ սա ամենաթանկն է որևէ գրականության համար:

Բանաստեղծը բնավ գերի չի դառնում ավանդական ձևերին: Ծարահյուսում է հաճախ շատ ազատ ու անկախ, բայց գեղեցիկ գունարումներով և բնական անցումներով՝ հակասություն չստեղծելով, երբեք դիտմանսի մեջ չմտնելով դասական ձևերի հետ:

Եղիվարդի գրեթե բոլոր գործերում կա մի լուսավոր ներդաշնակություն, որովհետև նրանք համակված են հոգու ջերմությամբ և անկեղծությամբ: Իսկ ազնիվ ու բարի անկեղծությունը ներդաշնակում է ու լուսավորում կյանքում ամեն ինչ: Իրենց յուրահատուկ ներդաշնակության մեջ պատկերները նուրբ են, խոսքերը՝ թեւավոր: Պարող Սալոմեի մասին բանաստեղծը գրում է.

«— Ան կպարեք
Ծենքը իրեն նուրբ ձևերուն
Ալիքն անոր ձյուն հասակին...»:

Ահա պարի մի այլ աստիճանը.

«Ան կպարեք
Ու դժվար էր անուն մը տալ
Այդ խելագար՝ շունչանի նման դարձող
Ծերմակ ձևին»:

Եվ մարդիկ չէին կարողանում հետևել միշտ փշովող ու միշտ շինվող փրփրագեղ այդ ալիքին:

Բանաստեղծի լեզուն հարուստ է և շնորհառատ: Ցանկացած պատկերն ու բարդ վիճակը նա գծագրում է շատ դյուրին, թեթև ու տպավորիչ: Այս գործում շատ կարևոր է բառերի դասավորությունը և միջավայրը: Միայն բառերի ետ ու առաջ դնելով կամ բառերի հարևանությունը փոխելով կարելի է կա՛մ շահել շատ, կա՛մ բոլորովին կորցնել խոսքի հմայքը:

Իսկ մեր բանաստեղծը բառերը երբեմն այնպես է գործածում, որ շեշտվում են ավելի և իմաստալից դառնում. «Ալիքները շատագրույց», «Ավազներու ոգին շարժուն», «Անապատի սիրտը անիղձ», «Գյուղեր մաշված ժամանակեն», «Կամար մը թույլ, զույգ մը պատեր», «Խածած փեշը ժամանակին» և այլն:

Այսպես է սկսվում «Տիգրոնի ավերակներուն մեջ» դառնաշունչ բանաստեղծությունը:

Կամ բազում դարերի կարծրացած դաժանությունների խորքով անցնող «Նեղոսի ափին» ուժեղ բանաստեղծությունը.

«— Եվ արքաներ, քուրմեր տոգույն
Ապստամբալ բունին խորեն
Կազմած թափոր,
Հիսուն դարու ծանր քայլով...»

...

Խորտակելով կրանիթը ժամանակին,
 Դամբաններուն հավերժական,
 Անոնք բոլոր կանցնին ահա,
 Կազմած թափոր,
 Որոնք երբեմն՝
 Բուրգերուն ծոցն որոնեցին
 Այս աշխարհի մութ ապագան:
 Ինձ կթվի թե կբացվին
 Ծրթները քար մեծ լուռության...»:

Միայն այս մի քանի օրինակից երևում է, թե որքան բազմազան ու բազմախորհուրդ են բանաստեղծի արտահայտչական միջոցները «Անապատի սիրտը անիղձ»: Մի բառով տրվում է անապատի ամբողջ խորքն ու էությունը: Եվ, ինչպես տեսնում ենք, նրա պատկերները պարզ և կարճ են միայն, այլ դարերի ընդհանրացումներ, խորքերի բացահայտում, մեծ և փոքրագիրներ, պատմություն ու փիլիսոփայություն: Որքան խորունկ իմաստ ունի «տաճար» բառից ստեղծած «տաճարել» արտահայտությունը. «Սահմաններով իր խաչանիշ», «Աստղաճրագ երկինք», «Լուսածաղիկ մութ», «Գիր մի ինչպես հին խորհրդի մագաղաթի վրա ջուրին» և այլն:

Երբեմն մի քանի սուր բառերով գծում է խարակտերը.

«Հազկերտ բազմած գահի վրա,
 Բարձրահասակ ու խոյաքիթ...»

...

Ըսավ Մանեն Ապահունին չարախմոր ու անթափանց:

Հաճախ մեկ տողով անկայացվում է հոգեկան շատ խորունկ ու նուրբ պահեր. «Լուռ են բոլորն իրենց ճամբան կորսնցուցած մարդոց նման»:

Եվ այսպես գրական ծավալուն գործին հույզ ու հմայք տվողը, խորություն, վեհություն, ստեղծագործական ուժ տվողը հենց այսպիսի տողերն են, որոնք իրար կողքի շարված գուցե այնքան տապալորիչ չեն, որքան տեքստի մեջ՝ յուրաքանչյուրն իրենց մթնոլորտում:

Մենք օրինակներ սովորականից շատ բերեցինք՝ գիտեցալով, որ մեր ընթերցողի մեծագույն մասն անծանոթ է բանաստեղծի գործերին:

Մի տեղ խորիմաստ բառ է ստեղծվում, մի տեղ՝ թևավոր խոսք, մի տեղ հոգեբանական նրբագույն պահ է նշվում, մի տեղ խոշոր ընդհանրացում է արվում, ու վառ պատկերներ են ճառագայթում՝ բացելով մարդու հոգին, մտքի թռիչքը, ծփացող սերն ու կարոտը և ողջ էությունը կնքելով հավետ թղթերի վրա: Եվ այս ամենը կոչվում է բանաստեղծություն՝ նախ և առաջ եթե նա համակված է ներքին ուժով, մեծ սիրով, անխառն և փրկումով:

Լինում է, որ ամեն ինչ կա, բայց մեծ սերն ու և՛ փրկումը չկա, ուրեմն անկեղծությունը չկա, ուրեմն ոչինչ չկա բանաստեղծության համար, քանզի վերոհիշյալ բոլորը մեծ սիրո և մեծ և՛ փրկումի համար են միայն:

Բանաստեղծ Եղիվարդի մոտ ամենից շեշտվածը հենց տրամադրությունն է, պայծառ անկեղծությունը, իր խոսքով ասած՝ «հորիզոնեն մինչ հորիզոն... հազար ամե մինչ հազար ամ...»:

«Ես Եհովան եմ այս գիշեր՝
Կուշտ եմ բոլոր բարիքներեն
Ինձմե, ինձի,
Անմահությունն անգամ հինգած
Պատմության է իմ ուներուն»:

Զգացվում է Արևելքն իր եռուն կյանքով, իր ավանդներով, իր գրականությամբ, ամբողջովին ներծծված է Եղիվարդի տողերում. իր՝ բանաստեղծի բազմաճյուղային կյանքը, հին աշխարհի պատմություններն ու արվեստը և ամենից գլխավորը, աղետավոր մանկությունն ու իր վտարանդի ժողովրդի դժվար ու բարդ ճակատագիրը,—այս ամենն իրենց զորեղ կնիքն են դրել նրա ստեղծագործության վրա.

«Զի հայ ըլլալ պատգամ է և ճակատագիր,
Դարերու դեմ պարզած դրոշ:
Խավարն ի վեր կբարձրանար
Կաթողիկեն Լճմիածնի
Գիշերի մեջ հագած գիշեր...»:

Այս ամենն իրենց խորը տրամադրությունն են բերել, բայց, բարեբախտաբար, բանաստեղծի կյանքը հարուստ է եղել նաև պայծառ էջերով, բարի գործարար ընթացքով և մեծ բարեկամություններով, ու ստեղծվել է մի հարուստ և պայծառ գրականություն, դիզվել են հատորներ՝ դիզվելով հոգևոր, մտավոր, պատմական, գրական-լեզվական, ոճական գանձեր, որոնք կես դար շարունակ պատկերել են մի հարուստ, հուզումնալից, բեղմնավոր կյանք:

Ներկայացնել այս ամենը կես ժամում տոնական դահլիճում հնարավոր չէ ու հարկ էլ չկա:

Այս գեղեցիկ, սիրահորդ վաստակը սպասում է իր խորը ուսումնասիրողին: Եվ շատերը մեծ սիրով կստանձնեն այդ պատվավոր գործը:

Հետաքրքիր է, որ մեծահարգ հեղինակը միշտ կատակով է խոսում իր գործերի մասին և արժանի հոգը չի տանում նրանց ճակատագրի համար:

Այդպես է բանաստեղծությունը, և այդպես է ինքը ստեղծողը: Բանաստեղծությունը նվիրումն է ամենաանկաշատ և անմնացորդ: Իսկ այդպես նվիրողը երբեք չի հաշվում, թե ինչ տվեց և ինչ առավ: Եվ այս գործում շահավողներն ավելի հարուստ են լինում, քան հաշվողները:

Իսկ մենք այսօր ցանկանալով մեր վաստակաշատ հոբելյարին, գրողին ու գործչին, մեր գրչակից եղբորը ստեղծագործական նորանոր հաղթանակներ:

Ձեր գրիչը պատկանում է բոլորիս: Ձեր դիզած գրական հարստությունն ամեն մեկիս հարստությունն է: Մեզ համար թանկ են ազգանվեր հարցերում Ձեր սիրառատ հոգին և ամուր, անզիջող պահվածքը, գեղեցիկ բանաստեղծական խոսքերի հետ միասին Ձեր գործարար հայրենասիրությունը, Ձեր հավատն ու հիացումը այսօրվա հայրենիքի հանդեպ:

Դուք իրավունք չունեք օր կորցնելու, տվեք անդալսման թղթին Ձեր վարպետացած գրչի, Ձեր պայծառ արվեստի հարստությունները:

Կհուսեն, կգնան ժամանակները, և կմնա միայն գործը և իր՝ մարդու

առասպելը, քանի որ յուրաքանչյուր ստեղծագործող, յուրաքանչյուր վառ անհատականություն իրենից հետո պիտի թողնի իր առասպելը:

Այնուհետև ամբիոնին մոտեցավ Վեհափառ Հայրապետը՝ Իր գնահատանքի և օրհնության խոսքն ասելու Եղիվարդի գրական գործունեությանը նվիրված:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Այս օրերին մեր Մայր տաճարի զանգակները մի անգամ ևս հնչեցին զվարթ ու հաղթական, որովհետև մեզ մոտ՝ Մայր Աթոռում ընդունեցինք իբրև ցանկալի հյուրեր բարձրաստիճան ներկայացուցիչները մեր եկեղեցու, որոնք գործում են արտասահմանում՝ իրենց գլուխը ունենալով ամենապատիվ պատրիարքը հայոց Երուսաղեմի՝ տ. Եղիշե արքեպ. Տերտերյան: Նրան ընկերակցում են Արևմտյան Եվրոպայի և Փարիզի հոգևոր առաջնորդ գեր տ. Սերովբե արքեպ. Մանուկյան և գեր. տ. Շահե արքեպ. Աճեմյան՝ դիվանապետը պատրիարքական սուրբ Աթոռին և վերատեսուչը Ժառանգավորաց վարժարանի:

Նրանք ժամանել են Մայր Աթոռ սուրբ Էջմիածին Մեր հրավերով՝ զբաղվելու համար մի շարք եկեղեցական հարցերով, հատկապես կապված հառաջիկա աշնան հանդիսությանց հետ, որոնք տեղի են ունենալու մեզ մոտ:

Այս օրերին ժամանել են Մայր Աթոռ նաև Լիբանանի հայ հասարակական հայտնի դեկավար գործիչներ, տիարք պրոֆ. Բարունակ Թովմաչյան և Հարություն Ճերեճյան, որոնք եկել են՝ Լիբանանում, Բեյրութում, ստեղծված ողբերգական կացությանց առնչությամբ, այնտեղի կարոտյալ ու տագնապյալ հայերին նյութական օգնություն հասցնելու ծրագրով, ծրագիր, որ տակավին սրանից չորս ամիսներ առաջ կազմեցինք Մայր Աթոռում, և որը գործադրության դրվեց Մեր հայրապետական կոչով: Մենք հույս ունենք, որ Մեր կոչով սկիզբ առած հանգանակությունը հաջողությամբ կպսակվի, և մոտ ապագային նյութական օգնությունները կհասնեն այնտեղ՝ Բեյրութ, մեր կարոտյալ եղբայրներին և քույրերին:

Այս կապակցությամբ, խոր գնահատանքով պետք է նշենք, թե Սերովբե արքեպիսկոպոս շատ շնորհակալ աշխատանք է ծավալում Արևմտյան Եվրոպայում, որի ջանքերով արդեն հանգանակվել է մոտ մեկ միլիոն ֆրանսական ֆրանկ, ինչ որ մեծ հաջողություն պետք է նկատել: Ավելի մեծ գումարներ հանգանակվում են Ամերիկայում: Այսպիսով, մասամբ զոհն պիտի բուժվեն վերքերը լիբանանահայ կարոտյալ ժողովրդին:

Օգնության ծրագրի մեջ կարևոր տեղ է գրավում Լիբանանի հայ վարժարաններին և ուսուցիչներին նյութապես օժանդակելու անհրաժեշտությունը, որովհետև, կրթական հաստատությունները մանավանդ, շատ ծանր վիճակի մեջ են գտնվում, և եթե ժամանակին օգնություն չհասնի, այդ հաստատություններից մի զգալի մասը կարող են փակման վտանգի առաջ գտնվել:

Մենք հավատում ենք, թե ստեղծված ողբերգական կացությունը շուտով կվերանա եղբայրական Լիբանանում ու այնտեղ հաստատված հայաշունչ ու հայախոս մեծ համայնքը կվերագտնե իր բնականոն ու խաղաղ կյանքը, և կշարունակե իր հոգևոր ու մշակութային առաքելությունը մեր վերածնած Մայր Հայաստանի ու հայաստանցի ժողովրդի կողքին:

Երուսաղեմի սրբազան պատրիարքի՝ Մայր Աթոռ այս այցելության առ-

թիվ հաճելի եղավ Մեզ կազմակերպել ներկա հանդիսությունը՝ նվիրված նրա գրական վաստակին: Քիչ առաջ բոլորս լսեցինք սքանչելի խոսքը բանաստեղծուհի Մարո Մարգարյանի: Մենք խորապես հուզվեցինք, թեև բավականին ծանոթ էինք Եղիվարդի գործերին: Բայց լսելով Մարո Մարգարյանին, մի բանով ավելի լավ հասկացանք բանաստեղծ պատրիարքին:

Կարծում ենք, թե բոլորիդ զգացմունքների ու գնահատանքների թարգմանը կհանդիսանանք, եթե հրապարակավ մեր բոլորի շնորհավորանքը և շնորհակալությունը հայտնենք մեր հարգելի և տաղանդավոր բանաստեղծուհուն:

Եվ այժմ մի քանի խոսք Եղիվարդի գրական գործի մասին:

Երբ 1951 թվականին Մայր Աթոռ հրավիրվեցինք հանգուցյալ կաթողիկոսի կողմից՝ եպիսկոպոսական աստիճան ստանալու, գիտեինք, որ նույն նպատակով հրավիրված էին նաև Երուսաղեմից երեք միաբաններ, որոնց գլուխը գտնվում էր Եղիշե վրդ. Տերտերյանը: 2 էինք ճանաչում նրան և ոչինչ չգիտեինք նրա մասին: Այդ օրերին պատահաբար Մեր ձեռքը անցավ արտասահմանից ստացված մի ամսագիր, որի մեջ տպված էր Եղիվարդի «Նեղոսի փիին» բանաստեղծությունը: Առաջին իսկ տողերից ցնցվեցինք ու զարմացանք նույնիսկ, թե հեռավոր մի վանքում մի անծանոթ վարդապետ այսպիսի մի հզոր բանաստեղծական գործ կարող է հորինել: Եվ իսկապես, այդ բանաստեղծությունը գրված էր բացառիկ ջերմ շունչով ու հզոր ներշնչումով: Առանց Եզրիպտոսը, Նեղոսը տեսնելու, բայց միայն այդ բանաստեղծությունը կարդալով մարդ կարող է տեսնել պատկերը այդ երկրին, զգալ կիզիչ ջերմությունը արևին, ավազին և կապույտը ջրերին՝ առավելագույն ճշմարտացիությամբ:

Ծառ ուրախացանք անշուշտ, որ շուտով պիտի հանդիպինք այդ բանաստեղծ վարդապետին, և Մեր առաջին տեսության պահին Երևանում, Մեր հիացմունքը հայտնեցինք իրեն:

Իրոք որ Եղիվարդ վավերական բանաստեղծ է: Բանաստեղծությունը Մեր հասկացողությամբ ծնունդ է առնում այն հոգեկան գործողությունից, այն երկնատուր շնորհից, որով հեղինակի հուզականությունը ճառագայթում է հոգուց դեպի դուրս, տարածվում է բնության վրա, մարդկանց ու կյանքի վրա, երևույթների ու դեպքերի վրա, գաղափարների վրա և զանոնք լուսավորում է, պաշտոնակերպում յուրահատուկ կերպով, գեղեցկորեն, ավելի ցայտուն դարձնելով նրանց թաքուն և իրական ճշմարտությունը՝ ամեն մի հեղինակ այդ բոլորի վրա դնելով իր անհատականության դրոշմը:

Կարծում ենք, այսպես մոտենալով Եղիվարդի գործերին, կարող ենք վճռապես հաստատել, թե նա իրոք ճշմարիտ բանաստեղծ է: Այստեղ իհարկե ծագում է մի հարց, մի գեղագիտական հարց. ո՞րն է ուղիղ հարաբերությունը բանաստեղծության առարկայի և հորինված բանաստեղծության միջև: Ինչպես գիտեք, արվեստի անդաստանի մեջ տարբեր ուղղություններ կան: Կան արվեստագետներ, որոնք իրենց հուզականությամբ ու երևակայությամբ այն աստիճան կհեղեղեն տվյալ առարկան, բնությունը, մարդկային կյանքը կամ գաղափարները, որ նրանք կկորցնեն իրենց իսկությունը, իրենց ճշմարտությունը. միգուցե կդառնան գեղեցիկ, այսինքն գեղեցկորեն իդեալականացված, բայց կհեռանան իրականությունից ու ճշմարտությունից: Մեր կարծիքով վավերական արվեստագետը, վավերական բանաստեղծը այն է, որ գիտե ներդաշնակություն և ուղիղ հավասարակշռություն դնել իրականության ու ճշմարտության և հորինված ստեղծագործության միջև: Այս սկզբունքը ինքը Եղի-

վարդն էլ արտահայտում է, թեև հպանցիկ կերպով, իր հրատարակած վերջին գործի՝ «Հեթանոսաց Առաքյալ»-ի հառաջաբանի մեջ, որտեղ ասում է. «Իմ սրտի ավելի մոտ նկատեցի ճշմարտությունը, քան գեղեցկությունը»: Բանաստեղծ Եղիվարդ ընդհանրապես իր բոլոր գործերի մեջ, չափածո թե արձակ, պահպանում է այդ ուղիղ հավասարակշռությունը: Ոչ իրականությունն է զոհում արվեստին, ոչ էլ արվեստը սխալ հասկացված իրապաշտության, որը տանում է դեպի լուսանկարչական մատուրալիզմ:

Վավերական բանաստեղծ է Եղիվարդ մասն իր մտածումները և հույզերը պատկերելու իր հզոր կարողությամբ: Նրա բանաստեղծությունները շատ հաճախ գեղեցիկ պատկերավորումներ են: Նա նկարում է խոսքերով, խոսքեր, որոնք սակայն ոչ թե լոկ մտքի կառուցվածքներ են, այլ նրա հոգուց պոռկացող հուզումների պատկերավոր արտահայտություններ:

Անցյալ դարու ֆրանսացի հայտնի բանաստեղծ և գրական քննադատ Էմիլ Դեշան, Վիկտոր Հյուգոյի սերունդից, բնորոշում է բանաստեղծությունը որպես «նկարչություն, որ շարժվում է, և որպես երաժշտություն, որ մտածում է»: Մենք կարծում ենք, որ այս ճիշտ սահմանումը ամբողջապես համապատասխանում է Եղիվարդի բանաստեղծական տաղանդին և ստեղծագործության:

Կուզեինք ավելացնել նաև, որ Եղիվարդ բանաստեղծ է ոչ միայն իր գրական գործերի մեջ, այլ նաև կյանքում, իր առօրյա կյանքում իսկ, իր փոթորկումների մեջ, իր պալքարների մեջ, իր որոնումների մեջ, թե՛ եկեղեցական կյանքի մակարդակի վրա, թե՛ ազգային-հասարակական կյանքում և թե՛ իր անհատական կյանքում: Այս բոլորից վեր, սակայն, այս երեկո և երբ գովքն ենք հյուսում բանաստեղծ Եղիվարդի, չմոռանաք, որ նա ոչ միայն հաջ հոգևորական է և տաղանդավոր բանաստեղծ ու մտածող, այլ նաև վավերական հաջ մարդ, հայկական հոգի կրող անհատականություն, ախթամարյան հարազատությամբ: Եղիվարդ իր ողջ կյանքով, իր ողջ գործունեությամբ և իր գրական վաստակով ամբողջապես հաջ է և, հաջ լինելուց բացի, նա ուրիշ որևէ այլ բան չի կարող լինել: Նա ապրում է մեր ժողովրդի անցյալով ու ներկայով և ապագայի տեսիլքներով: Նրա համար հայոց պատմությունը, մեր փոթորկալից, մեր ողբերգական ու հերոսական պատմությունը մի բաց գիրք է և կենդանի աղբյուր ներշնչանքի: Նրա համար Հայաստանյայց եկեղեցին նույնքան կենդանի մի վեմ է հաջ ժողովրդի կյանքի հետ անխզելի կերպով կապված հավիտյան, նրա համար մեր վերածնված արդի Հայաստանը հավիտենական հայրենիքն է ամենայն հայոց, նրա համար ս. Էջմիածինը նույնքան հավերժական սրբություն սրբոցն է աշխարհի բոլոր հայերի: Այսպես է, որ սրբազան պատրիարքը՝ Եղիշե արքեպիսկոպոս, Մեր ամենահարազատ, ամենահանդուգն, ամենահզոր գործակիցն է արտասահմանում:

Հարգանք և օրհնություն բանաստեղծ Եղիվարդի պայծառ վաստակին:

Հանդիսության առաջին բաժնի վերջում, ներկաների ջերմ ծափահարությունների ներքո, խոսք առավ նաև բանաստեղծ Եղիվարդը՝ իր շնորհակալության և երախտագիտության խոսքն ասելու մասնավորաբար Հայոց Հայրապետին, որ այս հաճելի անակնկալը պատրաստել էր.

Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐԿԻ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեք,

Մեծահարգ տիար պարոն Գաապարյան,

Գերաշնորհ և հոգեշնորհ եղբայրներ և
Հարգելի հարազատներ,

Մոտավորապես մեկ ու կես ժամ է, որ Նորին Սուրբ Օծությունեն սկսյալ մինչև մեր սիրելի եղբայրը գեր. Սերովբե Մանուկյան և բոլորիս սիրելի և հարգելի տաղանդավոր բանաստեղծուհի Մարո Մարգարյան իմ տկար անձս փառաբանելու ձեռնարկել են:

Հինգ օրեր առաջ, երբ որ մայր հայրենիք և Էջմիածին կծամանեինք մեր եղբայրներու հետ միասին, ես իրական անակնկալի մը առջև գտնվեցա, երբ լսեցի, որ այս իրիկուն Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ չըսեմ իմ գրականության, բայց գրածներուս նվիրված է:

Այս առիթով իմ ամենախոր երախտագիտությունը կհայտնեմ Նորին Սուրբ Օծության, որուն նկատմամբ ամբողջական հիացում և սեր ունեցած եմ այն օրեն ի վեր, երբ միասին ծունկի եկանք Իջման սեղանին առջև, և անկե հետո, երբ Անիկա իմ պետս և իմ բարեկամս եղավ:

Գիտեմ իր զգացումները, գիտեմ իր մեծությունը և գիտեմ, որ այսօրվա այս պատրաստությունն ալ իր մեծ բարյացակամության մեկ փշրանքն է իմ անձիս նկատմամբ:

Ասկե քսան տարիներ առաջ, երբ Նորին Սուրբ Օծությունը կընտրվեր իբրև Լուսավորչի գահակալը, շատ քիչեր թերևս զգացին, թե նոր արշալույս մը կբացվեր Էջմիածնի հորիզոնին վրա: Եստ քիչեր զգացին, թե ինչ որ երեք հարյուր տարիներն ի վեր չէր իրագործված այս աշխարհին մեջ, այսինքն Էջմիածնա շրջանակին մեջ, Իրմով պիտի իրագործվեր:

Թե Անիկա, չըսեմ, թե այսպես միապաղաղ և, բայց, վերջապես, ոչ ցանկալի այս մթնոլորտին, այս միության կբերեր իր հոգիին լույսը, իր հոգիին մեղորդ, իր մտքին խուճկը: Եվ այդ էր պատճառը, որ ոչ միայն ամբողջ արտասահմանը, այլ նաև հայրենիքի ժողովուրդը իր նկատմամբ սեր և հարգանք ունի: Եվ այդ է պատճառը, իր մեր հայրենի կառավարությունը առաջին մեկ օրեն Նորին Սուրբ Օծության մեջ տեսավ այն, ինչ որ ճշմարիտ եկեղեցականի, ինչ որ (ճշմարիտ հայու հարազատ հոգին է, որովհետև եթե մեկը ճշմարիտ հայ չէ, չի կրնար ճշմարիտ եկեղեցական ըլլալ, և եթե մեկը ճշմարիտ եկեղեցական չէ, չի կրնար ճշմարիտ հայ ըլլալ:

Եվ այսօրվա այս հանդեսն ալ Նորին Սուրբ Օծության՝ իմ սիրելի Պետիս հոգիեն կաթած այդ մեկ շնորհն է, որ ես ձեզի հետ կվայելեմ այս պահուս:

Իմ շնորհակալություններս նաև իմ հոգեկցորդ եղբորս՝ շատ սիրելի Սերովբե արքեպ. Մանուկյանին, որուն խոսքը լսեցիք, թե որքան տաք, որքան գեղեցիկ և որքան հզոր էր, բայց որքան ալ չափազանց էր իմ անձիս նկատմամբ: Սերովբե արքեպան իր ամենեն գեղեցիկ խոսքը ըրավ այսօր ոչ թե որովհետև իմ գրականությանս կամ արժեքներուս մասին կխոսեր, այլ որովհետև իմ մասին կխոսեր, այսինքն իր բարեկամի մասին կխոսեր, և ատիկա չէր կրնար տարբեր չըլլալ:

Իմ շնորհակալությանս, խորունկ և զորավոր ըսեմ, բաժիններեն մեկը մեր սիրելի բանաստեղծուհի Մարո Մարգարյանին, որ իր հոգիին բոլոր լույսերը, բոլոր բոցերը հավաքած էր՝ լուսավորելու համար իմ մթությունս, զորակոչի ենթարկած էր իր ուժերը՝ պաշտպանելու իմ թերություններս և սխալներս:

Բոլորին, (Նորին Սուրբ Օծությունեն սկսյալ, բոլորին կհայտնեմ իմ խոր շնորհակալությունս, որովհետև ինձի վայել չէ ասկե ավելի ըսել:

Տաղը բույե ընդմիջումից հետո սկսվում է հանդիսության գեղարվեստական բաժինը:

Գեղարվեստական բաժնի ծրագիրը հիմնականում բաղկացած էր **Եղիվարդի** չափածո և արձակ ստեղծագործություններից:

Առաջինը ելույթ ունեցան Մայր Աթոռի երիտասարդ միաբաններն ու հոգեվոր ճեմարանի Գ դասարանի սաները:

Հակոբ սրկ. Խաչատրյանը, Վաչագան Ավետիքյանն ու Հովսեփ Պալըզյանն արտասանեցին «Կարմիր Զօրավար» պոեմից հատվածներ՝ ապրումով ու հուզումով: **Տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը** երկու հատված ընթերցեց **Եղիվարդի** «Օտարականը» գործից: **Տ. Արսեն եպս. Բերբերյանը** գրական-երաժշտական մի կոմպոզիցիա էր պատրաստել **Եղիվարդի** «Կարմիր Զօրավար» պոեմի Վարդանի պատգամի մի հայրենաշունչ հատվածի վրա: Այդ հատվածի երաժշտական մասը կատարեց տպավորիչ մեներգով երգիչ **Կոստանդին Միմոնյանը**: Ֆելետայի վրա նվագակցում էր **Լիա Տեր-Պետրոսյանը**, դաշնամուրի վրա՝ **Կիրակոս սրկ. Հովնանյանը**:

Ծարտարապետ **Արտաշես Մեանյանը** կիթառի վրա կատարեց իր երաժշտական ստեղծագործությունը՝ «Կարմիր Զօրավար» պոեմի տեքստի վրա գրված:

Ապա ելույթ ունեցավ կանանց քառյակը, որը կատարեց Կոմիտաս վարդապետի «Երկինքն ամպել ա» (գործիքավորումը՝ Սարգիս Ասլամազյանի) և Գուրգեն Ադամյանի «Արագած» պարը:

Հանրապետության ժողովրդական արտիստ, պրոֆեսոր, թավջութակահար, կոմպոզիտոր **Գուրգեն Ադամյանը** կատարեց Կոմիտաս վարդապետի «Էս առուն» և «Գարնանային» իր ստեղծագործությունը: Դաշնամուրի վրա նվագակցում էր Էլենոնրա Ադամյանը:

Ասմունքողների համամիութենական մրցույթի դափնեկիր **Սուսաննա Գաբրիելյանը** և ժողովրդական արտիստուհի **Մետաքսյա Միմոնյանը** մեծ արվեստով և խորը հուզականությամբ արտասանեցին հատվածներ **Եղիվարդի** «Ընտիր Էջեր» ժողովածուից ու «Ս. Մեսրոպ» պոեմից:

Գեղարվեստական ծրագրի ավարտին մեներգներով հանդես եկավ երգչուհի **Էլլադա Չախոյանը**, որը փայլուն հաջողությամբ կատարեց Կոմիտաս վարդապետի «Հավիկ մի պայծառ»-ը, «Կանչե, կոունկ, կանչե» և «Ծողեր ջան» ստեղծագործությունները:

Անվանի բանաստեղծ **Եղիվարդի** գրական գործունեությանը նվիրված հանդիսությունը վերջացավ խմբովին երգված «Էջ Միածինն ի Հօրե»՝ շարականով:

ԱՅՑ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մարտի 16-ին, երեքշաբթի օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը և տ. Եղիշե պատրիարքն այցելեցին Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան:

Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարքին ողջկցում էին տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Ծաֆե, տ. Վահան, տ. Արսեն սրբազաններն ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը:

Մատենադարանի գլխավոր մուտքի առաջ Վեհափառ Հայրապետին, պատրիարք սրբազանին և նրանց ողջկցող անձանց դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մատենադարանի դիրեկտորի տեղակալ Բաբգեն Չու-

գաազյանը, գիտաշխատողներ դուկտ. Ասատուր Մնացականյանը, դուկտ. Հրաչ Փափազյանը և դուկտ. Սեն Արևշատյանը:

Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարքի ներկայությունը, որպես ձեռագրաց Մատենադարանի հոգատար բարեկամների, ջերմ խոսքերով ողջունեցին Մատենադարանի դիրեկտորի տեղակալ Բաբգեն Չուգասյանը և Մատենադարանի գիտաշխատողներ դուկտ. Ասատուր Մնացականյանն ու դուկտ. Սեն Արևշատյանը:

Պատասխան ճառերով հանդես եկան Վեհափառ Հայրապետը և ամենապատիվ սրբազան պատրիարքը:

Այս առթիվ Մատենադարանի ղեկավարությունը Վեհափառ Հայրապետին, սրբազան պատրիարք հորը և նրանց ուղեկցողներին ցույց տվեց հնագույն ձեռագրերի ընտիր նմուշներ, այդ թվում՝ 1269 թվականին Հոռմկլայում գրված Թորոս Ռուսինի շքեղ Ավետարանը, որ անցյալ տարի տ. Եղիշե պատրիարքը սիրով նվիրել էր Մատենադարանին, և է—Ը դարերի ձեռագիր հայ հնագույն Ավետարանը՝ Վեհափառ Հայրապետի սրտագին նվերը Մատենադարանին, որը, ի հիշատակ հանգուցյալ տիրամոր՝ Սիրանուշ Պալճյանի, կոչվում է **Վեհամոր Ավետարան**:

Ընդունելության վերջում Մատենադարանի ղեկավարությունը Նորին Սուրբ Օծությանն ու ամենապատիվ սրբազան պատրիարքին տվեց հուշանվերներ՝ որպես երախտագիտական արտահայտություն ձեռագրաց Մատենադարանի նկատմամբ նրանց ցուցաբերած մշտական ուշադրության և հոգատարության:

Սույն այցելությունն ավարտվեց ջերմ հյուրասիրությամբ:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Մարտի 17-ին, չորեքշաբթի օրը, տ. Եղիշե սրբազան պատրիարքը, տ. Սերովբե և տ. Ծախե արքեպիսկոպոսների ուղեկցությամբ, այցելեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանին:

Սրբազան պատրիարք հոր, նրան ուղեկցող սրբազանների և պրն. Ս. Գասպարյանի միջև տեղի ունեցավ անկեղծ ու սիրալիր զրույց, ջերմ մըթնուրտում:

Զրույցի ավարտին բարձրաստիճան հյուրերի պատվին տրվեց հյուրասիրություն:

ՈՂՋԵՐԹԻ ԾԱԾԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Մարտի 18-ին, հինգշաբթի օրը, ժամը 15-ին, Ամենայն Հայոց Հայրապետը Վեհարանի սեղանատանը սրբազան պատրիարք հոր և տ. Սերովբե ու տ. Ծախե արքեպիսկոպոսների պատվին տվեց ողջերթի ճաշկերույթ, որին ներկա էին տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Վահան, տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհաննես Թովումյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ ճարտարապետ դուկտ. Վարազդատ Հարությունյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Ծահրազյանը:

Հրաժեշտի սույն ընդունելությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մի-

նիստերն են սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը բաժակ առաջարկեց տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր, տ. Սերովբե և տ. Ծահե արքեպիսկոպոսների կենացը և բարի ճանապարհ մաղթեց նրանց:

Ի պատասխան Վեհափառ Հայրապետի ջերմ խոսքերի, տ. Եղիշե սրբազան պատրիարքը սրտագին շնորհակալություն հայտնեց Նորին Սուրբ Օծությանը ջերմ ընդունելության և հյուրասիրության համար՝ նշելով, որ խոր գոհունակությամբ և լավագույն տպավորություններով ժամանակավորապես հրաժեշտ է առնում Ամենայն Հայոց Հայրապետից և Մայր Աթոռ ս. Էջմիածնից:

Շնորհակալության և երախտագիտության նույնպիսի ջերմ խոսքերով հանդես եկան տ. Սերովբե և տ. Ծահե արքեպիսկոպոսները:

ՄԵԿՆՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Երևանի օդանավակայանից Մայր Աթոռի մեծարգո հյուրերին, հանուն Վեհափառ Հայրապետի, ճանապարհեցին տ. Կոմիտաս, տ. Վահան, տ. Արսեն սրբազանները և Մայր Աթոռի երիտասարդ միաբանները:


Տ. Եղիշե սրբազան պատրիարքին, տ. Սերովբե և տ. Ծահե արքեպիսկոպոսներին օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեց նաև Հայկական ՍՍՀ Միևնիստերնի սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Մայր Աթոռի բարձրաստիճան հյուրերն իրենց վերադարձի ճանապարհին մի քանի օր կմնան Լենինգրադում՝ որպես թանկագին հյուրերը Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ տ. Նիկողիմ արքեպիսկոպոսի:

Բարի ճանապարհ մեր հյուրերին:

Ա. Հ.





ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՎԱՔԸ ՍՐԲՈՑ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Գեղեցիկ սովորություն է դարձել՝ ամեն տարի Մայր Աթոռի և Անթիպոլսի թեմերի եկեղեցականների հավաքը ս. Էջմիածնում: Այս տարի ևս, մարտի 9-ին, երեքշաբթի օրը, Մայր Աթոռ ժամանեցին Անթիպոլսի թեմերի սրբազան առաջնորդները, վարդապետներն ու քահանա հայրերը՝ հետևյալ կազմով.

Արարատյան թեմ՝

առաջնորդական փոխանորդ՝ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան.

Քահանա հայրեր՝

տ. Ռուբեն ավագ քին. Մարտիրոսյան.
տ. Կարապետ քին. Գրիգորյան.
տ. Սարգիս քին. Թաշճյան.
տ. Ստեփան քին. Տեր-Գևորգյան.
տ. Հարություն ավագ քին. Մարկոսյան.
տ. Գաբրիել քին. Հովհաննիսյան.
տ. Նշան քին. Հանեչյան.
տ. Ղևոնդ քին. Սոմունջյան.
տ. Աբրահամ քին. Մարգարյան.
տ. Գալուստ քին. Բեքիկյան.
տ. Վահան ավագ քին. Տեր-Հովակիմյան.
տ. Հարություն քին. Խեչումյան.
տ. Գրիգոր քին. Ծատուրյան.
տ. Թադեոս քին. Տերտերյան.
տ. Հակոբ քին. Հակոբյան.
տ. Վարդան քին. Քեչիշյան.
տ. Հակոբ քին. Երանոսյան.

տ. Եղիշե քին. Աբրահամյան.
տ. Մկրտիչ քին. Տեր-Ստեփանյան.
տ. Կարապետ ավագ քին. Հովնանյան.
տ. Խաչատուր քին. Միհրաբյան.
տ. Ոսկան քին. Ծիրվանյան.
տ. Սամվել քին. Համբարյան.
տ. Հարություն ավագ քին. Տերտերյան.
տ. Գրիգոր ավագ քին. Չափթեյան.
տ. Սարգիս քին. Չափարյան.
տ. Խաչիկ քին. Կիրակոսյան.
տ. Բարդուղիմեոս քին. Ղուկասյան.
տ. Բարսեղ քին. Միրզախանյան.
տ. Թովմաս քին. Տերտերյան:

Ծիրակի թեմ՝

առաջնորդ՝ տ. Նարեկ եպս. Ծաքարյան.

Քահանա հայրեր՝

տ. Վազգեն ավագ քին. Ղարազյոզյան.
տ. Արամ ավագ քին. Բոյաջյան.
տ. Նորայր ավագ քին. Սարգսյան.
տ. Զավեն քին. Մոսկովյան.
տ. Վահան քին. Մարգարյան.
տ. Կարապետ քին. Քելամյան.
Տ. Սուրեն քին. Ծատուրյան:

Վրահայոց թեմ՝

առաջնորդ՝ տ. Գևորգ եպս. Սերայդարյան.

Քահանա հայրեր՝

տ. Համբարձում քին. Մելքոնյան,
տ. Ժիրայր քին. Կոնստանյան.

տ. Հովհաննես ավագ քին. Դանիելյան.
տ. Շմավոն քին. Սաղոյան:

Ադրբեջանի թեմ՝
ատաջնորդ՝ տ. Հուսիկ եպս. Սանթուրյան.

Քահանա հայրերից՝
տ. Ղուկաս քին. Հակոբյան:

Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի թեմից՝

առժամյա հոգևոր հովիվ Մոսկվայի հայոց՝ տ. Անանիա վրդ. Արաքաջյան.

տ. Բագրատ արդ. Գալստյան.

տ. Վահան քին. Սուրենյան.

տ. Գրիգոր քին. Տերտերյան.

տ. Ղևոնդ քին. Աղանանյան:

Մայր Աթոռի միաբանությունից և Վաղարշապատի վանքերից՝

տ. Արսեն եպս. Բերբերյան.

տ. Մամբրե վրդ. Մարգարյան.

տ. Մասիս վրդ. Գալստյան.

տ. Տիրան արդ. Կյուրեղյան.

տ. Թորգոմ արդ. Մուշեղյան.

տ. Մոմիկ արդ. Սարգսյան.

տ. Հովհաննես ավագ քին. Մարության.

տ. Հակոբ քին. Հակոբյան.

տ. Նշան քին. Բեյլերյան.

տ. Հովսեփ քին. Հակոբյան.

տ. Գուրգեն քին. Աշուրյան.

տ. Արտակ քին. Սիմոնյան.

տ. Գրիգոր քին. Փանոսյան.

տ. Առաքել քին. Խաչատրյան.

տ. Վաղարշակ քին. Բաղումյան.

տ. Միքայել քին. Թեմուրյան.

Հակոբ սարկավագ Գլընճյան.

Հակոբ սարկավագ Խաչատրյան:

Այս առթիվ Մայր Աթոռում կազմվել էր մի հանձնաժողով՝ կազմակերպված անցկացնելու համար սույն հավաքը: Հանձնաժողովի կազմում էին.

տ. Վահան եպս. Տեղյան (նախագահ).

տ. Հուսիկ եպս. Սանթուրյան.

տ. Նարեկ եպս. Ծաքարյան.

տ. Գևորգ եպս. Սերայդարյան.

տ. Հովհաննես ավագ քին. Մարության:

Մարտի 10-ին, չորեքշաբթի.—Մայր տաճարում հանդիսավորությամբ պաշտվում են Գիշերային, Առավոտյան և Արևագալի ծամերգությունները:

Ժամերգությանց ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Արևագալի ծամերգության սկզբին Արարության թեմից տ. Նշան քին. Հանելյանը քարոզ է խոսում հետևյալ բնաբանով՝ «Ծանապարհ և ճշմարտություն և կեանք Քրիստոս»:

Ժամերգության ավարտին, լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում հյուրերին

և խնդրում Նրա օրհնությունը: Վեհափառ Հայրապետը քարի գալուստ է մաղթում հյուրերին, տալիս իր օրհնությունը և հավաքի մասնակիցների աշխատանքին մաղթում հաջողություն:

Այնուհետև հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում հավաքի պաշտոնական բացումը:

Տերմնական աղոթքով սկսվում է նիստը: Բացման խոսքը կատարում է ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տեղյանը՝ շեշտելով Մայր Աթոռի և ներքին թեմերի հոգևորականների սույն հավաքի կարեկրությունը: Այնուհետև ընտրվում են երկու քարտուղարներ՝ տ. Ռուբեն ավագ քին. Մարտիրոսյանը և տ. Արամ ավագ քին. Բոլաջյանը:

Մոսկվայի հայոց առժամյա հոգևոր հովիվ տ. Անանիա վրդ. Արաքաջյանն առաջինը դասախոսում է «Հայ եկեղեցու պատարագի ծագումն ու զարգացումը» թեմայի շուրջ: Դասախոսությունից հետո հայր սուրբը պատասխանում է ներկաների հարցերին:

Այնուհետև հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քին. Մարությանը՝ հետևյալ թեմայի շուրջ զեկուցումով. «Հայ հոգևոր դպրոցների դերն այսօր»:

Օրվա երրորդ դասախոսությունը կարդում է հանձնաժողովի նախագահ տ. Վահան եպս. Տեղյանը՝ «Միջնադարյան հայ հոգևոր դպրոցները» թեմայով:

Մարտի 11-ին, հինգշաբթի.—Ժամը 10.30-ին գումարվում է երկրորդ նիստը: Նախագահում է Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը: Հրավիրվում է բանախոսելու ուխտավորաքար Մայր Աթոռ ժամանած Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Ծաֆե արքեպ. Աճեմյանը՝ «Հայ Երուսաղեմն այսօր» թեմայի շուրջ: Սրբազանը հանգամանորեն ներկայացնում է հայ Երուսաղեմի պատմությունը՝ սկզբից մինչև մեր օրերը, և մասնավորաբար կանգ առնում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի կատարած եկեղեցական, կրթական-մշակութային դերի և սրբատեղիների պահպանության նկիրա-կան գործում Երուսաղեմի հայոց զինվոր-յալ միաբանության դժվարին և գնահատելի գործունեության վրա:

Ապա հանդես է գալիս տ. Ռուբեն ավագ քին. Մարտիրոսյանը՝ «Հայ եկեղեցու ձայնը խաղաղության պայքարում» թեմայի մասին զեկուցումով: Տ. Վազգեն ավագ քին. Դարագյոզյանը խոսում է «Հայ քահանայի

դերը հայ հավատացյալի ընտանեկան կյանքում» թեմայով: Դրանով ավարտվում է հավաքի երկրորդ նիստը:

Հոգևոր անմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանն արտասանում է փակման խոսքը՝ հանրագումարի բերելով կատարված աշխատանքները: Լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի «Պահպանիչ»-ով և միասնաբար «Հայր մեր»-ի երգեցողությանը ավարտվում է հոգևորականաց հավաքի աշխատանքները:

Երեկոյան ժամը 18-ին Մայր տաճարում պաշտվում է հանգստյան ժամերգություն, որին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

Ժամերգության ավարտին ս. Հռիփսիմե վանքի ժամասաց տ. Հովսեփ քհն. Հակոբյանը քարոզում է հետևյալ բնաբանով. «Զի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է. որում ոմանց ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատոցն, և զանձինս արկին ընդ բազում ցաւօք» (Ա Տիմ. Զ 10):

Այնուհետև Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան:

Ժամը 19-ին Նորին Սրբությունը բարե-

հաճում է ընդունել հավաքի մասնակից բարձրաստիճան հոգևորականներին, Մայր Աթոռի սիաքանությանը և քահանա հայրերին: Հայոց Հայրապետը խոսում է մեր ժողովրդի կյանքում հայ հոգևորականության և մանավանդ քահանա հայրերին վստահված հոգևոր, եկեղեցաշեն ու հայրենամարմեր ծառայության մասին և թելադրում լինել արժանի և բարի մշակներ իրենց հոգևոր խրանսքին հանձնված հավատացյալների կյանքում՝ առաջնորդելու համար նրանց դեպի բարին, ազնիվն ու գեղեցիկը: Իր պատգամի ավարտին Վեհափառ Հայրապետը քահանա հայրերին է նվիրում վերջերս Մայր Աթոռում հրատարակված Նոր Կտակարանի արևելահայերեն նոր թարգմանության մեկական օրինակ՝ Ավետարանի լույսով ու քրիստոնեական հավատքով առաջնորդելու համար հավատավոր հայ ժողովրդի զավակներին:

Բոլոր ներկաներն աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը և լավագույն տպավորություններով մեկնում Մայր Աթոռից:

ՀԱԿՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ԳԸԼԸՆԾՅԱՆ





ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Մարտի 13-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի է ունենում մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր Աթոռում ուխտավորաբար գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Ծաֆե արքեպ. Աճեմյանը մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն է շնորհում Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ տ. Տիրան արք. Կյուրեղյանին, տ. Թորգոմ արք. Մուշեղյանին և տ. Մովսիկ արք. Սարգսյանին:

Մայր Աթոռի երիտասարդ միաբանները նախապես իրենց վարդապետական թեզերն էին ներկայացրել Վեհափառ Հայրապետին: Նորին Արքության հանձնարարությամբ կազմված հանձնաժողովը, որի կազմում էին ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր ու հոգևոր ճեմարանի դասախոս Արթուր Հատիտյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար ու հոգևոր ճեմարանի դասախոս Պարզև Ծաֆազյանը, քննելով ավարտաճառերը, իրենց զեկուցա-

գիրը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Ժամը 12-ին Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվում է «Կանոն մասնաոր իշխանութեան» տվչության կարգի արարողությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Մասիս վրդ. Գալստյանը: Արարողությանը ներկա են լինում Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը և վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերադյանը:


Արարողության ավարտին տ. Ծաֆե արքեպ. Աճեմյանը շնորհավորում է նորընծա վարդապետներին և իր բովանդակալից խրատականում շեշտում՝ հայ եկեղեցու կյանքում վարդապետի նվիրական կոչման կարևորությունը հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր դաստիարակության գործում:

Վերադառնալով Մայր Աթոռ, նորընծա վարդապետները ներկայանում են Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Արքության օրհնությունն ու շնորհավորանքը:

Նորին Արքությունը հայրական ջերմ սիրով ընդունում է նորընծա վարդապետներին, շնորհավորում նրանց վարդապետական աստիճանը և քարեմադրում, որ նրանք լինեն «սշակք առանց ամօթոյ»՝ Տիրոջ այգու ծառայության գործում:

S. Տիրան վրդ. Կյուրեղյան

Ավագանի անունով՝ Ղազարոս:
Ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 2-ին Կիպրոսի Նիկոզիա քաղաքում, արհեստավորի



ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Մելիքյան-Ուզունյան ազգային վարժարանում: 1962 թ. ընտանիքի հետ ներգաղթել է հայրենիք, հաստատվել Կիրովական քաղաքում և ուսումը շարունակել տեղի № 18 միջնակարգ դպրոցում:

1964 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և 1970 թվականին ավարտել: Դիպլոմային աշխատանքի նյութն է եղել «Տարոնի սրբավայրերը»:

1968 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1972 թվականին՝ արքեպիսկոպոս:

Վարդապետական թեզն է՝ «Դվինի հայրապետանոցում կազմված երեք ժողովածուները»:

S. Տիրան վարդապետը նշանակվել է առաջնորդական փոխանորդ Ռուսաստանի հայոց թեմի:

S. Թորգոմ վրդ. Մուշեղյան

Ավագանի անունով՝ Արտաշես:
Ծնվել է 1947 թվականի մարտի 22-ին Երևանում: 1957—1967 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, միևնույն ժամանակ աշխատել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային կից երկրաբանական ինստիտուտում որպես լաբորանտ:

1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և 1969 թվականին ավարտել: Դիպլոմային աշխատանքի նյութն է եղել «Հայ տոմարագիտության պատմությունը և Սիմեոն Երևանցու տոմարագիտական աշխատությունը»:

1969 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1974 թվականին՝ արքեպիսկոպոս:

Վարդապետական թեզն է՝ «Տիեզերագիտությունը հայ եկեղեցական մատենագրության մեջ»:



S. Թորգոմ վարդապետն այժմ Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստից թանգարանի վարիչն է:



Տ. Մոմիկ վրդ. Սարգսյան

Ավագանի անունով՝ Հարություն: Ծնվել է 1950 թվականին Լենինականում, քահանայի ընտանիքում: 1968 թվականին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և 1969 թ. ընդունվել հոգևոր ճեմարան ու 1974 թվականին ավարտել: Ավարտաճառի թեման է եղել «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ»:

1970 թվականին սարկավագ է ձեռնադրվել, իսկ 1975 թվականին՝ արքեպ:

Վարդապետական թեզն է՝ «Հայ և լատին եկեղեցիների հարաբերությունները կիլիկյան շրջանում»:

Տ. Մոմիկ վարդապետն այժմ Վեհափառ Հայրապետի գավազանակիրն է:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին՝ մասնավոր վարդապետական իշխանություն ստանալու առիթով, և ցանկանում, որ նվիրումով ու անշահախնդրությամբ ծառայեն Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցուն և Մայր Աթոռ ս. Էջմիածնին:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մարտի 2-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տեսչական կազմի ղեկավարությամբ, երկօրյա պտույտի է մեկնում Ծաղկաձոր: Պտույտն անցնում է հետաքրքիր ու բովանդակալից, ձմեռային հաճելի պայմաններում:

*
* *

Մարտի 3-ին, չորեքշաբթի.—Մեծ պահոց առիթով Մայր տաճարում սկսվում են Արեւիկայի, Ծաշու, Խաղաղականի և Հսկման արարողությունները:

*
* *

Մարտի 4-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհաբանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Մարտի 5-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անգլիայի հայրապետական պատվիրակ և Լոնդոնի

հայոց հոգևոր տեսուչ տ. Ներսես եպս. Պողոսյանը:

Երեանի օդանավակայանում սրբազանին դիմավորում են տ. Մասիս վրդ. Գալստյանն ու տ. Մոմիկ արդ. Սարգսյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո սրբազանը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նրա օրհնությունն ու բարիգալատյան ողջույնը:

*
* *

Մարտի 7-ին, կիրակի.—Բ կիրակի քառանորդական պահոց (Արտաքսման).

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը: Արտաքսման կիրակիի հոգևոր նշանակության մասին բովանդակալից քարոզ է խոսում տ. Ներսես եպս. Պողոսյանը:

*
* *

Մարտի 11-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհաբանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին ներկա է լինում

նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փարիզի հայոց առաջնորդ տ. Սերովքե արքեպ. Մանուկյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Ժողովի սկզբին Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունում է տ. Սերովքե արքեպիսկոպոսի ներկայությունը և նրան բարի գալուստ մատթում:

Հատենի ժողովի խոսք առնելով, տ. Սերովքե արքեպանը նախ շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Նրա ողջունի և բարիգալատյան խոսքերի համար, ապա ժողովին տեղեկություններ հաղորդում Արևմտյան Եվրոպայի թեմերի և ի մասնավորի ֆրանսահայ թեմի եկեղեցական, ազգային ու մշակութային կյանքի մասին:

* *

Մարտի 12-ին, ուրբաթ.—Այսօր տ. Ներսես եպս. Պոզապալյանը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնում իր պաշտոնատեղին:

Երևանի օդանավակայանում սրբազան հորը ճանապարհում են տ. Մասիս վրդ. Գալստյանն ու տ. Մոմիկ արք. Սարգսյանը:

* *

Մարտի 14-ին, կիրակի.—Գ կիրակի քառասնորդական պահոց (Անառակին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

* *

Մարտի 21-ին, կիրակի.—Դ կիրակի քառասնորդական պահոց (Տնտեսին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: Քարոզում է տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը՝ «Եղերուք խորագետք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղանիս» (Մատթ. Ժ 16) բնաբանով:

* *

Մարտի 24-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաք, որի ընթացքում տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը զեկուցում է «Կիպրոսի հայկական գաղութը» թեմայով:

* *

Մարտի 25-ին, հինգշաբթի.—Այսօր տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, որպես նորընտիր առաջնորդական փոխանորդ Ռուսաստանի հայոց թեմի, հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնում իր պաշտոնատեղին:


Երևանի օդանավակայանում տ. Տիրան վարդապետին ճանապարհում է Հակոբ սրկ. Գըլընյանը:

* *

Մարտի 28-ին, կիրակի.—Ե կիրակի քառասնորդական պահոց (Դատաւորին).

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը: Քարոզում է տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը՝ «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» բնաբանով:





ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈՅՑԱՆ

ՍԱՀԱԿ ՁՈՐԱՓՈՐԵՑԻ

7-րդ դարի նշանավոր շարականագիրը Սահակ Ձորափորեցի կաթողիկոսն է (677—703): Ձորափորեցու բոլոր շարականները նվիրված են խաչին ու եկեղեցուն: «Զխաչին և զեկեղեցոյ Սահակ Ձորափորեցոյ, որ գնաց ընդդէմ տաճկաց» (Ծարակնոց, Վաղարշապատ, 1888, էջ 6):

Այդ շարականներն են.

1. «Կանոնն նաւակատեաց սրբոյ խաչին»

ա. «Ի վերայ վիմին հաւատոյ» (օրհնութիւն բկ ձայն):

բ. «Ի նորահրաշ նաւակատիսն» (Հարց աճ ձայն)

գ. «Ի խորանի քում սրբութեան» (Ողորմեա)

դ. «Ի տաճարի սրբութեան» (Տէր յերկնից)

ե. «Սեղան քո Տէր զօրութեանց» (Մանկունք):

2. «Կանոն վերացման սրբոյ խաչին» (ութօրէից)

Առաջին ատուրն

Ա. «Որ զանարատ բազուկս քո» (օրհնութիւն աճ)

Բ. «Այսօր պատուական խաչիս քո» (Հարց գկ)

Գ. «Մայր և կոյս» (Մեծացունցէ)

Դ. «Անուանեալ փայտ գիտութեան (Տէր յերկնից)

Ե. «Յաղթող և զնոր օրհնութիւն» (նաշու)

Ձ. «Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք»

Երկուշաբթի ատուրն

Ա. «Զօրութիւն սուրբ խաչի քո» (օրհնութիւն դձ)

Բ. «Այսօր ընդ ամպս լուսաւորս» (Հարց դձ)

Գ. «Ի յերկնից երևեալ նշանն յաղթութեան» (ողորմեա)

Դ. «Գաւազան զօրութեան (Տէր յերկնից)

Երեքշաբթի ատուրն

Ա. «Խաչն կենարար» (օրհնութիւն բկ)

Բ. «Որ յաթոռ փառաց» (Ողորմեա)

Գ. «Որախ լեր այսօր» (Հարց դձ)

Չորեքշաբթի ատուրն

Ա. «Որախ լեր սուրբ եկեղեցի» (Օրհն. դձ)

Բ. «Այսօր պայծառ և սիւն լուսոյ» (հարց դձ)

Գ. «Զորս ըստ պատկերի» (Ողորմեա)

Դ. «Որ զարդարեաց (Տէր յերկնից)

Ե. «Այսօր ուրախացեալ ցնծան» (Մանկունք)

Հինգշաբթի ատուրն

Ա. «Անապական սուրբ զխաչն» (Օրհն. բկ)

Բ. «Այսօր ցնծան դասըք» (հարց դձ)

Գ. «Այսօր ցնծան դասք հրեշտակաց» (Ճաշու գձ)

Ուրբաթ ատուրն

Ա. «Անապական սուրբ զխաչն» (Օրհն. բձ)

Բ. «Այսօր զենար գառն Աստուծոյ» (հարց դձ) իր գործատնով:

Գ. «Որ քառաթև լուսածին» (Ողորմեա գկ)

Դ. «Ով պահապան» (Տէր յերկնից)

Ծարաք ստորն

- Ա. «Որ ծագեցեր մեզ լոյս մեծ» (Օրին. դձ)
- Բ. «Քրիստոս Աստուած» (Հարց դկ)
- Գ. «Այսօր նշան լաղթող» (Ողորմեա)
- Դ. «Խաչի քո Քրիստոս երկրպագեն» (Տէր յերկնից)
- Ե. «Պարոնակեալ պահէին» (Մանկունք ստեղծ)
3. Կանոն Վարագայ խաչին
- Ա. «Նշանաւ ամենայայտ խաչի քո Քրիստոս» (Օրին. ակ)
- Բ. «Քեզ Քրիստոսի կաթողիկէ եկեղեցւոյ» (Ողորմեա դձ)
- Գ. «Հրաշափառ տեսութիւն» (Տէր յերկնից)
4. Կանոն գիւտ խաչին
- Ա. «Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս» (Օրին. աձ)
- Բ. «Այսօր խնդրի» (Ողորմ. քձ)
- Գ. «Ապափնեցաք ի խաչ քոյ» (Տէր յերկնից)
5. Կանոն Շողակաթին
- Ա. «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» (Օրին. դձ)
- Բ. «Ուրախ լեր այսօր» (Հարց դձ)
- Գ. «Որ հաստատեցեր բանիս» (Ողորմեա)
- Դ. «Էլուսաւորեալ Երուսաղէմ» (Տէր յերկնից)
- Ե. «Էջմիածինն ի Հօրէ» (Մանկունք դկ):
- Սահակ Զորափորեցու բոլոր շարականներն էլ կանոնական են և բնագրոված են Ծարակնոցի վերոհիշյալ հինգ կանոններում:
- Սահակ Զորափորեցին մեր շարականագիրների մէջ «խաչի երգիչն է»: Ինչո՞վ բացատրել այս երևույթը, որ հայոց շարականագիր կաթողիկոսն իր բոլոր շարականները միայն խաչին և եկեղեցուն է նվիրել: Պարսիկների կողմից Քրիստոսի խաչափայտի Պարսկաստան գերի տանելը 7-րդ դարի առաջին քառորդում, այնուհետև այդ խաչափայտի ազատումն ու հանդիսավոր կերպով Երուսաղէմ վերադարձնելը պատճառ հանդիսացաւ ավելի ուժեղացնելու խաչի և եկեղեցու պաշտամունքը, և առատ նյութ հանդիսացաւ մանավանդ հոգևոր երգերի համար:
- 7-րդ դարում ուժեղացաւ ոչ միայն խաչի պաշտամունքը, այլև եկեղեցում սահմանվեցին խաչին վերաբերվող բազմաթիվ տոներ՝ իրենց հոգևոր երգի կանոններով: Ահա այդ ծամանակներից էլ սկսում են մանկատուներ, վանքեր ու մատուռներ, որ որպէս սրբություն հաւաքում ու պահում են նույնպէս խաչի մատուցները: Վարագա խաչի գլուխը Ներսէս Գ Շինող կաթողիկոսի օ-

րով, 7-րդ դարի կեսերին ու նրա կանոնի հոգևոր երգերը նույնպէս կապված են խաչի պաշտամունքի այդ շրջանի հետ:

Խաչի նավակատիքը հայ եկեղեցու հոգեվոր երգերի ու շարականների մէջ ունի մասն «Նաւակատիք եկեղեցւոյ» անունը: Հունարեն «էմքենիա» բառը նշանակում է նավակատիք: Խաչը կոչվում է «փայտ կենաց»: Ըստ երրայական ավանդության, Սեթը Աստուծո հրեշտակի հրամանով «գիտութեան ծառի» սերմը վերցնում և դնում է թաղված Ադամի բերանը, որը աճում և դառնում է մի ծառ: Այդ ծառի բունը, —ասում է ավանդությունը, —հասել է մինչև Քրիստոսի ծամանակները: Հրեաները այդ ծառի բունը կտրեցին, խաչ շինեցին և դրա վրա խաչեցին Քրիստոսին:

Սահակ Զորափորեցին իր բոլոր շարականները նվիրեց խաչի և եկեղեցու տարբեր տոներին:

Այժմ ծանոթանանք խաչի շարականների բովանդակության գեղարվեստական կողմերի՝ դրանց արվեստի և պատկերավորության հետ:

Քրիստոնեական հավատի վեմը, ըստ «նավակատեաց կանոնի օրհնութեան», համարվում է խաչը, վերջինիս վրա էլ հիմնված է եկեղեցին, ուր պիտի փառաբանվի հրաշակերտ և զօրեղ այդ խաչը:

«Ի վերայ վիմի հաւատոյ
Շինեցեր զքո սուրբ զեկեղեցի...
Ի տաճարի փառաց սրբութեան քո,
Քեզ երգեն մանկունք,
Տո՛ւր սոցա զառատ քո զողորմութիւն»¹:

Ապա բանաստեղծը կոչ է անում մարդկությանը, որ այդ տաճարում օրհնաբանեն խաչյալ Տիրոջը:

«Եկաք ժողովորդք ի տաճարի փառաց
Քրիստոսի
Տուք ամենեքեան օրհնութիւն ի բարձունս»²:
Նավակատեաց կանոնի «Օրհնութեան» Հարցը կրում է թե դավանաբանական և թե այլաբանական բնույթ: «Նորածնեալ» բոլոր քրիստոնյաները, որոնք մկրտվել են եկեղեցու սուրբ ավազանում, այսօր ցնծությանը պիտի փառաբանեն գերությունից Երուսաղէմ վերադարձած «պայծառագեաց վայելչութեամբ» խաչը՝ առանձին տոնով ու տոնախմբությամբ³:

Այստեղ եկեղեցին այլաբանորեն համարվում է հարս, իսկ Հիսուսը՝ «Երկնատր փե-

¹ Ծարակնոց, Երուսաղէմ, 1936 թ., էջ 636:

² Անդ, էջ 636:

³ Անդ, էջ 637:

սալ»՝ մեծ է այդ խորհուրդը ըստ շարականի.

«...Կա դժխոյ ընդ աշմէ սուրբ եկեղեցի
Յոսկեհոտն պսակեալ նշանաւ խաչի քոյ»...

Պիտի ազգ ու ազինք փառաբանեն այդ
միավորությունը.

«Բանգի Քրիստոսի է հարսնացեալ սուրբ
եկեղեցի,
Երկնաւոր փեսային պսակեալ ըզսա
խաչին»⁴:

Այս կանոնի մեջ «եկեղեցի», «խորան», «տաճար», «վեմ» և «սեղան» բառերը նշանակում են «հարս-եկեղեցի», որի հետ Միածինը կապել է իր հավիտենական կյանքը՝ խաչի զորությամբ: «Վերացման սրբոյ խաչին» նվիրված կանոնի շարականները թե լիրիկական են և թե փառաբանական: Այստեղ էլ նույն մոտիվներով փառաբանվում է խաչի զորությունն ու խորհուրդը: Սուրբ խաչը օգնական է բոլոր հավատացյալներին: Այն երկրի վրա կանգնեց որպես հաղթանակ տարած զենք, թշնամիների սարսափ, կյանքը վերածնող: Խաչի զորությունը մեծ է ըստ շարականի գլխավորապես նրա համար, քանի որ ինքը՝

«Արարիչն Աստուած բարձրացաւ ի խաչին,
Եւ զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն,
Ի սմա նորոգեալ կենդանացոյց»⁵:

Այդ խաչը,—երգում է շարականը,—ոչ միայն այս աշխարհում է «զէն յաղթութեան», այլև նա միածամանակ լուսավորում է հանդերձյալ կյանքի ճանապարհը.

«Ի միւս անգամ գալստեան
Աստուածորդուն,
Սուրբ խաչն երևի և լուսաւորէ,
Զի նա է յոյս հաւատացելոց»⁶:

Սա «վերացման» կանոնի առաջին օրվա «Օրհնությունն է»⁷ նվիրված շաբաթվա առաջին՝ կիրակի օրվան: Այս կանոնի մեջ իր ալլաբանությամբ, ճարտասանական ձևավերով ու պարզությամբ աչքի է ընկնում «փայտ կենաց» բառերով սկսվող «Ողոր-

մեա» շարականը: Թեև խաչափայտի վրա իր հոգին ավանդել է Փրկիչը, թեպետ այդ փայտը եղել է մահաոխի, սակայն շարականագիրը հակադրում է մահն ու կյանքը, որ Քրիստոսի մահը աղբյուր է եղել մի նորոգ կյանքի:

«Փայտ կենաց, որ փոխանակ մահացու
պտղոյն

ԶՔրիստոս պողաբերեցեր.

Պարսպեալ պահեա զուխոս

հաւատացելոց»⁸:

Բանաստեղծը զարգացնելով իր միտքը, այս անգամ էլ մի ուրիշ տեղ ճարտասանական ձևերով է պարզաբանում, թե ի՞նչպես է խաչը ճանաչաբացել դեպի «կենաց ծառը»՝ դեպի հավիտենական կյանքը: Դարձյալ դիմելով խաչին երգում է՝

«Բև բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց
Ի սրովբէափակ պահպանութենէն»⁹:

Սերովբեները այն ընտրյալ հրեշտակներն են, որոնց վստահել է Արարիչը Եդեմի դռների պահակությունը, ուր մեղսագործ ադամորդին այլևս իրավունք չունեւ ոտք դնելու: Սակայն քառաթև խաչի զորությամբ նորից բացվում են դրախտի ճանապարհն ու դռները և վերացվում սերովբեների պահակությունը:

Ու թեև մարդու նախահայր չէր պահել Աստուծո պատվերը, կերել էր արգելված պտուղը և դրա համար դատապարտվել, սակայն այսօր,—ասում է շարականագիրը.

«Բև ազատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ
պտղոյն
Եւ քեզ երկրպագեն ամենայն
հաւատացեալք»¹⁰:

Երկուշաբթի օրվա կանոնի օրհնությունը ոչ ալլաբանական և ոչ էլ ճարտասանական բնույթ է կրում: Այստեղ արդեն շարականագիրն հանդես է գալիս ուսուցողի, մեկնաբանի դերում և բացատրում է Ադամի՝ դրախտից արտաքսվելու հանգամանքները և խաչի կատարած փրկարար դերը.

«Ի ստուգանելն Ադամայ ի կենսագործ ի
դրախտին,
Խաբմամբ պատրանօք փայտին ծառոյն
գիտութեան.
Օճաշամբ պատրանօքն ճաշակեալ ի
պտղոյն,

⁸ Շարակնոց, էջ 642—643:

⁹ Անդ, էջ 643:

¹⁰ Անդ, էջ 643:

⁴ Անդ, էջ 637:

⁵ Անդ, էջ 641:

⁶ Անդ, էջ 641:

⁷ Խաչին վերաբերող շարականների կանոնների մեջ տա ամենամալալուն են: Այդ կանոնն ունի 7 բաժին՝ շաբաթվա ամեն մի օրվա համար մի ենթականով՝ բաղկացած 4—5 տարբեր շարականներից:

Եւ եղեւ վայրաքանակիլ մայրաքաղաքն
Երուսաղէմ»¹¹:

Ապա մեկնաբանվում է, թե որտեղ է դրախտը, որտեղ է բուսել այն ծառը, որը դարձավ Քրիստոսի խաչափայտը: Օրհնութեան վերջին տան մեջ միաժամանակ դրվել են նաև դավանաբանական գաղափարներ.

«Բանն անեղ, համագոյ, որ ընդ Հօր և սուրբ
հոգւոյն,

Երևեալ ի յերկրի, պայծառացան արարածք.
Հօրին կարողութեամբ և զմեզ վերագրեաց
Յորդեգրութեան շնորհս»¹²:

Նույն օրվա կանոնի Հարցը հորինված է վառ երևակայությամբ, ուր հեղինակը իր պատկերների նյութը վերցնում է գլխավորապես բնությունից ու տիեզերքից՝ շարականին վեհություն ու խորհրդավորություն հաղորդելով.

«Այսօր ընդ ամպս լուսանորս
Երևեալ նշան տէրունական խաչին՝
Բոցանիշ փայլմամբ,
Տեսողացն ընթացեալք ի քաղաքն
Պատմէին զնշան քո Տէր»...¹³:

Այնուհետև ցույց է տրվում, թե երկրի ո՞ր կողմից և ե՞րբ է երևացել խաչը՝ «բոցանիշ փայլմամբ», և ի՞նչի՞ նման են եղել նրա ճառագայթները.

«Յարևելից փայլեաց ճառագայթ սուրբ
խաչին,
Արեգակնակերպ ճառագայթիւք միաբան
տեսանիւք,
Ի յերրորդ ժամու նշան քո»¹⁴:

Վեցերորդ օրվա օրհնությունը (բկ) աչքի է ընկնում իր մակդիրներով ու ստորոգելիներով՝ նվիրված խաչին և նրա գործությանը:

«Անպատումն կառք անքննելի խորհրդոյն
ընդունարան,
Ով սուրբ քառաթև»...

«Անյաղթելի նշան, անպարտելի զօրութեան ընդունարան... ի յահարկութիւն ապրստամբիցն... աշտանակ ոսկի՝ եօթնաջափեան լուսով պայծառացեալ երկրի, ով սուրբ քառաթև»...¹⁵

Եվ այս բնութագրիչ քառերից, կապակցություններից ու դարձվածքներից հետո միշտ գործածվում է վերահիշյալ

«Ով սուրբ քառաթև» կրկնակը:

Ուրբաթ օրվա «Անապական սուրբ զխաչըն» օրհնութեան առաջին տան մեջ խաչը համարվում է «առաջնորդ առազակին» (խաչը Քրիստոսի հետ խաչված երկու ավազակներից աջակողմյանի մասին է—Գ. Հ.), այդ խաչը միաժամանակ «Յօրինեաց մեզ ճանապարհ»՝

Որ ձևացոյց մեզ սովա մտանել,
Ընդ դուռն անեղաշէն դրախտին տեսուն»¹⁶:

Նույն օրհնութեան երրորդ տան մեջ Քրիստոսի խաչը համեմատվում է Մովսես Մարգարեի գավազանի հետ: Եթե մարգարեի գավազանը իր հրաշքով փրկել է անպատկերում ապաստանող իսրայելացիներին՝ թունավոր զեռուկներից, որոնց պահպանել է ֆիզիկապես միայն և եղել Քրիստոսի խաչի նախատիպը, ապա իսկական խաչը փրկել է ոչ միայն մի ազգի, այլ ամբողջ մարդկությանը, փրկել՝ սնոտիապաշտության թույնից և ցույց տվել լուսավոր կյանքի ու դրախտի ճանապարհը:

«Գառազանաձև երևեալ եգիպտական
ազգին,
Յուցանելով զգօրութիւն սրբոյ խաչին.
Յափշտակելով զգառազանն դիտական...
Առաջնորդելով ժողովրդեանն սեամբ
ամպոյ
Լոյսն անմեկնելի»...¹⁷

Մովսես մարգարեն իր գավազանի զօրությամբ փրկել է հրեից ազգը՝ առաջնորդելով դեպի «Ավետեաց երկիրը», բայց դրանք էլի չեն հրաժարվել սնոտիապաշտությունից ու կռապաշտությունից: Հրեաներն անապատի մեջ անգամ չանցալով մարգարեի աստվածախոս ձայնին, կուռքեր են շինել: Այս հանգամանքը շարականագրի ուշադրությունից չի վրիպել և խաչի կանոնի հիմնադրի օրվա օրհնութեան մեջ ակնարկ կա հրեից ազգի ուրացության մասին, և խաչից խնդրվում է վերջին դատաստանի օրը դատապարտել այդ անհավատ ազգը.

«Յորժամ յարևելից փայլիս անճառ լուսով,
Լուսաւորես զհաւատացեալսն.

¹¹ Անդ, 646:

¹² Անդ, 646:

¹³ Անդ, 646—47:

¹⁴ Անդ, էջ 647:

¹⁵ Անդ, էջ 657:

¹⁶ Անդ, էջ 660:

¹⁷ Անդ, 660—661:

Եւ դատապարտես զազգն հրէից
անհատաւորիցն
Ով սուրբ քառաթե...»¹⁸

Բայց այս պահանջը մշտական, նեղ, կրոնական, կամ «հրեատյաց» մտայնությունն չէ: Ուրբաթ օրվա կանոնի «Ով քառաթե» Ողորմեայի մեջ հեղինակը խնդրում է, որ խաչը հովանի և պահապան լինի աշխարհի չորս կողմերում ապրող ամբողջ մարդկությանը՝ բոլոր ժողովուրդներին:

«Ով քառաթե, լուսածին, գերապանծ միշտ, Կառուցող Կենացն ամենից,
Միշտ բազկատարած առ քեզ, Էն»¹⁹
Քառակուսի ազանց հովանի և պահապան
ի լեզու և ի մուտս փրկութիւն ի յայտոց,
Եւ պարիսպ ամրութեան:
Դրոշմ գագաւորեան և կնիք ի դէմս
ամենից
Դու և յաստուածայինսն կատարիս խորհուրդ
Յորմէ արեգակնային փայլից

ճառագայթք»²⁰:

Խաչի յոթ օրերի կանոններում, պաշտամունքի, փառաբանության, այլաբանական, ճարտասանական և մեկնաբանական մոտիվների կողքին դրսևորվել են նաև առօրյա կյանքին վերաբերող տրամադրություններ և խնդրվածքներ՝ կրոնական երանգով: «Գիտ խաչին» կանոնի «Տէր յերկնից» շարականը Արարչից խնդրում է, որ Փրկչի խաչը մարդկանց օգնական լինի նաև անձնական կյանքում և ընդդէմ թշնամեացն» այսպես:

«Ապաիւնեցաք ի խաչ քո Արարիչ
յախտենից,
Որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ
թշնամունցն,
Աղաչեմք սովա, Փրկիչ, պահպանեա
զանձիս մեր»²¹:

Նույն ոգով ու մոտիվներով է գրված «Վերացման խաչի» ուրբաթ օրվա օրհնության վերջին մասը, ուր ոչ միայն օգնություն է խնդրում շարականագիրը, այլև գոհություն է հայտնում խաչին, որ նա հաղթանակ է շնորհել հավատացյալներին՝ հաղթելու թշնամուն և վանելու նրա զորությունը:

«Որ շնորհեցեր մեզ յաղթանակ
ընդդիմամարտութեան,
Վանել զգործութիւնս թշնամունցն:

Միաժամանակ շարականը խնդրում է «ամենայաղթ նշանից», որ տևական խաղաղության մեջ պահի իրենց կյանքը:

«Սովա զկեանս մեր խաղաղացո,
Միայն բարեգութ և փրկեա
Յամենայն փորձութենէ»²²:

Ծաբաթ օրվա օրհնության մեջ խաչը փառաբանվում է որպես «պարիսպ ամրութեան» և «աշտարակ հզօր» դարձյալ թշնամու դէմ:

«Որ ծագեցեր մեզ լոյս մեծ զնշան
յաղթութեան,
Խաչի քո թագաւոր յախտենից.
Եւ ետուր պարիսպ ամրութեան
հաւատացելոց քոց,
Աշտարակ հզօր յերեսաց թշնամունցն.
Աղաչեմք զքեզ, Տէր, պահպանեա զմեզ,
Ընդ հովանեա խաչի քո սուրբ»²³:

Ըստ նույն կանոնի «Այսօր նշան» սկսվող Ողորմեա շարականում, խաչի զորությամբ և միջոցով պաշտպանվել է տիեզերքը, ամբողջ մարդկության երկրային կյանքը: Ուստի խնդրվում է, որ այդ կյանքը միշտ վրտանգներից ու թշնամուց հեռու լինի:

«Այսօր նշան յաղթող երևեալ ի յերկրի
Պայծառացոյց զտիեզերս.
Զէն յաղթութեան ետուր զխաչ քո, Տէր,
Ապրեցուցանել զմեզ ի պատրանաց
թշնամունցն:
Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց,
Յոյս և ապաւեն ազգի մարդկան...
Սա պահեցել զմեզ յամենայն վտանգից
մերոց»...²⁴

Խաչի շարականները օգտագործվել են նաև որպես հոգևոր զենք ոչ ուղղափառ, խորթ գաղափարախոսությունների դէմ: Այս կարգի շարականները հանդիսացել են նաև գաղափարական պայքարի միջոց, ճշմարիտ հավատի պաշտպանության համար:

«Ապաւեն ցուցաւ մեզ սուրբ խաչն
փրկչական,
Զի Յաղթեցուք նովա անօրէն թշնամունցն...
Եկայք նոր ժողովուրդք միաբանութեամբ
ԶՏէր օրհնեցէք, բարձր արարէք զնա
յախտեան»²⁵:

Բանաստեղծ Զորափորեցին այս աշխարհ-

¹⁸ Ամդ, էջ 658:

¹⁹ Այստեղ «է»-ն բառը նշանակում է Աստված:

²⁰ Ծաբակնոց, էջ 663:

²¹ Ամդ, էջ 680—681:

²² Ամդ, 664—665:

²³ Ամդ, էջ 664—665:

²⁴ Ամդ, էջ 667:

²⁵ Ամդ, 647:

նր համարում է մարդկության համար մեղապահ, մի խավար ու մեծ բանտ, որտեղ մարդը սպասում է իր հոգեկան և մարմնական ազատությանը.

«Սովա լուսավորեցան արարածք ամենայն, Սմա սպասեին արգելալքն ի մեղսասեր բանտին»...²⁶

Վերջապես շարականագիրը խնդրում է Փրկչից

«Սովա պահպանեա զծողովորդս քո Քրիստոս, Որով երկրպագեմք քեզ ընդ հօր և հոգւոյն»...²⁷

Սահակ Չորափորեցուն վերագրվող շարականների մեջ ավելի հուզական ու լիրիկական է Ծողակաթի կանոնը, որը բաղկացած է 5 փոքրիկ երգերից:

Օրհնության մեջ բանաստեղծը լցված է ցնծությամբ: Նա իր ուրախությանը ուզում է մասնակից դարձնել նաև հայ եկեղեցուն.

«Ուրախ լեր սուրբ եկեղեցի, Քանզի Քրիստոս արքայն երկնից Այսօր պակեաց գքեզ խաչին իրով, Եւ զարդարեաց զամուրս քո Սքանչելի փառօքն իրովք»²⁸:

Այստեղ հայոց եկեղեցին այլաբանորեն համարվում է վերին Սիոնի դուստրը, որովհետև այնտեղ է բնակվում երկնավոր թագավորը:

Ոչ միայն շարականի հեղինակը, այլև նրա հետ միաժամանակ երկնային բնակիչները ուրախանում, երգում ու փառաբանում են հայ եկեղեցին.

«Դասք հրեշտակացն վայր իջեալ յերկնից, Երգեն՝ ասելով հրաշալի ձայնին եղանակելով. Երգեն զերգս օրհնության՝ երրեակ սրբասաց ձայնի»²⁹:

Այս կանոնի բոլոր շարականներն ուրախությամբ ու խնդությամբ են հորդում.

«Ուրախ լեր բերկրեաց, հարսնացեալ սուրբ եկեղեցի... Ուրախ լեր դըշխոյ, դուստր Սիովնի»...

Ուրախ լեր... և ցնծա վերինդ Երուսաղեմ... Ուրախ լեր Սիոն մայր եկեղեցի»³⁰:

Իսկ ո՞րն է այդ ցնծության գլխավոր պատճառը: Կանոնի նախավերջին շարականի վերջին տունն այդ մասին երգում է հետևյալը.

«Այսօր ցնծա սուրբ Սիոն, մայր եկեղեցի, Փայլեցո զմանկունս քո որպէս զարեգակն, Զի անճառ խնդութեամբ լցոյց գքեզ Քրիստոս թագաւորն»³¹:

Սահակ Չորափորեցու շարականներից ամենագեղեցիկն ու համաժողովրդականը «Էջմիածինն ի Հօրէ» հոյակապ շարականն է, որը համարվում է մեր եկեղեցու հիմնը: Ներսես Ծնորհալու «Առաւօտ լուսոյ» երգի նման այս շարականը նույնպես տարածված է ժողովրդի մեջ և հաճախ է երգվում եկեղեցուց դուրս՝ հանդեսների, ճաշկերույթների և զանազան տոնախմբությունների ժամանակ.

«Էջմիածինն ի Հօրէ, Եւ լոյս փառաց ընդ նմա Զայնք հնչեցին Սանդարամետք անդնոց»³²:

«Էջմիածինն ի Հօրէ» շարականը համակված է նաև ջերմ հայրենասիրությամբ: Այստեղ Էջմիածինը դիտվում է ոչ միայն որպես կրոնական-եկեղեցական կենտրոնի ու սրբավայրի, այլև որպես լուսի ակունք, «Հայաստան աշխարհի», Լուսավորչի օրերից մինչև այսօր.

«Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ, Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս Ի Հայաստան աշխարհի»³³.

Եթե խաչի երեք կանոններում (Նաակատեաց, Վերացման և Գիտ խաչին) զորեղ են հնչում փառաբանական, այլաբանական, ճարտասանական, մեկնաբանական մոտիվները՝ համաքրիստոնեական հողի վրա, խաչին տալով մեծ նշանակություն՝ անհատական, մարդկային և ազգային բարվոք ու խաղաղ կյանք ունենալու տեսակետից, համարելով այն «հրաշակերտ», «անյողթելի զէն», ապա Ծողակաթի կանոնում, այդ բոլորի հետ միաժամանակ, զորեղ է հնչում ազգային-հայրենասիրական մոտիվը, հայ եկեղեցու մեծ նշանակությունը՝ ազ-

²⁶ Ամդ, 668:

²⁷ Ամդ, 669—670:

²⁸ Ամդ, էջ 613:

²⁹ Ամդ, էջ 614:

³⁰ Ամդ, էջ 614—615:

³¹ Ամդ, էջ 616:


³² Ամդ, էջ 616:


³³ Ամդ, էջ 616:

գի ու նրա մշակույթի նկարագիրը անխախտ ու անաղարտ պահպանելու գործում:

Պատկերավորության, առանձնապես գեղարվեստական հնարանքներին վարպետության տեսակետից ընդհանուր գծեր կան Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք»-ի և Սահակ Զորափորեցու գրած շարականների միջև: Այստեղ արդեն Սահակ Զորափորե-

ցին մեծ մասամբ հետևում է Կոմիտասի արվեստին, իհարկե չանտեսելով նախնի-թաց դարերի հայոց հոգևոր երգի լավագույն ձևերն ու ավանդույթները: Սահակ Զորափորեցին, Կոմիտաս կաթողիկոսից հետո, 7-րդ դարի երկրորդ խոշոր շարականագիրն է համարվում:





Ծ. Մ. ՄԿՐՏՁՅԱՆ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԾՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ*

ԽԱՉՔԱՐԵՐ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲԱՐՁՐԱ-
ՔԱՆԴԱԿՆԵՐՈՎ. Արցախական աշխարհի
խաչքարերը՝ հիշատակարան-հուշարձան-
ները, սփռված են ամենուրեք, եկեղեցիների
քակերում, ճանապարհների հատման վայ-
րերում, հին բնակավայրերում, գերեզմանա-
տներում... Դրանց մեծամասնությունը
կանգնեցված է հատուկ նպատակով, եկե-
ղեցիների կառուցման և վերանորոգման
առնչությամբ, վանքերին, եկեղեցիներին
գյուղեր, կալվածներ նվիրելու կապակցու-
թյամբ: Բազմաթիվ խաչքարեր են ագուց-
ված եկեղեցիների, մատուռների և այլ շեն-
քերի պատերի մեջ: Այդ տեսակետից հիշա-
տակության արժանի են Խաթրավանքի,
Դադի վանքի, Կոշիկ անապատի և այլ հու-
շարձաններ, որոնց պատերի մեջ տեղադր-
ված են տասնյակ խաչքարեր:

10—13-րդ դարերում, խաչքարերի ար-
վեստի ծաղկման փայլուն շրջանում, կեր-
տած այս փոքրիկ հուշարձանները ժողովրդ-
ական զարդաքանդակների հիանալի
նմուշներ են համարվում, հատկապես
Նրանք, որոնց վրա քանդակված են հեծ-
յալներ, երկրագործական ու որսորդական
գործիքներ, կենցաղային իրեր և հագուստի
տեսակներ: Նրանց արժեքն ավելի է մեծա-
նում առանձնապես Նրանով, որ այդ բարձ-

րաքանդակները սովորաբար ուղեկցվում են
ոչ պակաս հետաքրքիր արձանագրությու-
ններով: Հ. Օրբելին, նկարագրելով Խաչենի
տաանները խաչքարերի մոտիվները, գալիս
է այն եզրակացության, որ «մարդկանց
պատկերներով խաչքարեր առաջին անգամ
հայտնաբերվել են Հայաստանի այն մա-
սում, այն է՝ Խաչենում, ուր առհասարակ
սիրված զբաղմունք է բարձրաքանդակնե-
րով նախշել-դրվագել, ուր տաճարների պա-
տերին Հայաստանի մյուս վայրերում սո-
վորական խմբերից զատ պատահում են
բարձրաքանդակման բավականին մեծ տե-
սարանները»¹⁷:

Խաչենի տաղանդավոր վարպետների
անսպառ եռանդի ու ջանքերի շնորհիվ ար-
դեն շատ սովորական դարձած բուսական
ու երկրաչափական մոտիվները զուգորդվել
են կոնկրետ կյանքից վերցված թեմատիկ
բարձրաքանդակների հետ և ավելի հետա-
քրքիր են դարձել այդ մոտիվների բազ-
մազանությունը, նրանց կատարման տեխ-
նիկայի նրբությունը, դասավորման մեծ ճա-
շակը և, իհարկե, իմաստավորված բովան-
դակությունը:

Այստեղի խաչքարերի վրա պարզ երևում
են միջնադարում ապրած հայ գեղջուկն իր
հագուստ-կապուստով, հոգևորականներն՝

* Ծարուհաված «Էջմիածին» ամսագրի 1976
թվականի № Բ-ից:

¹⁷ И. А. Орбели, Избранные труды, Ереван,
1963, стр. 196.

իրենց տարագրով, հատկապես զինվորները՝ զինավառության բոլոր մանրամասներով: Խաչենցի ռազմիկների «պատկերները առանձնապես հետաքրքիր են այն պատճառով, որ հանդիսանում են վաղ մոնդրական դարաշրջանի հայ զինվորության առաջին եզակի պատկերները՝ վերցված ուղղակի կյանքից»¹⁸:

ԽՈՒՍԱՆԱՔԵՐՈՂ ամրոցը եղել է Հասան-Ջալալյան մեծահամբավ իշխանական տոհմի վարչական կենտրոնը: Գտնվում է Գանձասարից հարավ, Խաչենագետի աջ ափին, մի բարձր անտառապատ բլրի գագաթին: Արցախի պատմության մեջ այն հայտնի է «Խախանաքերո»¹⁹, «Խոյական բերդ»²⁰ անուններով, հետագայում կոչվել է նաև «Դարպասներ»²¹:

Կեչառիսի վանքի վերակառուցման առթիվ Հասան-Ջալալյան իր քանդակած արձանագրության մեջ իրեն կոչել է «տէր Խոյախանաքերոյ»: Միշտ է, Խոյախանաքերոյի տերերն ունեն նաև ուրիշ հռչակավոր բերդամրոցներ, ինչպես Հավքախաղաղը կամ Կաչաղակաքերոյը, Քոյատակ և Պատարա գյուղերի միջև, մի բարձր ու անմատչելի ժայռի վրա, Ջրաքերոյը՝ Թարթառի ափին, Դեղտ, Միրանաքար օժանդակ բերդերը՝ դարձյալ Խաչենագետի աջ ափին: Սակայն, ինչպես նշվեց, Խոյախանաքերոյն էր իշխանանիստը, և Խաչենցի պալատներն իրենց տիրապետությունը շեշտում էին այս բերդի անունով. «տէր Խոյախանաքերոյ»՝ նշանակում էր «Խաչենցի իշխան»²²:

Գանձասարի շրջակայքում գտնվող այս բերդերը վտանգի դեպքում հզոր վահան էին դառնում հռչակավոր վանքի և երկրամասի պաշտպանությունը կազմակերպելու համար:

Երբեմնի բարեշեն ամրոցից մնացել է «մի ընդարձակ շինություն...—անցյալ դարի վերջին գրել է Մ. եպիս. Բարխուդարյանը.—որ իր մեջ ունի շատ սենեակներ մի քանակի պարսպի մեջ: Ջալալ Դոլայի ապարանիս մեջ առելի ուշագրա է ընդունարանն և մի այլ սենեակ, որք ներկայացնում են ժամանակին ճարտարապետության և ճաշակին ոճը: Բարձրաշեն, ամրապատ, թաղակապ և գեղեցկատես են սենեակներս: Թաղերի տակ շարուած են վայելուչ և բարակ խոյակներ, որոնց վերայ դարձրած ապա թաղերը կամարների վերայ, որք չեն

քարի ազնի տեսակիցն են, համակ սրբատաշ: Առհասարակ սակաւ են լուսամուտներն և փոքր...»²³:

Բերդի ներսում, ավերակ պալատից մի քանի մետր հեռու, կողք-կողքի կառուցված են երկու եկեղեցի: Սրանք միջին մեծությամբ բազիլիկաներ են, որոնցից հարավայինին կից է փոքրիկ գավիթ-սրահը, իսկ մյուսը արևմտյան կողմից ունի փոքրիկ շինություն՝ լրիվ փլված վիճակում:

Նույն ոճի և մեծությամբ, նույնիսկ նույն դիրքում գտնվող երկու եկեղեցիներ կան այստեղից ոչ այնքան հեռու, Խաչենագետի ձախ ափին, «Քյարխանի հարթ» հնավայրում: Միջնադարյան գյուղատեղին, որ կոչվում է նաև Պատավաճոր, բռնում է ահագին տարածություն: Հիմնովին ավերակ գյուղատեղիի շրջակայքում ընդարձակ գերեզմանատուն է՝ խաչքարերով և 12—13-րդ դարերի արձանագրված տապանաքարերով:

1180, 1183, 1228 թվագրություններ ունեցող խաչքարերի վրա պատկերված են հեծյալ և հետիոտն ռազմիկներ, ձեռքներին՝ նետ ու աղեղ և հիզակներ, գլխներին՝ սաղավարտ և երկար չուխաներ: Խաչքարերից մեկի վրա կնոջ քանդակ կա իր դարաշրջանի տարագրով: Գիտության համար հույժ ուշագրավ այդ բարձրաքանդակները կարևոր աղբյուրներ են հանդիսանում Արցախի միջնադարյան պատմության համակողմանի ուսումնասիրման համար:

ՀԱՎԱԳՏՈՒԿ ՎԱՆՔԸ կոչվում է նաև Հավոցպտուկ և գտնվում է Գանձասարից մոտ 5 կիլոմետր դեպի հարավ, մի բավական բարձր լեռան գագաթի վրա: Վանքի համալիրը հիմնականում բաղկացած է մի ոչ մեծ եկեղեցուց, գավթից և մեկ ուրիշ փոքր եկեղեցուց: Շրջակայքում նկատվում են շինությունների հետքեր: Եկեղեցու արևելյան մասում, բլրակներից, տարածվում է գերեզմանոցը՝ զանազան ձևերով մշակված կենցաղային ու երկրաչափական քանդակներ ունեցող տապանաքարերով: Մեկ ուրիշ գերեզմանոց էլ գտնվում է քիչ հեռու, Գանձասարի ճանապարհի վրա:

Հարավային եկեղեցու խորանի ճակատակալ քարերի վրա պահպանվել է 9 տողանոց շինարարական արձանագրություն. «Թիվն ՈԶԲ էր: Յիշխանութեան Հասանայ որդոյ Վախտանգայ եւ ամուսնոյ նորա Մամբանայ եւ տէր Յոհան քվերորդի տէր Գրիգորոյ եւ Գևորգ եղբարորդի եւ այլ միաբանքս շինեցաք եկեղեցիքս ի փրկութիւն հոգոց մերոց և յիշատակ ծնողաց մերոց...»²⁴:

¹⁸ Մ. Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ 196:

¹⁹ Կ. Գանձակեցի, էջ 269:

²⁰ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Խաղրակյանք, 1969, էջ 317:

²¹ Բ. Ոլուբարյան, նշվ. աշխ., էջ 117:

²² Նույն տեղում:

²³ «Արցախ», էջ 181:

²⁴ «Արցախ», էջ 182:

Ըստ արձանագրության եկեղեցին կառուցվել է 1233 թվականին, Հասան-Ջալալ Դոլայի իշխանության օրոք:

Եկեղեցին փոքր է, ուղղանկյուն հատակագծով, ծածկը թաղակալ է, պատերը շարված են անմշակ կրաքարերով:

Մեծ եկեղեցին և գավիթը փլված են, ընկղմված խոտերի և թփերի մեջ:

ՎԱՃԱՌ.—Այս անունով ավերակ գյուղաքաղաքը գտնվում է Գանձասարից արեւելք, Ծմակահող գյուղի արևելյան մասում, համանուն գետակի ձախ ափին: Ավերակները, միջնադարյան քաղաքատիպ ավանին հատուկ տնատեղերի, խանութների, արհեստանոցների և եկեղեցիների մնացորդներ են:

Թեև գյուղաքաղաքի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ, բայց ենթադրվում է, որ այն քարգավաճման է հասել 12—13-րդ դարերում, հատկապես խաչենի տեր Հասան-Ջալալի օրոք:

Առաջին արձանագրությունը, որ պատմում է Հասան-Ջալալի կառուցողական գործունեության մասին, պահպանվել է այստեղ, նրա տոհմին պատկանող այս ավերակներում: «Ես Հասան՝ որդի Վախտանգայ և Խորիշահի, տեր խաչենոյ, շինեցի գաւորք եկեղեցիս... Ո՛ՀՐ (1229)»²⁵: Ապա գալիս են նրա կանգնեցրած գեղեցկաքանդակ խաչքարերը նույն Վաճառում, որոնք թվագրվում են մոտավորապես նույն ժամանակաշրջանով և բացառիկ նշանակություն ունեն այն տեսակետից, որ իրենց վրա կրում են ժամանակի աշխարհիկ դրոշմը:

Ոչ պակաս ընդարձակ տարածություն է բռնում Վաճառի գերեզմանատանը, որի մեջ սրբատաշ չեչ քարով կառուցված է մի եկեղեցի: Եկեղեցու հարավային կողմում գրեթե պատկից շինված է մի երկհարկանի փոքր մատուռ, նույնպես մշակված, հրդկված քարից:

Եկեղեցին թաղածածկ դահլիճի հորինվածքով բազիլիկ է, ունի երկու շինարարական արձանագրություն՝ մուտքի տիմպանի վրա և արևմտահայաց ճակատին: Այդ արձանագրություններից պարզվում են հուշարձանի կառուցման ճշգրիտ ժամանակը, կառուցող մեկենասի և քարգործ վարպետի անունները:

Բազիլիկը կառուցել է Սարգիս քարգործ վարպետը: Ահա նրա թողած արձանագրությունը. «Կաման Այ ես Սարգիս Կարնոյ քաղաքացի սալեցի գեկեղեցիս և կանգնեցի զխաչերս ինձ և աշակերտի իմոյ Յովհաննեսի, յաղաթս»²⁶:

²⁵ «Արցախ», էջ 185:

²⁶ Ս. Բարխուդարյան, Աշխ., էջ 146:

Թեև արձանագրության մեջ թվականը չկա, բայց այլ արձանագրություններից հայտնի է, որ այդ եկեղեցին 1229 թ. շինություն է: «Կարծում ենք,—գրել է Ս. Բարխուդարյանը,—որ Սարգիս և իր աշակերտ Հովհաննեսի աշխատանքները այդ թվականից շատ շուտ լինել չէին կարող, մանավանդ որ կան նաև այլ հուշարձաններ, նույն վայրում, բոլորն էլ իրարից մոտիկ թվականներով շինված, համարվում է 13-րդ դարի կեսերի գործ»²⁷:

ՉԼԴԱՆԻ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԸ

Մարգային թանգարանի «Պատմական հուշարձաններ» ֆոնդում, ըստ գյուղերի, հաշվառման են վերցված գրեթե բոլոր բնական և պատմական հուշարձանները: Ահա թե ինչ հուշարձաններ են նշված Չրլդրան գյուղի դիմաց:

1. **Ամենափրկիչ վանք:** Այն գտնվում է Պողոսագոմեր, Կնդոտ և Չլրան գյուղերի արանքում:

Բոլորաձև, քարձր ու գեղեցիկ հուշարձանն ունի կաթողիկե, գավիթ ու բավականին ընդարձակ գերեզմանոց:

Վանքը հիմնադրվել է 1669 թվականին Հովհաննես Կրոնավորի կողմից:

2. **Նահատակ եկեղեցի,** սրբավայր: Գրտնրվում է Ախպերքան տեղամասում, մասամբ քայքայված է, շուրջը կան հին ու նոր գերեզմաններ:

3. **Կարմիր եկեղեցի:** Վերջին տարիներին զանախույզները (ուսկի որոնողները) քարուքանդ են արել նրա մի մասը:

4. **Հնձախութ** հին գյուղատեղի: Մինչև օրս մնում են կործանված շենքերի ավերակները: Այնտեղ բավականին տարածություն են բռնում կործանված գյուղի տաճեհներ ու այգիներ: Նույն վայրում է գտնվում Չլրանի լավագույն աղբյուրներից մեկը՝ «Չրոչրո»-ը:

5. **Չլրան** գյուղի հարավ-արևմտյան մասում է գտնվում Սառնատուն կոչվող քարայրը, որտեղ տարին բոլոր սառույցը չի հալչում: Քարայրից սկիզբ է առնում «Ղըրմա» սառնորակ աղբյուրը:

Գյուղի շրջակայքում, անտառի մեջ, թաղված են «Հացաուտ», «Էվեր հողեր», «Կենն պատ» հին գերեզմանոցները: Բոլոր այդ հնությունների փլատակներում, առանձին քարերի վրա, մնացել են արձանագրությունների պատառիկներ:

ՔՈԼԱՏԱԿԻ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԸ

Խաչեն գավառի գյուղերից է Բոլատակը: Նրա հիմնադրման ժամանակը հայտնի չէ:

²⁷ Նույն տեղում:

Սակայն գյուղի տարածքում գտնվող տասնյակ եկեղեցիները, վանքերը, կամուրջները, բերդ-ամրոցները, աղբյուրները, ջրաղացները վերաբերում են 9—17-րդ դարերին:

Ծառ հետաքրքիր կառույց է գյուղից 10 կմ հեռավորության վրա գտնվող Անապատ պատմական հուշարձանը: Մի գեղեցիկ բլրի կատարին, պաշարված դարավոր անտառներով, Անապատը արտաքուստ բավականին գեղեցիկ, նրբակերտ քանդակներով ու տասնյակ արձանագրություններով մի հուշարձան է՝ կից այլ շինություններով:

Երևում են բաղնիքի կիսավեր պատերը, որոնցով անց են կացված տասնյակ կավե խողովակներ (թունգեր): Ամենից ուշագրավն այն է, որ Անապատի մեջ տեղադրված են խաչքարեր՝ ողկույզների պատկերներով, և սալաքարեր: Պարզորոշ երևում է, որ Անապատը 14-րդ դարից առաջ կառուցված շինություն է:

Անապատից քիչ ցած բավականին ընդարձակ տարածություն է բռնում գերեզմանոցը: Ինչպես գերեզմանաքարերը, այնպես էլ Անապատի շարվածքի քարերը խոշոր են:

Ս. ՀԱԿՈԲ ՎԱՆՔԸ համարվում է Քուլատակի ամենանշանավոր հուշարձանը: Այն գտնվում է գյուղից մոտ երկու կիլոմետր հյուսիս ընկած մի լեռնաբազուկի վրա: Պատմական գրականության մեջ հայտնի է նաև Մեծառանից վանք անունով: Ինչպես հայտնի է, Մեծառանքն Արցախի հին գավառներից մեկի անունն է: Հետագայում եռչվել է նաև Ներքին խաչեն:

Բուն վանքի հիմնադրման վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ չկան: Արձանագրություններից ամենահինը փորագրված է մի խաչքարի պատվանդանի վրա, որը հետագայում տեղադրվել է եկեղեցու պատի մեջ, որպես շինաքար, և վերաբերվում է 851 թվականին: Մյուս գրավոր տեղեկությունը գտնվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի մի հիշատակարանում: Այստեղ մագաղաթը խոսում է այն մասին, որ ս. Հակոբ վանքի կառուցողներն են եղել Հասան-Ջալալի ծնողները՝ Վախտանգն ու Խորիշահը:

Խորիշահն իր մի արձանագրությամբ պատմում է. «...վերստին շինեցի զեկեղեցին Մեծառանից ի փրկութիւն հոգւո իմոյ, ի քարեխաւս յիշեցէք»²⁸:

Խոսքը ս. Հակոբ վանքի մասին է, որը և Խոխանաքերոյի ճյուղի հոգևոր կենտրոններից է եղել: Սակայն այստեղ «վերստին շինեցի» արտահայտությունը պետք է հաս-

կանալ վերակառուցման, նորոգման իմաստով: Այժմ էլ դժվար չէ համոզվել դրանում: Նախկին շինությունների քարերը նորոգիչները հենց այնպես ցաք ու ցրիվ տեղադրել են պատերի մեջ, այնպես, որ գերեզմանաքարերը պատի մեջ են դնում, խաչքարերը՝ առաստաղին: Արձանագրություն պարունակող հղկված քարերը տեղադրված են անկյուններում: Մի խոսքով, շինությունները կարկատանի տպավորություն են թողնում: Ամենայն հավանականությամբ ս. Հակոբ վանքը, բացի 1212 թվականի վերակառուցումից, հետագայում, մոտավորապես 15—16-րդ դարերում, ենթարկվել է նորոգման: Այդ է հաստատում այստեղի մի անթվակիր փոքրիկ արձանագրություն:

Ս. Հակոբ վանքի համալիրներից առաջին եկեղեցին երկարավուն բազիլիկ ձևի շինություն է: Իր տեսքով նա շատ մոտ է Ղևոնդյանց անապատին: Տարբերությունն այն է, որ այս եկեղեցում թեմը սովորականից շատ բարձր է, և այստեղ կարելի է բարձրանալ միայն հարավային կողմի աստիճաններով:

Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավային և արևմտյան մասերում: Արևմտյան պատի երկայնքով կառուցված է փոքր սրահը՝ դարձյալ անուշ քարով շարված: Սրահից եկեղեցի մտնող մուտքի երկու կողմերում դրված են խաչքարեր՝ 1223, 1225 թվագրություններով ու բարձրաքանդակներով:

Այս եկեղեցու արևմտյան պատին կից կառուցված է մեկ ուրիշ եկեղեցի: Թե՛ դիրքով և թե՛ ոճով իրար նման այս եկեղեցիների հարավային ճակատի ամբողջ երկարությամբ ձգվում է եռակամար մի բաց սրահ, որի միջին բացվածքն ավելի մեծ է: Այստեղ, ի տարբերություն մյուս հուշարձանների, սրահն ընդհանուր է երկու եկեղեցիների համար և իր բարձրությամբ հավասար նրանց բարձրությանը: Այնպես, որ գավիթ-սրահը դառնում է եկեղեցիների ծավալային հորինվածքի օրգանական մասը, իսկ գավթի եռակամար ճակատը՝ եկեղեցիների գլխավոր ճակատը: Այդ տեսակետից ս. Հակոբ վանքը ճարտարապետական ինքնատիպություն ունի:

Վանքն ունի շրջապարիսպ, որի կենտրոնում են գտնվում եկեղեցիները: Իսկ շուրջը տարածվում են միաբանների ալերակ խուցերը, տնտեսական շենքերը: Վանքի շինությունների վրա մնացած 41 արձանագրությունները խոսում են այն մասին, որ այն եղել է Արցախի նշանավոր ու կարևոր մշակութային կենտրոնը:

ԿԱԶԱՂԱԿԱՐԵՐԴ

Ծառ հեռուներից է երևում Կաչաղակաքերը: Արցախ աշխարհի ամենաբարձրա-

²⁸ «Արցախ», էջ 171: «Բանասեր», 1901, էջ 142:

դիր բերդերից մեկը: Կաշաղակաբերդը, բնական այդ ահուեղի ամրոցը, Մեծառանից վանքի հասակակիցն է: Այն ամրացվել և բոլորովին անմատչելի է դարձել Մեծառանից գավառի համարձակ ու անվախ կրտրիճների կողմից՝ արաբական արշավանքներից պաշտպանվելու նպատակով:


Այդ երկնահաս ամրոցը կոչվում է Կաշաղակաբերդ, որովհետև, ինչպես ավանդությունն է պատմում, սրաթոխչ կաշաղակները միայն կարող են բարձրանալ նրա սրածայր գագաթը:


Բավականին տարածություն է զբաղեցնում բերդը: Կան բազմաթիվ բնակարաններ, ժայռափոր անցքեր, քարեր գլորելու

նպատակով կառուցված «կրակակետեր»: Անտիկ բերդի պաշտպանները կենտրոնական մասում կառուցել են մի վիմափոր քառանկյունի ջրավազան: Պատերագմների ժամանակ այն լցնում էին ջրով:

Կաշաղակաբերդից հեռվում, կապույտ մշուշի մեջ, ուրվագծվում է հիսաքանչ մի այլ տեսարան՝ բարձրանիստ լեռների գրկում փռված Թարթառի հովիտը²⁹:

²⁹ Այս հովտի հուշարձանների մասին տես Շ. Մկրտչյան, Թարթառի հովտի պատմական հուշարձանները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3, էջ 127—152:





ԳԵՎՈՐԳ Ծ. ՎՐԴ. ՌՈՒՍՃՈՒՔԼՅԱՆ

Արժանավոր եկեղեցական մը և հասարակական գործիչ մը՝ որով կրնա պարծիլ Փլովտիվի հայ գաղութը, անոր ծնունդ տրված ըլլալուն համար։ Ռուսնուքլան մեր այն հազվագյուտ եկեղեցականներէ է, որ հասարակ քահանայութենէ քարձրացած է մինչև առաջնորդական պաշտոնի ու միջոց մը ձեռնհաստրեն վարած է նաև Կ. Պոլսոյ պատրիարքարանի փոխանորդությունը և տեղապահությունը։

Ծնած է Փլովտիվ (Պուլկարիա) 1829-ին։ Աշխարհական անունը եղած է Թադեոս, ամուսնացած է 1856-ին ու քահանա ձեռնադրված՝ 1864-ին։ Իր երիցունիսն վախճանելով այրիացած ու վարդապետ եղած 1875-ին, ազդեցիկ դեմք մը ու եռանդուն գործիչ մը հանդիսացած է։ Օսմանյան տիրապետության շրջանին, իբրև Մեջլիսի իտարեի անդամ արժանավոր կերպով ներկայացուցած է իր համայնքն՝ պաշտպանելով անոր շահերը, ինչպես նաև ճնշված պուլկար ժողովուրդի ու եկեղեցւոյ իրավունքները։

Մասնավորապես մեծ է եղած իր դերը Պուլկարիոյ ապրիլյան ապստամբության շրջանին 1876 թվին։ Իր բազմաթիվ բարերարություններէն կհիշվին մասնավորաբար պուլկար եկեղեցականներ, ուսուցիչներ և ուրիշ հայտնի դեմքեր բանտէն և կախաղանէն ազատելը։ Քաղաքիս միտրոպոլիտի կյանքը փրկած է (Քուիսի միտրոպոլիտ Պլովտիվի) 1876, հեղափոխության շրջանին պահելով զայն իր մոտը մինչև Պուլկարիոյ ազատության պաշտոնական հռչակումը։

Կարևոր եղած է իր գործունեությունը

1877—78 ռուս և թուրք պատերազմի շրջանին։ Մեկ կողմէ պաշտպանած է կյանքը բազմաթիվ պուլկարներու, մյուս կողմէ աշխատած է ի նպաստ հայկական դատին, պահելով նաև իր հմայքը օսմանյան կառավարական շրջանակներու մոտ։

1878-ին ռուս և թուրք պատերազմի վախճանին, Ադրիանապոլսոյ առաջնորդ էր երբ ռուսական բանակը մոտոք կգործէ հաղթական նույն քաղաքը։ Ռուսնուքլան այս առիթով կներկայանա բանակի վերին հրամանատար Նիկոլա մեծ իշխանին ու առաջին անգամ ըլլալով կխոսի հայկական հարցի մասին, որ նույն օրերուն Ադրիանապոլսոյ մէջ գծված հաշտության նախաշաւիդ պայմաններուն մաս կազմեց ու քիչ վերջը մարտ 3-ին, Սան-Ստեֆանոյի մէջ կնքված ծանոթ դաշնագրին 16-րդ հոդվածը եղաւ։

Այդ հոդվածով Օսմանյան Կայսրության հայաբնակ նահանգներու (Թրքահայաստանի) բարեկարգությունը կերաշխավորեր ռուս բանակի ներկայությամբ։

Ռուսնուքլան այս մասին նախապես ստացած էր Ներսէս պատրիարքի հավանությունը։ Այսպես Ռուսնուքլան նախապես գետինը հարդարած էր և պետք է ըսել, թէ ինք եղած էր նաև գաղափարը հղացողը, այնպես որ Ներսէս պատրիարք Վարժապետյանի այցելությունը մեծ իշխան Նիկոլային պաշտոնական վավերացումը եղաւ Ռուսնուքլանի բանակցություններուն և իր տեսակետի հաղթանակին։

Կ. Պոլսոյ պատրիարքարանը գնահատելով անոր այս և նման ծառայությունները՝

1880-ին Պոլիս կրթավիրե զայն՝ վարելու պատրիարքարանի փոխանորդի պաշտոնը: Քիչ հետո պատրիարքը և վարչությունը հրաժարած ըլլալով, գործերու ամբողջ ծանրությունը կմնա Ռուսոքլյանի վրա, որը ձեռնհաստրեն կվարեր գործերը դիվանի հետ խորհրդակցությամբ: 13 ամիսներ կշատունակվի այս վիճակը, ոչ մեկ դժգոհություն չի մասին, ինչ որ լավագույն գնահատանքն է. իսկ պատրիարքի մահեն հետո, զինքը կընտրեն որոշ ժամանակի մը համար պատրիարքական տեղապահ:

Գրեթե վեց տարի անընդհատ կպաշտոնավարե պատրիարքարանի մեջ, իբր փոխանորդ կամ տեղապահ, մինչև խորեն Աշքյան պատրիարքի ընտրությունը: Աշքյան և վարչությունը գնահատելով իր ծանայությունը կորոշեն եպիսկոպոսացնել զայն. հանձնելով անոր Պոլկարիո և Արեւելյան Ռումելիի նորահաստատ առաջնորդությունը, որ հիմնավորում պիտի ըլլար այսօրվա պոլկարահայ թեմին:

Սակայն Ռուսոքլյանի երկար և տքնաջան աշխատությունը քայքայեց էր իր ֆիզիկականը, անձնապես ալ դառնացեց էր պատրիարքարանի մեջ կարգ մը իրադարձություններեն, որով կմերժե պատրիարքարանի հանձնարարած պաշտոնն ու աստի-

ճանի բարձրացումը ու կքաշվի իր ծննդավայր Փլովտիվ ապրելով իր քահանա եղբորը բնակարանը, ուր կմնա մինչև իր մահը, որը տեղի կունենա 1893-ին սեպտեմբեր 10-ին:

Մեծաշուք կըլլա իր հուղարկավորությունը, բազմաթիվ պոլկար երևելիներ ու եկեղեցականներ կհետևին իր դագաղին և հուղյալ դամբանականներով կարտահայտեն իրենց խորունկ վիշտն ու երախտագիտությունը՝ հանդես մեծ հայուն և պոլկար ժողովուրդի մեծ քարեկամին:


Իր մարմինը կամփոփվի Փլովտիվի հայկական եկեղեցվո շրջափակին մեջ իր եղբոր՝ տեր Արիստակես քահանայի շիրմին կից:

Փափաքելի է Փլովտիվի ս. Գևորգ եկեղեցվո վարչությունը գնահատելով այս մեծ եկեղեցականի գործը, պատշաճ ձևով մը հիշատակում մը ըներ անոր դամբարանին վրա, որ գալիք սերունդները գիտնան և ճանչնան հայ և պոլկար եղբայրակցության այս մեծ ռահվիրան ու երախտավորը:

Հարգանք իր անթառամ հիշատակին:

ՎԱՀԵ ՉԵՐՉԻՅԱՆ

Փլովտիվ





ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Նամակն ուղղված է հետևյալ անձին)
Թ. 1ա.—Սրբայկոն Տէր Ստեփանոս Տէր Յարութիւնեան.

(Տրվում է նամակի տեքստը)

(տ)րուպա նմք լրամ սրբոյ օրհնութեանոյ
խոնարհ ծառայ Յարութիւն Յակոբեան:

Մաղրսան. շմս. 8 թիվն 1795:

Թ. 2բ.—(Նամակի հասցեն գրված է այսպես)

Առ Սրբայկոն Տէր Ստեփանոս Տէր Յարութիւնեան, Ի Կալկաթայ.

Reverend Mr. Stephon Aratoon, Calcutta:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2բ.— Այստեղ կա նամակն ստաքողի կնքամոմից կարմիր կնիքը, շուրջ 1,8×1,5 սմ. չափերով:

(Այս կա տպված հետևյալ թվականը) 8 Apr.

(Կա էլիպսաձև մի կնիք, որ պատկանում է նամակատան)

Post Paid—Fort St. George.

(Կա էլիպսաձև մի երկրորդ կնիք, որի վրա գրված է)

G. P. O. APR. BgPg.

№ 365

ՄԱՏԹԷՈՍ ՕԶԱՆՆԷՍԻ ԿՏԱԿԻ ՊԱՏՃԷՆԸ

(անգլերեն և հայերեն)

Թերթերը՝ 7:—Պրակները՝ 1:—Մեծությունը՝ 44×29×0,1 սմ.:—Նյութը՝ դեղնած և կեղտոտած

* Ծառուճակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1976 թվականի № Բ-ից:

հաստ թուղթ:—Կազմ՝ չումի:—Պահպանակներ՝ չումի:—Վիճակը՝ բավարար:—Գրությունը՝ միասյուն:—Դատարկ թղթերը՝ 1բ, 6բ—7բ:—Տողերը՝ անհավասարաչափ, 31—42:—Գծումները՝ ստանց ճնշումի:—Գիրը՝ անգլերեն շեղագիր և հայերեն մուտրգիր:—Զարդագրություն՝ չումի:—Գրիչները՝ անգլերենը՝ Գորդոն Պրոկտոր, իսկ հայերենը՝ Հակոբ Մինասյան:—Պատվիրատուն՝ Ստեփանոս բահանա Հարությունյան (Padre Stephanuse Arratoon):—Ժամանակը՝ 8 համիրալի (դեկտ.) 1794 թ.:—Վալը՝ Բենգալիայի Կալկաթա քաղաք (Հնդկաստան):—Մանրություն՝ երկնգլխան սույն ձևագիր կտակն ստացվել է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կանտոնի և Մակաոյի բնակիչ Մատթեոս Օհաննեսի կտակի պատճենն է սա, որ բնագրից թարգմանվել է անգլերենի ոմն Պետրոսի (O. J. Petrus) կողմից: Կտակի պատճենից բացի կան նաև այլ պաշտոնական գրություններ, որոնք ստորագրված և նմբված են: Անգլերեն փաստաթղթերը գրված են Գորդոն Պրոկտորի (Gordon Proctor) կողմից, իսկ կտակի հայերեն պատճենը գրված է Հակոբ Մինասյանի (Jacob the son of Minnas) կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 1ա.—To all to whom these presents shall come I Sir Robert Chambers Knight, Chief Justice of the Supreme Court of Judicature at Fort William in Bengal, do hereby certify that william Jackson Esquire, whose name is signed to the Certificate hereunto annexed...

(Վերջում գրված է)

Given under my hand at Fort william in Bengal this seventeenth day of January in the year of our Lord One thousand seven hundred and ninety seven.

Թ. 2ա.—I William Jackson Register of the Supreme Court of Judicature at Fort william in

Bengal and also Notary Public dwelling and practising at Fort william aforesaid by lawful authority duly admitted and sworn do hereby certify and attest that the annexed paper writings are true copies of the letters of administration of the Estate and Effects of Mathews Johannes deceased...

(Վերջում գրված է)

In Faith and Testimony whereof I have hereunto set my Hand and the Seal of office this Sixteenth day of January in the year of our Lord One thousand seven hundred and ninety seven.

Թ. 2թ.—The Supreme Court of Judicature at Fort William in Bengal to Padre Stephanuse Arratoon of Calcutta a friend of Mathews Johannes late of Canton and Macao deceased sendeth greeting whereas the said Mathews Johannes did whilst living make his last Will and Testament in writing a copy whereof is hereunto annexed having first nominated and appointed the Bishop of Macao, Pogos Adam...

(Վերջում գրված է)

Թ. 3ա.—... dated at Fort william in Bengal aforesaid the sixth day of January in the year of our Lord one thousand seven hundred and ninety seven.

Gordon Proctor (a true copy) Wm. Jackson Regt.

Թ. 3բ.—Copy of the Oath administered to the within named Padre Stephanuse Arratoon.

(Տրվում է երդման տեքստը, իսկ վերջում գրված է)

... you will likewise render a true and just account of this your administration and deliver the same into the same Court on or before the twenty fifth day of November which will be in the year of our Lord One thousand seven hundred and ninety seven.

(a true copy) So help you God.

Թ. 4ա.—(Տրվում է սցստեղ կտակի հաշիւներն քննարկի պատճենը)

Անուն Հօր. և Որդւոյ. և Հոգուն. սրբոյ. ամեն:

Կամին Ամենակալին.

Որպէս ասէ սրբազան ստաքեալն Պողոս. կտակ յետ մահուն հաստատունն է:

Եւ Ռհաննէսի որդի Մատթէոսը իմ կենդանութեամբս և խելովս բոլոր ինձ կտակատարի հաստատեցի

(Տրվում է կտակի տեքստը, որտեղ նշվում է, որ իր ամբողջ կարողությունը հետմահու բաժանում է չորս մասի հետեւյալ սրբատեղիներին տրվելու համար.—Երուսաղեմի հալոց վանքին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, Նոր Նախիջևանի եկեղեցուն (դպրոցի համար օգտագործելու նպատակով) և Զուլֆայի Ս. Փրկիչ վանքին (մայրապետների վանքին և եկեղեցիների քահանաներին բաժանելու համար):

Թ. 4բ.—(Կտակի վերջում գրված է)

.... Գահթօն Համիրայ 8 թիվն 1794-ումն ձեռամբս իմով գրեցի. սոքայ են իմ վիճիք և կտակատարք Մակալի սնիօր Վիսպն, սնիօր Մանվէլ Վիսէնթե,

պարոն Պողոս Աթամն Վարդինին, և Յովաննէսը, և պարոն Դազար Յովաննէսն:

(որպէս օրինակ) Մատթէոս Ռհաննէս.

Սվատս ասրին համեմատ գրեցի,

Յակոբ Մինասեան.

Սվատս ասրին համեմատ տեսինք,

Կարապետ մահ(տես)ի Խաչատրեանս:

(Ներքևում տրվում է կտակի լրիվ անգլերեն քարգանությունը)

Թ. 5թ.—Canton Hameerah 8th (December 4th), year 1794, I have written with my own hand, these are my attornies and executors (թ. 6ա) that is to say Signior Bishop of Macow, Sign'or Manuel Vincente, Mr. Pogose Adam Varthiney, my son Johannes and Mr. Lazar Johannes.

(as copy) Mathews Johannes

A true copy corefully collated by me with the copy will remaining in the Registry of the Supreme Court of Judicature at Fort william in Bengal.

(Ստորագրություն)

This copy I have written equal to the original Jacob the son of Minnas.

I found this copy equal to the original curapit Mawthasy Catchick.

A true translation of the annexed paper done by me.

O. J. Petrusse
4th Augt. 1795.

ՀԻՇՈՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— (Ստորագրություն) Robt. Chambers Այստեղ կա Կալկաթայի գերագույն դատարանի կարմիր կնքամոմից կնիքը, շուրջ 45 մմ. տրամագծով: Շրջանակում գրված է The seal of the Supreme Court և լատիներեն մի գրություն:

Թ. 2ա.—(Ստորագրություն) Wm. Jackson Regt. the Not. Pub. Այստեղ կա Ուիլիամ Ժեքսոնն անտարի կարմիր կնքամոմից կնիքը, շուրջ 42 մմ. տրամագծով: Շրջանակում գրված է W. Jackson, Notary Public:

Թ. 3ա.— (Ստորագրություն) Wm. Jackson Regt.

Թ. 3բ.— (Ստորագրություն) Wm. Jackson Regt.

Թ. 6ա.—(Ստորագրություն) Wm. Jackson Regt. the Not. Pub.

№ 366

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(Անգլերեն)

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 54×37,7×0,01 մմ.:— Նյութը՝ դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝ անբավարար:— Գրությունը՝ միասուն:— Դատարկ թղթեր՝ չումի:— Տողերը՝ 49:— Գծումներ՝ չումի:— Գիրը՝ անգլերեն շեղագիր:— Զարդագրություն՝ չումի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուները՝ երեք հոգի են, Ստեփաննոս քահանա

Հարությունյան, Սարգիս Օհանես և Մովսես Խաչիկի Առաքել:— **Ժամանակը՝** 27 մարտի 1795 թ.:— **Վայրը՝** Կալկաթա:— **Ծանոթություն՝** ձեռագիր պալմանագիրն ստացվել է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սա անգլերեն լեզվով գրված մի պալմանագիր է, երեք հոգու միջև, որոշ գումարներ հայկական բարենպաստակ հիմնարկների հատկացվելու համար: Այդ երեք անձինքն են Ստեփանոս քահանա Հարությունյանը (Padre Estephanuse Arratoon) և Կալկաթահայ երկու վաճառականներ՝ Սարգիս Օհանես (Sarkis Johannes) և Մովսես Խաչիկի Առաքելը (Moses Catchick Arrakel): Այսպես օրինակի համար պետք է վճարվի Նոր Նախիջևանի Հովսեփ արքեպիսկոպոսին (ամենայն հավանականությամբ Արդույանը) 2.000, ապա 25.000 հնդկական ռուպի, ինչպես նաև 11.450 ռուպի և 11 անգու և այլն:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ

Թ. 1ա.— This Indenture made the twenty seventh day of march in the year of our Lord One thousand seven hundred and ninety five, between Padre Estephanuse Arratoon of the town of Calcutta inhabitant of the first part-Sarkis Johannes of the said town of Calcutta, merchant, of the second part and Moses Catchick Arrakel also of the said town Calcutta, merchant, one of the sons and Acting Executor of the last Will and Testament of Catchick Arrakel, late, of the said town of Calcutta, merchant, deslased of the third part...

Թ. 2բ.— (Վերջում գրված է)

.... In witness whereof the said partees to these presents have hereunto respectively set their hands and seals the day and year first above written u.

Sealed and delivered in the presence of us the same having been first duly explained to the partees Padre Estephanuse Arratoon and Sarkis Johannes by me.

Dated the 27 day of March 1795

No. 16

Padre Estephanuse Arratoon

... Moses Catchick Arrakel

Sarkis Johannes

Assignment

ՀԻՇՍԱՍԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2բ.— Ինգլիզ և ար դաշնագրի օրինակն, ի մէջ իմ (այսինքն Ստեփանոս քահանա Հարությունյանի—Ն. Մ.) և Պրմ. Սարգսին և Պրմ Մովսես Խաչիկ Առաքելին:

№ 367

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏ

(Անգլերեն)

Թերթերը՝ 5:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 40,4×32,3×0,03 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** թերի, պակասում է բնագրի 4-րդ, 7-րդ և հաջորդ թերթերը:— **Գրությունը՝** միասլուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 2բ, 3բ, 4բ, 5բ:— **Տողերը՝** անհամաչափ, 29—35:— **Գծումները՝** մատիտով:— **Գիրը՝** անգլերեն շեղագիր:— **Ջարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Կալկաթայի դատարան:— **Ժամանակը՝** 21 մարտի 1797 թ.:— **Վայրը՝** Կալկաթա (Հնդկաստան):— **Ծանոթություն՝** դատական ակտն ստացվել է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կիրակի, 24 ապրիլի 1796 թ. Կալկաթայի հայկական եկեղեցում Հովսեփ Օհանես (Joseph Johannes) անունով մի մարդ հարձակվել է եկեղեցու քահանայի՝ Ս. Ստեփանոս Հարությունյանի (Stephanuse Arratoon) վրա, անպատվել և ծեծել է նրան: Քահանան դատ է բացել այս մարդու դեմ: Սույն ձեռագիրն այս դատի ակտն է: Դատական այս ակտում նկարագրվում է այդ ծեծկութի և կլոպի բոլոր մանրամասնությունները:

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ

Թ. 1ա.— In the Supreme Court of Judicature at Fort William in Bengal.

Plea side Stephanuse Arratoon
vs.

Joseph Johannes.

Brief on behalf of the plaintiff for trial on tuesday the 21 of March 1797.

Plaint filed 4th January 1797—States that the defendant is an inhabitant of Calcutta and therefore subject to the jurisdiction of the Court.

№ 368

ԴԱՏԱԿԱՆ ԹՂԹԵՐ

(Անգլերեն)

Թերթերը՝ 4:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 40,2×32×0,03 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** թերի, պակասում են բազմաթիվ թերթեր (սկզբում համարակալված են եղել, թերթերից այժմ կա՞մ N° 44, 48, 49 և մի թերթ էլ չհամարակալված):— **Գրությունը՝** միասլուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ, 2բ, 3բ, 4բ:— **Տողերը՝** անհամաչափ, 25—35:— **Գծումները՝** մատիտով:— **Գիրը՝** անգլերեն շեղագիր:— **Ջարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Կալկաթայի դատարան:— **Ժամա-**

նակը՝ 4 մարտի 1797 թ.։— Վայրը՝ Կալկաթա (Հնդկաստան)։— Ծանոթություն՝ դատական այս թղթերն ստացվել են Մայր Աթոռի դիվանատան արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին երկու թղթերը երեք երդմագրեր են, որոնցից առաջինը Կալկաթայի բնակիչ պորտուգալացի Լուիս Բարետտի (Luis Barretto), երկրորդը՝ մոլայն քաղաքի բնակիչ անգլիացի Թովմաս Մորմոնտի (Thomas Mordaunt), իսկ երրորդը՝ դարձադատ (Sarkis Johannes) անունով են։

Վերջին երկու թղթերն այլ բովանդակություն ունեն։ Դատական հարցաքննության ընդարձակ արձանագրության մի փոքրիկ մասն է միայն։ Այստեղ ծանագրության մի փոքրիկ մասն է միայն։ Այստեղ ծանագրության մի փոքրիկ մասն է միայն։ Այստեղ ծանագրության մի փոքրիկ մասն է միայն։

Վերոհիշյալ այս չորս թղթերում էլ խոսվում է Զինատանի Բանտոն և Մաքսոն քաղաքների հայազգի բնակիչ և վաճառական Մատթեոս Օհաննեսյանի (Mathews Johannes) մասին։ Բացի այդ ինչից էլ նաև երկու այլ հայերի՝ Լազար Օհաննեսյանի (Lazar Johannes) և Պողոս Ադամի (Pogose Adam) անունները։

ՀԻՇՍԱՍԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Affidavit of Louis Barretto.

Luis Barretto of Calcutta gentleman maketh oath and saith that he this deponent was resident at Macao in the Empire of China in the year one thousand seven hundred and eighty five (1785թ.— Ն. Մ.) for several months...

(Երդմագրի վերջում գրված է)

... that he was well acquainted with the beforementioned Mathews Johannes deceased in his life time who was a naturalized subject to the Crown of Portugal and both in person and property subject to the laws of that kingdom,

(A true copy) L. Barretto

Sworn this 4th day of March 1797 before me.
Wm. Dunkin

Wm. Jackson Regt.

№ 369

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ
(Անգլերեն)

Թերթերը՝ 3։— Պրակները՝ 1։— Մեծությունը՝ 39,7×32,2×0,03 մմ.։— Նյութը՝ դեղնած հաստ թուղթ։— Կազմ՝ չունի։— Պահպանակներ՝ չունի։— Վիճակը՝ թերի, բազմաթիվ թերթերից պահպանվել

են միայն երեքը, այսինքն հետևյալ էջերը՝ 74—79։ Մնացած թերթերը կորել են։ Եղածներն էլ պատրուված և պակասավոր են։— Գրությունը՝ միասուն։— ված և պակասավոր են։— Տողերը՝ անհամաչափ, Դատարկ թղթեր՝ չկան։— Տողերը՝ անհամաչափ, 27—30։— Գծումները՝ մատիտով։— Գիրը՝ անգլիական շեղագիր։— Զարդագրություն՝ չունի։— Գրիչը՝ անհայտ։— Պատվիրատուն՝ շատ հավանաբար Տեր Ստեփաննոս քահանա Հարությունյանը։— Ժամանակը՝ 18-րդ դար։— Վայրը՝ Կալկաթա (Հնդկաստան)։— Ծանոթություն՝ ձեռագիր այս փաստաթղթերն ստացվել են Մայր Աթոռի դիվանատան արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զեռագիրը Նոր Նախիջևանի հիմնադիր և առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի 10 հունիսի 1786 թ. օրհնության գրի անգլերեն թարգմանությունն է, շատ հավանաբար ուղղված Հնդկաստանի հայության (որովհետև վերնագիրն ու մասնակի առաջին մասը պակասում է), որով հայտնվում է, որ վրաստանի Հերակ թագավորի գիտությամբ Թիֆլիզից Հնդկաստան է ուղարկվում Տեր Ստեփաննոս քահանա Տեր-Հարությունյանը, տեղի հայերի մոտ հանգանակություն կատարելու նպատակով։ Հովսեփ արք.—ը հայտնում է, որ հանգանակված փոքրով նպատակ ունի Նոր Նախիջևանում հաստատելու դպրոց, տպարան, աղբյուրների տուն, հիվանդանոց և եկեղեցի։ Սրբազանը մեծ վստահություն է հայտնում Տեր Ստեփաննոսի մասին և հաճախ «իմ սիրեցյալ որդի» ձևով է հիշում նրան իր մասնակցով։

Թ. 2բ.— Արքեպիսկոպոսի կնիքից և ստորագրությունից հետո կա Նոր Նախիջևանի հայերի հոգևոր խորհրդի կնիքն և այդ խորհրդի յոթ անդամների ստորագրությունը (Հովհաննես Արքան, Մկրտիչ Պետրոս, Աստվածատուր Գրիգոր, Պողոս Դը Բուդատ, Վարդան Սարգիս, Խաչերես Բաղդասար և Վարդերես Խաչո)։

Վերջում կա Հովսեփ արք.—ի չորս տողանոց գրություն ուղղված Տեր Ստեփաննոս քահանային։

Թ. 3ա.— Այստեղ կա Տեր Ստեփաննոս քահանայի չորս կարճ գրություններ, որոնցով հայտնում է պաշտոնապես Հնդկաստանի չորս քաղաքներում իր կատարած հանգանակության արդյունքների մասին։

10 հունվարի 1788 թվակիր առաջին գրությամբ հայտնվում է, որ Նոր Նախիջևանի քաղաքատակ հաստատությունների (աղբյուրների տուն, դպրոցներ, տպարան և եկեղեցիներ) համար Մադրասի հայերը միջինը են 12,011 ռուպի, իսկ հնդիկ մապալ Մահամեդ Ալի Խանից էլ 2,000 ռուպի, որով ընդամենը՝ 14,011 ռուպի։

Երկրորդ գրությամբ Ստեփաննոս քահանան հայտնում է, որ մույն տարվա Ավելյաց ամսի 1-ին ժամանելով Բոմբեյ կատարել է հանգանակություն, որի արդյունքը հասել է 3,170 ռուպի։

Երրորդ գրությամբ հայտնվում է, որ Մասալի-

սպառամ (Massoolipattam) քաղաքում շուրջաֆա-
լերից հանգանակել է 2,160 ոռայի:

Իսկ վերջին՝ շորրորդ գրությամբ (5 Համիրայի
1789 թ.) հայտնվում է, որ Սուրատ քաղաքում
հանգանակվել է 31,907 ոռայի:

Անգլերեն լեզվով գրված այս չորս գրությունների
սկզբնական հազերեն բնագրերին կցված են եղել
նվիրատուների չորս ցուցակներ, որոնք չկան այս-
տեղ:

Վերջում կա Հովսեփ արք. Արղությանի մի մա-
մսկի անգլերեն թարգմանությունը, ուղղված հետև-
յալ անձնավորություններին՝
Տեր Ստեփանոս քահանա Տեր Հարությունյան,
Պարոն Հարություն Հակոբի Թալան,
Աղա Մկրտիչ Մելիքնազ,
Պարոն Վարդան Սարգսի Բալանթարյան,
... (մի ուրիշ անձնավորություն, որի անունը պա-
րզոված է),

Պարոն Սարգիս Հիրակուն:

Թ. 3բ.— Այս երկրորդ մամսկի տեքստում դարձ-
յալ խոսվում է կատարվող հանգանակության մա-
սին, Հնդկաստան ուղարկված նվիրակի՝ Տեր Ստե-
փանոս քահանայի և այն մասին, որ երեք տարի
սուաջ Աղա Օհանջան Հակոբի նվիրած գումարը դեռ
չի ստացվել Մովսես Խաչիկից: Խոսվում է նոր Նա-
խիջևանի օգտին կատարվող հանգանակության մա-
սին Բասրայում, Բաղդադում, Սուրատում, Հնդկաս-
տանի այլ քաղաքներում, Մանիլայում, Բատավիա-
յում, Չինաստանում և այլ վայրերում: Հովսեփ
արք.-ը զանազան քաղաքներում նշանակում է հա-
տույն ներկայացուցիչներ, այսպես Բասրայում՝ Վար-
դան Սարգիս և Սարգիս Կիրակոսը, Սուրատում՝
Աղա Մկրտիչ Մելիքնազը, Մադրասում՝ Հարություն
Հակոբը և այսպես այլ վայրերում: Իրավունք է
տրվում Տեր Ստեփանոս քահանային այսպիսի ներ-
կայացուցիչներ նշանակելու Հնդկաստանի զանա-
զան հալաշատ քաղաքներում: Նվիրահավաքման
այս մամսկում նշվում է, որ եթե Տեր Ստեփանոս
քահանան մեկնել է արդեն, կարելի է դրամական
նվերները հանձնել Աղա Շահամիր Սուլթանին
(Aga Shameer Sultan), որ ապրում էր Հնդկաս-
տանում, և կամ կարելի է ուղարկել Սուրբ Պետեր-
բուրգ (Ռուսաստան) Պարոն Փիլիպպոս Աստվա-
ծատուրի Մանուչարյանին (Phillipus Astwasatoor
of the family of Manoocharian), որպեսզի նրանք
այդ գումարները փոխանցեն Նոր Նախիջևան Հով-
սեփ արքեպիսկոպոսին:

ՀԻՇՈՍԱԿԱՐԱՆ

Թ. 2բ.— ... to remain for the delivery of the
nation and fervently pray for your life and prosper-
ity, for the increase of your children in the
strength of God's grace, your ardent lover and
well wisher.

Servant

The Principal Neevrauk of the Holy Chair of
Astchmeyazin, the Rector of the Armenians resi-
ding under the dominions of the Russians, the
founder of the town of New Naukchewan, the
most feeble and most obedient servant and visi-
tor of the poor and orphans inhabiting the said
town.

(Seal)

Joseph Arch Bishop, in testimony of what is
here written I have with my own hand writing
signed and with my usual large seal sealed it.

Dated in the compound of my Bishopric and in
my lodging in New Naukchewan, in the year of
the birth of Christ 1786 June 10th, in the thirte-
enth year of my appointment, by the consent of
the magistrates and managers.

The (seal) of the Spiritual Judge of the arme-
nians of New Naukchewan.

Johannes Abraham Chief Judge.

Muckerteach Petruse.

Astwasattoor Gregory.

Pogose de Boodatt.

Varthan Sarkis.

Khatcheress Bagdazar.

Vartherress Khatcho.

My beloved son Ter Stephanus, most modest
clergyman, I command you with love to put do-
wn here on the back all the presents for the sa-
tisfaction of the beholders and moreover I recom-
mand humility to you my beloved son. And I
recommend you to the protection of the most
high arm of God to keep you in peace, and to
make you return in prosperity, that we may see
each other, by the mercy of God. Amen.

Joseph Arch Bishop (seal)

Naukchewan,

June 10th 1786.

№ 370

ԴԱՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
(Անգլերեն)

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝
32,2×19,8×0,01 սմ.:— Նյութը՝ դեղնած հաստ
թուղթ:— Կազմ՝ չունի:— Պահպանակներ՝ չունի:—
Վիճակը՝ անբավարար, թուղթը տեղ-տեղ պատռո-
ված է:— Գրությունը՝ միապուն:— Դատարկ թղթեր՝
չունի:— Տողերը՝ 37:— Գծումներ՝ չկան:— Գիրը՝
անգլերեն շեղագիր:— Զարդագրություն՝ չունի:—
Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ Ստեփանոս քա-
հանա Տեր Հարությունյան:— Ժամանակը՝ 28 ապ-
րիլի 1786 թ.:— Վայրը՝ Գվելոն Սիտի (Gwelon
City), հավանաբար Կալկաթա (Հնդկաստան):—
Ծանոթություն՝ ձեռագիր փաստաթուղթն ստացվել
է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Նույն ինչպես № 367 ձեռագիր դատական ակտում):

24 ապրիլի 1798 թ. Կալկաթայի հայկական եկեղեցում Հովհաննես Հովսեփ (John Joseph) անունով մի մարդ հարձակվել է Ստեփանոս քահանային Հարությունյանի վրա, անպատվել, ծեծել և մորթել է քաշել, երկու անգամ եկեղեցուց դուրս հարույժ է քաշել, երկու անգամ եկեղեցուց դուրս հարույժ է քաշել, երկու անգամ եկեղեցուց դուրս հարույժ է քաշել, երկու անգամ եկեղեցուց դուրս հարույժ է քաշել:

ՀԻՇՍԱՍԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Case on behalf of Padre Stephanuse Arratoon.

Padre Stephanuse is an Armenian clergyman and first Priest or Vicar of the Church and College of New Naukchewan in Russia, and has been resident about four years in Calcutta on the business of the said Church and College...

Թ. 2բ.—(Վերջում գրված է)

...you will therefore be pleased to advise whether he can maintain a civil action or a criminal prosecution against John Joseph for the injury he committed, and if he can which of them he ought to pursue, and if a civil action whether it should be an action of trespass vi et armis or what else.

28th April (17)96
Gwelon City

ՀԻՇՍԱՍԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Padre Stephanuse is entitled to recover damages from John Joseph for an assault to Battery, and under the circumstances stated the damages ought not to be more nominal even this he should not be able to prove.

№ 871

ՄԱՍԵՀ ԲԱՍԱՋԱՆԻ ԿՏԱԿԻ ՊԱՏԾԵՆԸ
(Անգլերեն)

Թերթերը՝ 14:— Պրակներ՝ 1:— Մեծությունը՝ 26,8×20,3×0,1 սմ.:— Նյութը՝ հասարակ բարակ թուղթ:— Կազմ՝ չունի:— Պահպանակներ՝ չունի:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1ա և 14բ:— Տողերը՝ 25:— Գծումները՝ թուղթ ինքնին գծավոր է:— Գիրը՝ անգլերեն շեղագիր:— Ջարդագրություն՝ չունի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ անհայտ:— Ժամանակը՝ 19-րդ դար:— Վայրը՝ Կալկաթա:— Ժամանակը՝ կտակի անգլերեն պատճենը հանված է Մայր Աթոռի դիվանատան արխիվից:

ՀԻՇՍԱՍԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Translation from Armenian of the three Wills of Masseh of Hamadan, son of Papajan, commonly called Mardiros, in the city of Calcutta in Indies.

Թ. 2ա.— (Վերոհիշյալ կրկնությունն այստեղ է):

Թ. 6բ.— Done in A. D. 1794, the 30th of May, at Calcutta.

Masseh Papajan (or Mardiros)

Թ. 7ա.— Another will of the same.

Թ. 9ա.— Done in the year of our Lord 1795, the 1st of April, at Calcutta.

Masseh Papajan or Mardiros.

Թ. 9բ.—(Այստեղ պատկերավոր և մանրամասն կերպով նկարագրվում է Մասեհ Բաբաջանի կտակած հողամասի չափերը և դիրքը: Հողամասը գրավում է Կալկաթայի հայոց Ս. Նազարեթ եկեղեցու կողքին):

Թ. 10ա.—The two wills translated above were published in the Armenian paper Azkasser (a weekly paper), of Calcutta, in the year of 1846.

Թ. 10բ.—Another will of the Same.

Թ. 13բ.—Masseh Papajan or Mardiros.

Թ. 14ա.—By the consent of Mr. Masseh Mardiros, we do hereby testify that he declared before us that „This is my last will“, and in our presence he signed, sealed, and gave this to Der Stepannos Der Harootoon.

Der Hagop Der Bedrossian

Markar Hovhannessian Papoomiantz

Nerses Ohynnessian.

The translation of the receipt

I, the undersigned Masseh Mardiros, son of Papajan of Hamadan, declare by the presents that I have given my newly-built balakana house, in the south side of our Armenian Church of St. Nazareth, in the city of Calcutta, to Der Stepannos Der Harootoon, who came here from New Nakhichevan. And the price of the said house, nine dana of rupees, I fully received from the said Der Stepannos. And I wrote and gave to him sealed this Receipt.

In the year of our Lord 1793, the 23th of Nov., in the city of Calcutta.


Masseh Papajan or Mardiros.

ՀԻՇՍԱՍԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Ծան. Այն թիւերն՝ որոնք տող ընդ մէջ կամ էջերուն վրայ մատիտով նշանակուած են, կը ցուցնեն թիւերն էջերուն՝ ներկայ թարգմանութեան օրինակին, որ դրկուած է Պ. Հարիւնի ի Կալկաթա:


Թ. 14բ.—(Երկու տող պարսկերեն կա):

(Ծարունակի)



ՀԱՆԳԻՍ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐՈՍ ԱՎԱԳ ԲԱՀԱՆԱ ՄԱԺԱՌՅԱՆԻ
(1891—1976)

1976 թվականի հունվարի 30-ին Երևանի իր բնակարանում, 85 տարեկան հասակում, վախճանվեց ս. Հովհաննես եկեղեցու տ. Թորոս ավագ քհն. Մաճատյանը:



Հանգուցյալը ծնվել է 1891 թվականին Թուրքիայի Դյորտ-Յոլ քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Հաճախել է տեղի Մամիկոնյան վարժարանը և միևնույն ժամանակ մասնակցել ս. Աստվածածին եկեղեցու արարողություններին:

1914—1918 թվականներին ընտանիքով աքսորվել է Հալեպ քաղաքի շրջան: Տարագրությունից վերադառնալով իր ծննդավայր, գործոն մասնակցություն է բերել Դյորտ-Յոլի ինքնապաշտպանությանը:

1922 թվականին ընտանիքով տեղափոխվել է Լիբանան և հաստատվել Բեյրութում:

1927 թվականին Մեծի Տանն Կիլիկիո Տ. Սահակ Բ Խապայան կաթողիկոսից ձեռնադրվել է քահանա և քահանայագործել Բեյրութի ս. Խաչ և ապա Նոր Հաճն թաղի ս. Գևորգ եկեղեցիներում, մինչև 1947 թվականը, որից հետո ընտանիքով տեղափոխվել է մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան:

1950 թվականից սկսած քահանայագործել է Երևանի ս. Հովհաննես եկեղեցում, մինչև իր կյանքի վերջը:

Իր եկեղեցական աշխատանքների համար 1956 թվականին տեղ հայրը Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի կողմից պարգևատրվել է քահանայական լանջախաչով, իսկ 1957-ին Նորին Սրբության կողմից արժանացել ավագ քահանայության պատվի:

Սույն թվականի փետրվարի 1-ին հանգուցյալ տ. Թորոս ավագ քահանայի վերջին օծումն ու թաղման կարգն է կատարվում ս. Հովհաննես եկեղեցում՝ ճախագահությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխա-


նորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի, մասնակցությամբ քահանայից դասի, եկեղեցական խորհրդի անդամների և հավատացյալների բազմության:

Հանգուցյալի կյանքի և եկեղեցական գործունեության մասին դամբանական է խոսում սուրբնորդական փոխանորդ սրբազան հայրը՝ վեր հանելով տ. Թորոս ավագ քահա-


նայի ծառայության արժանիքները, որպես հավատավոր ու հայրենակներ եկեղեցականի, որն իր կյանքը նվիրել է ի պայծառություն եկեղեցու և իր ժողովրդի հոգևոր սպասի:

Հանգիստ տ. Թորոս ավագ քահանայի ոսկորներին:





ՀԱՆԳԻՍ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՈՍԿԱՆ ՔԱՀԱՆԱ ԾԻՐՎԱՆՅԱՆԻ
(1908—1976)



Իրանի Սպահանի շրջանի Նամակերտ գյուղում: Ավարտել է տեղի ութամյա դպրոցը և վաղ հասակից հաճախել իրենց գյուղի եկեղեցին՝ մասնակցելով ժամասացություններին:

1965 թվականին, մեկ տարով, սովորել է Նոր Զուղայի հոգևոր դպրոցում և ապա 1966-ին, ձեռնադրվելով քահանա, պաշտոնավարել իր ծննդավայրում՝ Նամակերտ գյուղի եկեղեցում: Ապա, երկու տարի հետո, վարել է շրջանի գործակալության պաշտոնը:

1971 թվականին ընտանիքով ներգաղթել է Սովետական Հայաստան և բնակություն հաստատել Հոկտեմբերյան քաղաքում:


Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի տնօրինությամբ տեղ հայրը նշանակվել է ս. Դավիթ եկեղեցում որպես ծիսակատար քահանա: Հայրենի հողի վրա տեղ հայրը հինգ տարիների ընթացքում վաչելել է շրջանի հավատացյալների ջերմ հարգանքն ու սերը՝ որպես հավատավոր ու ազնիվ հոգևորականի:

Մարտի 21-ին Էջմիածին քաղաքի ս. Աստվածածին եկեղեցում, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի նախագահությամբ, կատարվում է հանգուցյալի վերջին օծման արարողություններն ու թաղման կարգը:

Հանգիստ տ. Ոսկան քահանայի ոսկորներին:

1976 թվականի մարտի 20-ին ի Տեր հանգչավ Արարատյան թեմի Հոկտեմբերյանի շրջանի ս. Դավիթ եկեղեցու տ. Ոսկան քհն. Ծիրվանյանը:

Հանգուցյալը ծնվել է 1908 թվականին



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ.—Երուսաղեմի հաղոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքը Մայր Աթոռում	8
ՀԱԿՈՒՅԱՆ ԳԸԼԸՆԾՑԱՆ—Մայր Աթոռի և ներքին թեմերի եկեղեցական-ների հավաքը սրբոց Ղևոնդյանց և Վարդանանց տոների առթիվ	33
Մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվյալություն	36
ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	39
ԳՐԻԳՈՐ ԱՐԾԱԿԻ ՀԱԿՈՒՅԱՆ—Սահակ Զորափորեցի	41
Ծ. Մ. ՄԿՐՏՅԱՆ—Մարտակերտի շրջանի պատմական հուշարձանները	48
ՎԱՀԵ ՉԵՐՉԻՑԱՆ—Գևորգ Ծ. վրդ. Ռուսուքյան	53
Յուդակ Մայր Աթոռ և Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	55
Հանգիստ արժանապատիվ տ. Թորոս ավագ քահանա Մաճադյանի	61
Հանգիստ արժանապատիվ տ. Ոսկան քահանա Ծիրվանյանի	63



ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ, ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 15/III 1976 թ.: Ստորագրված է տպագրության 28/IV 1976 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 211

Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, 1976 թ.